

95

=95=

Ո. ՌՈԶԵՆՖԵԼԴ

Պ Ր Ո Ֆ

ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պ Ր Ա Վ VI.



ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(1905—25 թ.)

№ 36

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇԵՍՏ
ՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1. Ա. Լազուլսկիի. — «Հոսանքների պայքարը համաշխարհային արհարծման մեջ», (սպառված)
2. » » «Արհարծմությունների խնդիրներն ու հործելակերպը», (սպառված)
3. Ե յ Դ ռ ւ ա. — «Ակնարկներ Արեւելի բանվորական շարժման մասին», (սպառված)
4. Արկ-Ան. — «Բանվ. շարժման պատմ. Անգլիա-լիայում, Դրանսիայում և Գերմանիայում», (մնացել են սակավաթիվ որինակներ)
5. «Գործարկումների և տեղիումների ուղեցույց» 1
6. «Աշխատանքի որենսդրիք» 15
7. Անտոշկին. — «Պրոֆեսիոնալ շարժումն Ռուսաստանում», (մնացել են սակավաթիվ որինակներ)
8. Սեյյուշկին. — «Գործարկումների և տեղիումների անելիքները ներկա պայմաններում» . . . 25
9. Գուրեվիչ. — «Լենինը և արհարծմությունները» . . . 50
10. Ֆաբրիկանտ. — «Սոցիալական ապահովագրությունը», (սպառված)
11. Տ Ե տ Ե ր ի ն. — «Ի՞նչ և արհարծմյան կանոնադրությունը» 25
12. Սպիրանսկի. — «Ի՞նչ պետք և իմանալ ամեն մի մայր» . 20
13. Բիխովսկի. — «Բանվորներին և ծառայողներին ապահովագրությունը հաշմանդամության դեպքում», (սպառված)
14. «Կանոնադրություն բանվորական գրադարանի» 15
15. Չ Ե կ ի ն. — «Ակնարկներ բանվորական շարժման պատմությունից» 35
16. Բժ. Մելիքյան. — «Սիֆիլիս» 20
17. Բժ. Կարապետյան. — «Մալարիա» 5
18. «Ցերեք ընտերնացիոնալ», (սպառված)
19. Գ ի ր ի ն ի ս. — «Ի՞նչ և արհարծմական արտադրական միությունը» 30

ԱԶԸ 1573
887

331.88(47)



Պատկաւարներ բոլոր յերկրներէ, միացեալ

Ո. ՌՈԶԵՆՖԵԼԴ

ԱՐԶԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՃԱՐԺՈՒՄՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ (1905 թ.—1925 թ.)

Թարգմ. Լ. ԼԵՐՈՆԹԵՅԻՆ

ՊՐԱԿ VI



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 36

ՅԵՐԵՎԱՆ

1926



887 - ԱԳՀ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 420 ր.

Պատվեր 2297

Տիրաժ 1500

ԱՐՎԵՍՏԱԳՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ (1905—1924 թ.թ.)

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԱՆ
ՐԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ
(1905—1907 թ. թ.)

Մեզ համար առանձնապես խոշոր նշանակություն ունի Ռուսաստանի արհեստակցական շարժման պատմության ուսումնասիրությունը, վորն իր կարճատև գոյությունը ընթացքում խոշոր փոփոխությունների չէ յենթարկվել և հասել է շտեմնված թափի ու հեղափոխականացման: Դրա համար անհրաժեշտ է մանրամասն ծանոթանալ, թե ինչպես ելին փոխվում Ռուսաստանի արհմիությունների կառուցվածքն ու խնդիրները—սկսած 1905 թվից մինչև մեր օրերը:

Այս նպատակով անցնենք մետաղագործների, ամենախոշոր արդյունաբերական կենտրոններից մեկի չրջկոմի կենտրոնական ակումբը, վորտեղ կազմակերպված է «հուշի յերեկո»:

Մենք փոքր ինչ ուշացել ենք: Արդեն մի քանի րոպե չէ, ինչ ծայրե ծայր լցված դահլիճի բեմից լսվում է չրջկոմի քարտուղարի պարզ ու հնչյուն ճառը:

— Յեզ այսպես ուրեմն, յերկար ձգձգումներից ու քաղաքացիների մոտ բավական տանջանքներ կրելուց հետո, 1906 թվի մայիս ամսին, այդպես թե այնպես, մեր նոր միություն գոյությունը փոստ դարձավ (1905 թվին գոյություն ունեցողի փոխարեն): Այդ ժամանակ նա կոչվում էր «Մետաղագործ բանվորների ընկերություն» (վորպեսզի չբրգուենք վոստրիկանությունը այդ ժամանակ այնքան վառնգավոր «միություն» բառով) և կառուցված էր բառարտագրության, այսինքն, նրա մեջ ելին մտնում բոլոր մետաղագործ բանվորները, մետաղագործները (паяльщики) և այլն: Սակայն, ընկերներ, միք կարծի, թե այդ ժամանակ բոլոր արհմիություններն էլ այդպես ելին կառուցված: Ընդէս է, 1905—1906 թվերին Ռուսաստանում արդյունաբերությունն արդեն

կենտրոնացել եր մի շարք խոշոր ու գորեղ ձեռնարկություններին մեջ, ձեռնարկատերերը կարողացել էյին արդեն համախմբել արեստների ու սինդիկատների մեջ և խայթում էյին բանվոր դասակարգին, ցարական ինքնակալ կառավարությունը վայրագություններ եր անում ամեն տեղ։ Այս ամենն ստիպում եր մեր միություններին փորձեր անել ըստ արտադրության միանալու, վորքան կարելի յե, ավելի լարել իրենց ուժերը կապիտալին հակահարված տալու համար։

— Բացի մեզանից, ըստ արտադրության էյին համախմբված և արագորինները, փայտագործները և այլն։ Սակայն մեր բանվորական շարժումը դեռևս բավարար փորձ չուներ, դեռ շատ յերիտառարդ եր։ Դրա համար ել համբարականությունը դեռ շատ ամուր եր։ Այսպես որինակ, փոխանակ սննդի և համի միասնական արտադրական միության, գոյություն ունէյին բազմաթիվ առանձին համբարային միություններ, ինչպես որինակ—«հացթուխների և շաքարահաց պատրաստողների», «մսագործների», «կոնֆետի և քաղցրավենիքի» արդյունադործության, «պետական գինու պահեստների ծառայող-բանվորների», «ալյուրաց արտադրության», «ողեղործարանների բանվորների», «հացահատիկի և սերմորայքի արդյունադործության» և այլն համբարային միություններ։

Մետաղագործների արտադրական միությանը գուղընթաց Ռուսաստանի զանազան քաղաքներում կային նաև այնպիսի ցրված միություններ, ինչպիսիք էյին—մեքենագործների, բրոնզի, վոսկու և արծաթի արտադրության, յերկաթագործ բանվորների ու գարբինների միությունները և այլն^{*)}։

Նույնիսկ մեր-մետաղագործներին միությունն ել չեղմեց և հարմարվեց գերմանական արհմիությունների կառուցվածքին։ Իսկ իր կազմի մեջ ընդունեց վոչ միայն մետաղա-արդյունաբերության մեջ աշխատող բանվորներին, այլ և բոլոր մյուս մետաղագործներին, թեկուզ և նրանք աշխատելիս լինէյին վոչ թե մետա-

^{*)} Ըստ Վ. Սվյատլովսկու տվյալների 1907 թվի սկզբներին Ռուսաստանում գործող 663 միությունները բաժանվում էյին 97 համբարային խմբակցությունների։ Բացի այդ, կային և այնպիսի արհեստակցական ընկերություններ, ինչպիսիք էյին «Արհեստավորական համբարություն»-ը, «Աշխատանքի ընկերություն»-ը, «Բանվորների զարգացման ընկերություն»-ը, «Մասնավոր աշխատանքին ոժանդակող ընկերություններ»-ը և այլն։

դամ չակման դործարաններում, այլ, ասենք, հենց մանվածքային դործարանում: Մենք մեր «ընկերութեան» մեջ քաշել կարողացանք ընդամենը 2000 անդամ: Դա, ի հարկե, շատ քիչ էր. կազմում էր մեր քաղաքի մետաղագործ բանվորների 15 տոկոսը միայն: Այսպիսով Ռուսաստանում դրությունն ավելի վատ էր. 100 հոգի մետաղագործ բանվորներից ընդամենը 8,6-ն էին միութեան անդամ: Տպագրիչները կազմակերպչական գործում ավելի առաջ էին: Նրանց ամեն մի 100 բանվորից 43-ը մտնում էին միութեան մեջ: Սակայն ուրիշ արտադրական ճյուղերը մեզնից էլ հետ էին: Այսպես որինակ—կաշեգործ բանվորներից կազմակերպված էին ընդամենը 7,1 տոկոսը, մանվածային գործի բանվորներից—3,9 տոկոսը: Ամենից շատ ցրված էր լեռնագործների հետամնաց մասան: Նրանցից միութեան մեջ մտնում էր 1,1 տոկոսը միայն^{*)}:

— Ամերային մեծ ալոում մենք ընդհանուր ժողով գումարեցինք, ընտրեցինք վարչություն և հետո սկսեցինք մշտական չենք վորոնել միութեան համար: Շրջեցինք ամբողջ քաղաքը, աղատ բնակարաններ շատ գտանք, բայց տնատերերը չէին ուզում տրամադրել մեզ. վրմանք վախենում էին վոստիկանութեան անընդհատ հաճախումներից, իսկ շատերն էլ պարզապես ուզում էին խանդարել բանվորների կազմակերպման գործը: Վերջապես, մի կերպ կարողացանք տեղավորվել մի փոքրիկ—2 անյականոց բնակարանում—ն-ի նրբանցքում: Փող չունեցինք, հա-

^{*)} Հետևյալ աղյուսակը, վոր մենք վերակազմել ենք 1907 թվի «Արհեստակցական Լրատու» թերթի № 9-ից, ցույց է տալիս Ռուսաստանի արհմիությունների 1906 թվի անդամների թիվը, ըստ Արհմիությունների Համառուսական 1-ին համագումարի կազմակերպչական հանձնաժողովի տվյալների (այդ համագումարը չկայացավ, վորովհետե սկսվեց ռեակցիան): Բանվորների ընդհանուր թիվը ցույց է արված ըստ 1897 թվի համառուսական ընդհանուր մարդահամարի տվյալների:

1906 թվին Ռուսաստանում կազմակերպվածութեան միջին տոկոսն է՝ 3,5, ամենացածր՝ 1,1 տոկոս, ամենաբարձրը՝ 43,0 տոկոս:

Պետք է նկատել, վոր նույն ժամանակում (1906 թ.) Գերմանիայի արհմիություններում կազմակերպված էին բանվորների 24 տոկոսը, Անգլիայում—26 տոկոսը, Շվեդիայում—24 տոկոսը, Ավստրիայում—23 տոկոսը և Վենգրիայում—16 տոկոսը:

ժարյա վոչ մի կոպեկ: Թեև, ճիշտ է, մենք սահմանել էյինք ան-
դամակցական վճարներ, մուտքի՝ 50 կոպեկ և ամսավճար
25 կոպեկ, իսկ աշակերտներից մուտքի՝ 25 կո-
պեկ և ամսավճար 10 կոպեկ, սակայն այդ անդամավճարների
հավաքելը շատ դժվար էր. մենք դեռ չէյինք կարողացել հավաք-
ման գործը կարգավորել ինչպես պետք է: Մյուս միու-
թյուններումն էլ դրությունն ավելի լավ չէր, մանավանդ, վոր-
ընդհանրապես միություններում անդամավճարների գանձումը

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՅԵՎ ԱՅԼ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ	Բոլոր բան- վորների թիվը	Միության անդամների թիվը	Միության անդամ- ների 6/10-ը հարա- բերությամբ բան- վորների ընդհանուր կազմի հետ:
Հեռնագործություն	229,000	2,475	1,1
Փայտի մշակություն	410,000	9,927	2,4
Կաշվի մշակություն	154,000	12,066	7,7
Մետաղի մշակություն	625,000	54,173	8,6
Հազուստեղենի պատրաստում . .	1,158,000	14,402	1,2
Տպագրական գործ	60,000	23,654	43,0
Սննդի արտադրություն	344,000	24,848	7,2
Դիրնարարական աշխատանք . .	717,000	12,396	1,7
Մանվածքային գործ	960,000	37,214	3,9
Առեվաուր	1,495,000	32,475	2,2
Զոնս զան	—	17,005	—
Ընդամենը	7,043,009	245,355	3,5

Փոխադրական գործի բանվոր-

ներ և ծառայողներ

715,000

—

—

Գյուղատնտեսական բանվորներ

2,22,000

—

—

Գումար 10,480,000

—

—

խառնաշփոթ դրութեան մեջ եր. վոմանց մօտ գանձվում եր տոմսային հատկացում (ինչպես, վոր այժմ մեզ մօտ է—աշխատավարձի ամեն մի ուրբուց ստացվում է 2 կոպեկ), վոմանք եւ տհամանում եյին վորոչ գումար, վոր պիտի մուծեր ամեն մի բանվոր, համաձայն իր կարգի (որինակ, 10 ո. ստացողը 1-ին կարգ եր, վճարում եր 10 կ. ամսական, 20 ուրբի ստացողը 2-րդ կարգ եր,—վճարում եր 15 կ., 30 ուրբ. ստացողը 3-րդ կարգ եր, վճարում եր 30 կոպեկ և այլն): Ուրիշներն եւ, ինչպես և մենք, միութեան բոլոր անդամներից վերցնում եյինք միատեսակ անդամավճար, անկախ նրանց աշխատավարձից: Մենք վորձ արինք միութեան ոգային մի ներկայացում կազմակերպել, բայց բան դուրս չեկաւ: Պարզ է, վոր վարչութեան անդամներին վճարելու մասին խոսք անգամ չինել չեր կարող մեզ մօտ: Քարտուղարը միայն ինչ վոր դրոշներ եր ստանում, իսկ վարչութեան մյուս անդամները վաչ միայն չեյին ստանում, այլ և շատ անգամ միութեան համար մանր-մունր ծախսեր իրենց զրպանից եյին կատարում (մեխ, մոմ, թել և այլ բաներ գնելու): Մեզ մօտ միութեան պարագմունքները տեղի եյին ունենում յերեկոները, —ժամը 8—12-ը:

— Ինչպե՞ս եյինք կապված միութենական մասնայի հետ: Ամեն մի դործարանում մենք ունեյինք պատգամավորներ: Գրանք ընարվում եյին 50 հոգուց մեկի հաշվով: Տեղ-տեղ մեզ հաջողվեց այդ պատգամավորներից կազմել դործարանային խորհուրդներ, վորոնք շատ նման եյին մեր այժմյան դործարկումներին: Նրանք կյանքում կիրառում եյին միութեան բոլոր վորոշումները, հանդիսանում եյին միութեան ներկայացուցիչները դործարանի վարչութեան առաջ, միութեան հանձնարարութեամբ ազատ տեղերն եյին ուղարկում դործադուրկ բանվորներին, աշխատավարձի խնդիրներում պահանջներ եյին անում, դործադուրդներ եյին կազմակերպում և այլն: Բոլոր պատգամավորները միասին կազմում եյին պատգամավորական ժողով, վոր մեզ մօտ (ինչպես և մյուս միութեաններում) շափաղանց խոշոր դեր եր խաղում: Շատ զգվար եր հաճախակի ընդհանուր ժողովներ գումարելը՝ նախ, վոր զգվար եր համապատասխան չենք գտնելը և յերկրորդ, վոր վոստիկանութեանը հազար ու մի արգելք եր դնում մեր առաջ:

Ճիշտ է, 1906 թվի մարտ ամսին հրատարակված արհեստակ-

ցական միություններին վերաբերող որոնքով բաղական եր միայն նշանակված ժամանակից 3 որ առաջ հայտնել քաղաքապետին և ժողովն արդեն համարվում եր որինական (ի հարկե ամեն մի ժողովի անպատճառ ներկա յեր լինում վոստիկանական ներկայացուցիչը), սակայն իրականում ժողով գումարելու իրավունք ստանալը շատ ու շատ դժվար գործ եր: Մեկ անհետ—արգելում են, վորովհետեւ դիմումի մեջ չի նշանակված զեկուցողների ազգանունը, մեկ պահանջում են, վոր մանրամասն գրվի, թե ինչի մասին պիտի զեկուցվի «ընթացիկ հարցերում» և այլն, և այլն: Մի անգամ, որինակ, արգելեցին ժողով գումարել, վորովհետեւ դիմումի մեջ մատնանշված չեր, թե ժողովը վոր ժամին և վերջանալու: Այդ պատճառով ել, պատգամավորական ժողովը, վոր գումարվում եր յերկու շաբաթը մեկ անգամ, ինքն եր վճռում բոլոր կարեւոր խնդիրները—կոնֆերանս հրավիրելը, գործադուների խնդիրը, նոր կանոնադրության հաստատումը և այլն:

— Յերկար ժամանակ մենք ստիպված եյինք պայքար մղել միության մեջ համաքական ձգտումների դեմ: Կադապարագործները, մետաղագործները, մեխանիկները ու ելեքտրոտեխնիկները պահանջում եյին, վոր միության մեջ իրենց համար հատուկ սեկցիաներ կազմակերպվի: Այդ սեկցիաներն առանձին վոչ մի իրավունք չունեյին և շատ թույլ եյին աշխատում: Մեր միության վարչութիւնը և գանձարկղը միշտ միասին եր: Այնինչ, որինակ, վոխադրողների մոտ սեկցիաները մեծ դեր եյին խաղում:

— Այժմ անցնենք մեր միության ներքին աշխատանքներին: 1905—1906 թվերը կապիտալիզմի շրջան եր, հետեապես մեր միությունների առաջ յերկու հիմնական խնդիրներ եյին դրված. առաջին—հենց ձեռնարկություններում պայքարել առանձին կապիտալիստների դեմ, իսկ յերկրորդ—պայքարել միապետության և ամբողջ կապիտալիստական կարգերի դեմ: Առաջին տիպի պայքարը մեզ մոտ ձուլվում եր տնտեսական պայքարի մեջ: Ընկերներ, ինչպես դուք հիշում եք, Ռուսաստանի բանվորներն այդ շրջանում սկսեցին լայն գործադուլային մի շարժում (1905 թվին յեղել և 13,995 գործադուլ, վորոնց մասնակցել են 2,709,000 հոգի, իսկ 1906 թվին 6,114 գործադուլ 1,110,000 մասնակիցներով): Բանվորները մի շարք պահանջներ եյին առաջադրում, վորոնք բոլորն ել նրանց տնտեսական դրության բարելավմանն

էյին վերաբերում. զբանցից կարևորներն էյին ութ ժամյա բան-
վորական որվա և աշխատավարձի բարձրացման պահանջները :
Մեր ժիուէթյունը հաջողութեամբ գործադուլ կազմակերպեց 3
խոշորագույն գործարաններում (վոր այժմյան №1, №2 և «Փո-
րիզի կոմմունայի» գործարաններն են) : Մեզ հաջողվեց 9 ժամյա
բանվորական որ մտցնել տալ և աշխատավարձը բարձրացնել
20 %-ով : Պետք է ասել, վոր բանվորական որվա կրճատման
գործում Թուսաստանի պրուլետարիատը մեծ հաղթանակներ տա-
րավ : 12 ժամյա բանվորական որվա փոխարեն մտցվեց 10 և 9
ժամյա որ, սակայն աշխատավարձի մակարդակը բարձրացնել՝
արհեստակցական ժիուէթյուններին համարյա թե հաջողվեց :
Ճիշտ է, աշխատավարձը բարձրացավ, բայց նրանից հետ չմնաց
և թանկութեւնը :

— Մենք ստիպված էյինք, նաև, պայքարել, վոր վերացվեն
արտաժամյա աշխատանքները և վոր իրավունք տրվեր բանվոր-
ներին գործարաններում պատգամավորներ ընտրելու : Ընդհա-
նուր առմամբ մեզ հաջողվեց ստիպել մեր տերերին, վոր նրանք
ժիուէթյան հետ հաշվի նստեն : Բայց, այ, որինակ մեզ մետաղա-
գործներին հաջողվեց մի այնպիսի տեսական իրավունք ձեռք
բերել, վոր բանվորները իրենց աշխատանքի և աշխատավարձի
մասին գործարանատերերի հետ պայմանավորվեն վոչ թե զատ-
դատ, այլ կազմակերպված, ամբողջ մասսայով, արհմիություն-
ների միջոցով հավաքական պայմանագիր կնքելու մասնապար-
հով : Այս գործում արդեն, մենք բավականաչափ ուժեղ հանդի-
սացանք : 1905—1906 թվերին հավաքական պայմանագրերը լայն
տարածում էյին ստացել միայն տալգրական արտադրութեան,
նավթարդյունաբերութեան և Հյուսիս—արեւմտյան չրջանի ու
Լեհաստանի արհեստագործութեւնների մեջ*) :

— Մենք զբաղվում էյինք նաև փոխողնութեան գործով—
գործադուրկներին, գործադուլավորներին, հիվանդներին և այլոց
օգնելով : Յերբ մեր միջոցները ներում էյին, գործադուրկները
կամ գործադուլավորները ստանում էյին մեղնից ամսական 8—10
սուբլի : Այստեղ հարկավոր է նկատել այն խոշոր տարբերու-

*) Բանվորների ու ձեռնարկութեւնների ընդհարումները սո-
վորաբար վերջանում էյին գործադուլներով, սակայն ժիու-
էթյուններն էլ սկսում են ստեղծել և հաշտարար առայաններ (որ-
պագրիչներ ժող) և միջնորդ զատարաններ :

թյունը, վոր գոյություն ուներ մեր և Արևմտյան Յեվրոպայի գեղին արհմիությունների փոխողնության միջև: 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբներում Անգլիական ու Գերմանական արհմիությունները համեմատաբար խաղաղ և հանգիստ պայմաններում եյին աշխատում: Նրանք կարող եյին պահեստի խոշոր գումարներ հավաքել, վորը վորեւ կառավարություն կամ վոստիկանական վարչություն բռնադրավել չեր կարող: Բայց Ռուսաստանում դրությունն ուրիշ եր. մեր միությունները ղեռնա կազմակերպչական շրջանումն եյին, մեր միութենական գումարները և այլ միջոցներն ամեն բոսի կարող եյին բռնադրավել: Բացի այդ, արհեստակցական շարժումը մեղ մոտ վաղուց չեր, վոր գոյություն ուներ, Փոնգերի կուտակման համար ժամանակ չեր յեղել: Ասենք վճարող անդամներն ել ղեռնա շատ քիչ եյին և ցարական կառավարությունը, վոր հրաշալիորեն խեղդում եր արհմիությունները, քիչ չեր հող տանում, վորպեսզի այդ վճարողների թիվը չավելանա, մինչև վոր 1907—1910 թվերին բոլորովին խեղդեց արհմիությունները: Այդ իսկ պատճառով ռուսական մարտական արհմիություններն իրենց սուղ միջոցները (համեմատած հեղափոխական արհշարժման հիմնական խնդիրների հետ) ծախսում եյին դիւսպորապես գործադուլաւորներին ոժանդակելու վրա, ճանապարհածախս եյին տալիս ուրիշ վայրեր և քաղաքներ դնալու, դրամական նպաստ եյին տալիս միության բանտարկված անդամների ընտանիքներին, ծախսում եյին նույն այդ բանտարկվածներին իրավական ոգնություն ցույց տալու նրպատակով, յերբ նրանց մասին հաճախակի «դատեր ու քննություններ» եր լինում կապիտալիստների ղեմ պայքարելու համար: Յերկրորդ հերթին միայն վորոշ նպաստ եր տրվում հիվանդության դեպքերում: Այդ ժամանակ մեր միության մեջ բաւական մեծ թվով գործազուրկներ կային: Այդ գործազուրկների տեղական խորհրդի միջոցով նրանց համար ձրի ճաշեր եյինք ճարում քաղաքային ճաշարաններում, մեր պատգամաւորների միջոցով գործարաններում աշխատանք եյին գտնում գործազուրկների համար և այլն:

— Սակայն, յեթե մենք, մետաղագործներս 1905—1906 թվերին մեր աշխատանքը սահմանափակեյինք միայն բանվորների նյութական դրությունը բարելավելու հարցերով, յեթե միայն տնտեսական պայքար մղեյինք, այդ դեպքում մենք ամէլի բան

ուրած չեյինք լինի, քան Արեւմուտքի համաձայնողականները— Անգլիայի, Ամերիկայի ու Գերմանիայի միությունները: Սակայն այդպես չեղավ: Մեր՝ արհմիությունները, վոր ծննունդ էյին տուել ու աճել մի յերկրում, ուր մեծ չափով զարգանում էր կապիտալիզմը, դաժան պայքարի մեջ լինելով ցարական կառավարութեան հետ՝ չառ չուտ հասկացան, վոր «անտառի ծառերի այն կողմը լավ բան չի գտնվում», վոր բանվոր դասակարգի բոլոր տնտեսական նվաճումները չուտով ձեռքից դուրս կգան, ալիւլին—ընդհանրապես վոչ մի ետական հաղթանակ տանել նա չի կարող, յեթե նա՝ բանվոր դասակարգը փոխանակ ստանձին կապիտալիստների դեմ պայքարելու, փոխանակ ստանձին ճյուղերը կտրտելու, ամբողջ ուժով ձեռնամուխ չի լինի քաղաքական պայքարի կտրուկ կացններով արմատից տապալելու կապիտալիստական կարգի ամբողջ ծառը: 1905 թվի վոթորիկների ու մըրրիկների մեջ ծնունդ ստած մեր արհմիությունները և ամենից առաջ մենք՝ մետաղագործներս—չառ լավ յուրացրինք ընկեր Լենինի խոսքերն այն մասին, թե—«ընդհանրապես դասակարգերի ամենատեղական շահերը վորոշել կարող են քաղաքական արմատական հեղաշրջումները միայն. մասնավորապես պրոլետարիատի տնտեսական շահերը բավարարել կարող է միայն քաղաքական հեղափոխությունը, վորը բուրժուազիայի դիկտատուրայի փոխարեն կտեղծի պրոլետարիատի դիկտատուրա»^{*)}:

Մեր միությունն իր ներկայացուցիչներն ուներ Բանվորական Պատգամավորական Սորհրդում, նրա և սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ցուցմունքներով քաղաքական գործադուլներ ու խրտումներ էր կազմակերպում, պետք չեղած դեպքում ոգնում էր կուսակցութեան աշխատանքներին թե մարդկանցով և թե այլ միջոցներով^{**) :}

^{*)} Վ. Լենին—«Ինչ անել», 1902 թ.

^{**)} Թե ինչպես էյին Ռուսաստանի արհմիություններն ոգնում քաղաքական պայքարի զարգացմանը, այդ մասին արդեն գրել ենք վերևը (տես դէ. 3-րդ): Ավելացնենք այստեղ, վոր Ռուսաստանում գործադուլին մասնակցող յուրաքանչյուր 100 հոգուց քաղաքական պատճառներով գործադուլ էյին անում հետեյալ քանակութեամբ բանվորներ՝ 1905 թվին—64, 1906 թվին—58, իսկ 1907 թ.—72: Այնուհետեւ, 1907-ից—1910 թվերի բանվորական և արհեստակցական չարժման քայքայումը անդրադառնում է և գործադուլների բնույթի վրա: 1908 թ. քաղա-

Պետք է նկատել, վոր մենք սերտ կապ ենք ունեցել ողջիալ-դեմոկրատական կուսակցութեան հետ և այն ել—նրա հեղափոխական մասի՝ բայլչեիկներէ հետ։ Նախաձեռնող խմբակը, վոր կապակերպել էր մեր միութեանը, գործում էր ողջիալ-դեմոկրատ հրահանգչի ղեկավարութեամբ, իսկ մեր վարչութեան մեջ մեծ մասը բայլչեիկ կուսակցական ընկերներ էին։ Այս ամենը մեր միութեան մեջ ամուր էր պահում մարտական հեղափոխական անշեջ վոգին։ Սակայն ընդհանուր առմամբ Ռուսաստանի բանվորական մասսան դեռ ըստականաչափ գիտակից չէր. մի շարք միութեաններում, ինչպես որինակ տպագրիչների, ծառայողների և այլ միութեաններում, մենչեիկները գեոես ավելի մեծ հեղինակութեան ունեցին։

— Հիշում եմ, թե մի անգամ ժողովի ժամանակ ինչպես խոչոր ընդհարում ունեցանք տպագրիչների միութեան նախագահի՝ Հայտնի մենչեիկ Բերտովի հետ։ Նա մեզ նախատում էր նրա համար, վոր մենք միութեանները քաղաքականութեան մեջ լենք քաշում, նրանց յենթարկում ենք միապետութեան կործանիչ հարձակներին, նա պնդում էր, վոր միութեանները պիտի անկախ լինեն կուսակցութեանից և պայքար պիտի մղեն միայն մի «Հանու» (5 կոպեկ) համար։ Իհարկե, մենք նրան ջրեցինք ինչպես հարկե էր, ապացուցեցինք, վոր մենչեիկները պարզապես բուրժուազիայի պոչիցն են կպել, վոր Ռուսաստանի բանվոր դասակարգը հաղթանակ կը տանի միմիայն զինված ապստամբութեան ճանապարհով—հեղափոխական քաղաքական կուսակցութեան (բայլչեիկներին) ղեկավարութեամբ, պրոլետարիատի ու աղքատ գյուղացիութեան զիկտատուրայի միջոցով, իսկ արհմիութեանները մասսաներին պիտի կրթեն հեղափոխական վոգով և անխոնջ ու

քական պատճառներով գործադուլին մասնակցում են 100—ից—52—ը, 1909 թվին ընդամենը 13—ը, իսկ 1910 թվին—8 հոգի միայն։ Սակայն արդյունաբերական նոր վերելքը 1912 թվին նորից տալիս է 85 տոկոս քաղաքական գործադուլավորների (վոր կապված էր մանափանդ Լենայի գնդակահարութեանների հետ), 1913 թվին 70 տոկոս, իսկ 1914 թվին 77 տոկոս։ Բնորոշ է և գործադուլավորների ընդհանուր թիվը. 1905 թվին գործադուլներին մասնակցել են 2,709,000 մարդ, 1906 թվին 1,108,000 մարդ, 1907 թ. 740,000 մարդ, 1908 թ. —176,000, 1909 թվին—64,000, 1910 թ. —46,000։

անդադար աշխատանքով պիտի նախապատրաստեն նրանց՝ կապիտալիզմը տապալելու մեծ գործի համար :

— Մեր դաստիարակչական աշխատանքը նույնպես հաջող երգնում, չնորհիվ մեր կաղճակերպած ակումբի : Ակումբն ընդամենը յերկու սենյակ ուներ : Ամեն ինչ համարյա մենք էյինք շինել : Ամբողջ կահավորման համար յերեսուն ռուբլուց ավելի չէյինք ծախսել, այն էլ հավաքել էյինք կոպեկ-կոպեկ : Ակումբում մենք դասախոսություններ էյինք կարդում ամենահասարակ («անվրտանդ») նյութերի մասին, ինչպես որինակ—բուլյաների կյանքի մասին» և այլն : Բայց հենց վոր վոստիկանության ներկայացուցիչը դասախոսության ժամանակ ձանձրանում եր և սկսում եր ննջալ, անմիջապես նյութը չուռ էյինք տալիս, սկսում էյինք մեր ազիտացիան, բացատրում էյինք պրոլետարիատի դասակարգային պայքարի խնդիրները և կոչ էյինք անում ներկա յեղող բանվորներին՝ մտնել Ռ. Ս. Դ. Բ. Կ. (բայլչեիկների) չարքերը :

— Այժմ, ընկերներ, յես մի քիչ ել կխոսեմ մեր աշխատանքների վորոշ պայմանների մասին : Մեր միությունը գոյություն ուներ 1906 թվի մարտի 4-ին արհմիությունների մասին հրատարակված որենքի հիման վրա : Այդ որենքը թեև թույլ եր տալիս, վոր գոյություն ունենան արհմիություններ, սակայն ամեն կերպ աշխատում եր մեռցնել նրանց մեջ ամեն տեսակի քաղաքական պայքար : Վախենալով, թե միությունները միանալով կդառնան հզոր հեղափոխական կաղճակերպություններ՝ այդ որենքը արգելում եր առանձին միությունների վորևե պատրվակով միանալ : Այդ պատճառով ել մեզ չհաջողվեց ստեղծել մետաղագործների Համառուսական մի ընդհանուր միություն : Մենք մասնակցություն ունեցանք միայն մետաղագործների միության չրջանային կոնֆերենցիային, վորը տեղի ունեցավ 1906 թվի ոգոստոսին^{*)} :

^{*)} Այդ չրջանում (և մասնավանդ 1907 թվի սկզբներին) մի շարք միությունների համառուսական և չրջանային կոնֆերանսներ են հրավիրվում, սակայն միայն տպագրիչներին և հաջողվում ստեղծել Համառուսական Միություն—կենտրոնական կոմիտեյով, վորը սակայն առանձնապես մեծ իրավունքներ չուներ : Նրա պարտականություններն էյին միայն—կապ հաստատել տրպազրիչների զատ-զատ միությունների միջև, համաձայնեցնել նրանց աշխատանքները, կենտրոնացնել ճանապարհածախսերի

ինչ վերաբերում է տարբեր արտադրությունների միությունների կապին, պիտի առել, վոր մեր քաղաքում այդ կապն իրականացնողը Արհմիությունների կենտրոնական Բյուրոն էր, վորի մեջ մենք Յ ներկայացուցիչ ունեյինք^{*)} :

Այդ կենտրոնական բյուրոները, վոր ծնունդ էյին առել մի շարք արդյունաբերական կենտրոններում, ղեկուս չատ թույլ էյին, վոր կարողանան ղեկավարել արհարժուժը: Հիշում եմ, նրանց ամբողջ աշխատանքն այն էր, վոր այս կամ այն միությանն ողնում էյին կազմակերպվել, կանոնադրություններ էյին մշակում, ոժանդակում էյին միությունների չրջնային Համառուսական Համագումարներ Հրավիրելուն, իրավական ոգնություն էյին կազմակերպում: Յեթե պետք էր լինում մեր քաղաքի բոլոր արհմիությունների անունից վորեւ պահանջ ներկայացնել, ապա այդ գործը Հանձնարարվում էր կենտրոնական Բյուրոյին: Բացի այդ, մեր Բյուրոյի ղեկավարությամբ մենք՝ միություններս, մասնակցում էյինք բոլոր քաղաքական գործադուլներին ու պետական Դումայի ընտրություններին: Այստեղ, ընկերներ, ձեզ պետք է հիշեցնել նույնպէս, վոր վոստիկանական ռեակցիայի ծանր պայմանները Ռուսաստանի արհարժմանը թույլ չէյին տալիս ստեղծել իր ղեկավար կենտրոնը—Արհմիությունների Համառուսական Համագումար Հրավիրելը մեզ չհաջողվեց: Կարողացանք կազմակերպել միայն առաջին Համառուսական կոնֆերենցիան 1905 թվի հոկտեմբերին և 2-րդ Համառուսական կոնֆերենցիան 1906 թվի փետրվարին:

—1907 թվին ռեակցիան սկսեց ամսե ամիս ուժեղանալ, մինչև վոր, Ստալիպինի կառավարության որով արդեն դաժանորեն հորձանք տվեց արհարժման վրա^{**)} :

Ֆանդերը, Հաջմոման յենթարկել գործադուլներին և 5 տոկոսային հատկացումներ ստանալ տպագրիչների տեղական միությունների բոլոր մուտքի ու անդամակցական վճարներից:

^{*)} Այդպիսի բյուրո առաջին անգամ կազմակերպվեց Մոսկվայում 1905 թ. հոկտեմբերին:

^{**) 1907 թվին վոստիկանությունը փակել է 159 միություն, 1908 թվին՝ 101, 1909 թ.—96, 1910 թ.—88: Նույն ժամանակաշրջանում մերժվեց իրավունք տալ կազմակերպելու 604 միություն և այգալիսով—1910 թվին՝ արհմիությունների մեջ կազմակերպված բանվորների թիվը Ռուսաստանում մի օջաչին թիվ էր կազմում—ընդամենը 35.000 հոգի: 1906—1910 թվերի}

Մեր միութեան նկատմամբ, վորին վոստիկանութեանը վաղուց արդեն առում եր իր հեղափոխական վոզու պատճառով, սկսվեց ամեն տեսակի վոտնձգութեաններ ու բծախնդրութեաններ: Մի քանի անգամ մեզ մոտ հանկարծակի խուզարկութեաններ տեղի ունեցան: Մեզ նույնիսկ կարգադրեցին, վոր մեր շենքի բանալին պահվի մոչ թե միութեան քարտուղարի մոտ, այլ այդ շենքի դռնապանի մոտ, վորպեսզի թողային վոստիկանական պաշտոնյան ամեն րոպե կարողանա ստուգել, թե մեր միութեան մեջ ինչ է պահվում կամ ինչ է կատարվում... Վերջապես, 1907 թվի հոկտեմբերին, ողավելով այն միանգամայն հասարակ տոթից, վոր մեր միութեան մեջ գտնվեց կարլ Մարքսի «Կապիտալ»-ը (վորը այդ ժամանակ ազատորեն վաճառվում եր բոլոր գրախանութներում), վոստիկանութեանը վերջնականապես փակեց մեր միութեան դռները:

— Այստեղից ահա, մեր, մետաղագործներին միութեան պատմութեան մեջ մի խոշոր բաց է մնում, վոր չարունակվում է մինչև 1917 թվի փետրվարյան հեղափոխութեանը: Սակայն ամբողջ Ռուսաստանի բանվորական ու արհեստակցական շարժումը այդ շրջանում շատ հետաքրքիր կողմեր ունի: Բայց այդ մասին խոսելու համար յետ յերևի ստիպված կլինեմ մի քիչ շեղվել մեր այսորվա «հուշի յերեկո»-ի նյութից:

— Վոչինչ, չարունակեցեք, խնդրում ենք, խնդրում ենք:

— Յեվ այսպես ուրեմն, ընկերներ, 1907—1911 թվերին տկավում է զաղտնի աշխատանքի գծվարին շրջանը: Արդյունաբերութեան մեջ նկատվում եր անշարժութեան ու ճգնաժամ—խեղճա ափեկացնում եր գործադուրկների թիվը, թուլացնում եր բանվորների ընդդիմադրութեանը և ափելի լայն ազատութեան եր տալիս ցարական վոհմակների վոհրադործութեաններին*):

շրջանում փակվել են նաև 101 արհեստակցական սրգան(Պետրոգրադում—39, Մոսկվայում—12, Ադեսայում—8 և այլն):

*) 1907—1911 թվերի ռեակցիայի հաղթանակին խոշոր չափով նպաստեց Ռուսաստանի արդյունաբերութեան խիստ ճգնաժամը, վոր հետևանք եր 1905—6 թվերի անբերրի տարիների, ուսույնապետական պատերազմի և Գերմանիայի հետ կնքած աննպաստ առևտրական դաշնագրի: Այսպես, 1909 թվին, համեմատած 1900 թվի հետ, չուգունի արդյունաբերութեանը կործառավեց 2,2 միլ. փթով, մինչդեռ նույն ժամանակում Ամերիկայում և Արևմտյան Յեվրոպայում չուգունի արդյունաբերու-

Հատկապես այդ տարիներում ավելի ցայտուն կերպով յերևան յեկալ մենչեղմի դավաճանական ելութիւնը: Ռեակցիայի ծանր սրերին միապետութիւնը վճռական հարձակում ականց բանվոր դասակարգի դեմ: Բուրժուազիան վաւրածատները ամենից առաջ աշխատում էին քայքայել ու վռնչացնել պրոլետարիատի մարտական կուսակցութիւնը: Կուսակցութեան մենչեիկական անկայուն խավերը բանվոր դասակարգի ծանր բռնաներին կամովին բուրժուազիայի սանձի տակ մտան: Նրանք ստեղծեցին մի հոսանք, վոր կոչվեց «լիկվիդատորական» հոսանք: Բուրժուազիան,—ասում էին նրանք—այնքան ուժեղ է, վոր նրա դեմ անմիջական հեղափոխական պայքար մղելով բան չի դուրս գա: Գաղտնարաններում նստած վռչինչ չի կարելի անել: Մեզ հարկավոր է մի բաց-աշկարա, լայն բանվորական կազմակերպութիւն: Յեւ, իհարկե, վորպեսզի ցարական կառավարութիւնը չփակի այդ կազմակերպութիւնը, մենք պետք է վորոշ խնդիրներից հրաժարվենք. բանվոր դասակարգին այլևս կոչ չպետք է անենք դասակարգային պայքար մղելու, պիտի աշխատենք նրա դրութիւնը բարելավել, մեր ուժերի չափով ու հնարավորութեան սահմաններում, փոխադարձ ոգնութեան գանձարկղների միջոցով և այլն: Իսկ նախկին սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը մեզ պետք չէ, հարկավոր է ցրել, «լիկվիդացիայի» յենթարկել այդ կուսակցութիւնը: Սրանից ել լավ ծառայութիւն մատուցել բանվորական շարժման թշնամիներին լիկվիդատորները չեյին կարող: Զուր չէր, վոր ընկեր Լենինը այնքան անխնա պայքար էր մղում լիկվիդատորների դեմ: Նա դրում էր—«Լիկվիդատորները մանր բուրժուական ինտելիգենտներն են, վորոնց բուրժուազիան ուղարկել է բանվորական միջաձայնում լիբերալիստական այլատերում մտցնելու»: Լիկվիդատորութիւնը «անցյալից հրաժարվելու և բանվոր դասակարգի հետ կապերը խզելու մի դիմակ է»: Ահա այսպիսի ընթացք էին ուղղում տալ լիկվիդատորները և արհեստակցական միութիւնների աշխատանքներին. նրանք կոչ էին անում հրաժարվել տրե-

թիւնը բարձրացավ Հ. Մ. Նահանգներում՝ 86,9 տոկոսով: Գերմանիայում—67,4 տոկոսով, Ֆրանսիայում—40 տոկոսով: Լիակատար անշարժութիւն էր տիրում և տեկստիլ արդ. յունարեութեան մեջ:

տեսական ու քաղաքական պայքարից, կարգավորել լիոնիզմութեան դործը և այլն:

— Այս հիմնադրերն տատանումների և բացահայտ դաժաճանութեան պայմաններում բայլչեիկները համառորեն առաջ ելին տանում իրենց հաստատուն ու տոկուն գիծը: Յեւ իսկապես, ինչ պիտի անել հեղափոխականը ցարիզմի նոր հարձակումների պայմաններում: Նա վոչ թե պիտի լիկվիդացիայի յենթարկելը, այլ պետք է դործարաններում ամրապնդել ու պոպուսներ բանվորական շարժման հիմնական կաղերքը—բայլչեիկյան կուսակցութեանը: Ի հարկե, այդ չէր նշանակում, թե բայլչեիկները հրաժարվում եյին թուլատրված (լեզալ) կազմակերպութեաններում վորեւ աշխատանք տանելուց: Նրանք գտնում եյին, վոր պետք է գնալ Պետական Դումա, բայց գնալ նրա համար, վոր նրա ամբողջից մերկացվի բուրժուական պարլամենտի ամբողջ կեղծիքն ու ճահիճը, կոչ արվի բանվորներին կազմակերպված պայքար սկսելու կապիտալիզմը տապալելու համար: Որինական (լեզալ) միութեաններ ստեղծել, ի հարկե, հարկավոր է, այն լեզալ արհմիութեաններում, վորոնք գեւ մնացել են, պետք է աշխատել, բայց հանուն ինչի: Ամենից առաջ նրա համար, վորպեսզի արհմիութեանները չսահմանափակվեն «չնչին դործերով», վորպեսզի նրանց սովորական—առօրյա կյանքը տոգորված լինի պրոլետարիատի դասակարգային շահերի պարզ ըմբռնողութեամբ և այն գիտակցութեամբ, վոր անհրաժեշտ է անընդհատ պատրաստութեան տեսնել միապետութեան հետ նոր ու անխուսափելի բնդհարման համար: Իսկ յեթե ցրված է միութեանը, խլված են բացահայտ դործելու հնարավորութեանները, միութենական աշխատանքը տեղափոխեցեք դադանարանները, շարունակեցեք այդտեղից ղեկավարել հեղափոխական պայքարը, արհմիութեանները դարձրեք նոր հեղափոխութեան ապավենների մի խումբ:

— Իսկ ո՞վ պիտի ուղղութեան տա ինչպես լեզալ, այնպես և անլեզալ արհմիութեանների աշխատանքներին: Ինչպես առացին, մենչեիկներն արգեն պատասխանել եյին այս հարցին, հայտարարելով, վոր արհմիութեանները պիտի «չեզոք» լինեն, վոր վոչ մի քաղաքական կուսակցութեան չպիտի ղեկավարի նրանց աշխատանքները: Սակայն ինչ է կուսակցութեանը. դա մի մարտական մարմին է: Պրոլետարիատի քաղաքական կուսակցութեանը բանվոր դասակարգի առաջապահն է (ալմանդարդը): Ասել, թե բանվոր դասակարգը չպիտի յենթարկվի իր ալմանդարդին, — նշանակում է նր-

բառ ուժերը քայքայման ու ցրվածութեան յենթարկել, մատենել նորան թշնամի դասակարգին—բուրժուազիային :

Բայց չեղինքը համառ պայքար ելին մղում մենչեիկներին նման հայացքների դեմ : 1906 թվին Ստոկհոլմում, Ռ. Ս. — Գ. Բ. Կ. միացյալ համագումարում հաղթանակում են մենչեիկները : Բանաձև է ընդունվում, վորն ասում է, թե կուսակցութեանը պիտի քաղաքական պայքար մղի, իսկ արհմիութեանները տնտեսական և ներսնոց կապը պիտի լինի միայն աշխատողների հետ կապված պիտի աշխատեն : Սակայն 1907 թվին Լոնդոնի համագումարում արդեն պերակցութեանն ստանում են բայց չեղինքները : նոր բանաձևն ասում է, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը պիտի դադարաբար դեկլավարի միութեանները և կազմակերպչական կապ պիտի ստեղծվի միութեաններին ու կուսակցութեան միջև :^{*)}

1908 թվին, ռեակցիայի ծանր սրերին, բայց չեղինքները շատ յուրը կերպով մոտեցան արհեստակցական միութեաններին ներքին խմբապնդման խնդիրներին : Նրանք ձեռնարկեցին սոցիալ-դեմոկրատական ամբակուռ խմբեր պատրաստելուն, ինչպես մինչ այդ դոկթրինան ունեցող միութեաններում, այնպես և հենց ուղղակի ձեռնարկութեաններում^{**) :}

*) 1906 թվին Ստոկհոլմի համագումարում մենչեիկները բանաձևն ասում էր, վոր «կուսակցութեան բոլոր անդամները պիտի մտնեն միութեաններին մեջ վորպես անդամներ, ակտիվ մասնակցութեան ունենան միութեաններին բոլոր աշխատանքների մեջ և նրանց անդամների մեջ պիտի ամրապնդեն դասակարգային ինքնագիտակցութեանը, վորպեսզի որդանապես, պայքարի ու ազխատայի ընթացքում միութեանները կապվեն կուսակցութեան հետ» : Իսկ 1907 թվին Լոնդոնի համագումարի բայց չեղինքյան բանաձևն ասում էր. «Հաստատելով միացյալ համագումարի բանաձևն արհեստակցական միութեաններին մեջ աշխատանք տանելու մասին՝ համագումարը կուսակցական կազմակերպութեաններին ու արհեստակցական միութեաններին մեջ աշխատող սոցիալ-դեմոկրատների ուղղորդութեան և հրապարակում սոց. — դեմոկրատական հիմնական աշխատանքներից մեկի վրա, այն է—աշխատել, վոր արհեստակցական միութեանները ընդունեն սոց. — դեմ. կուսակցութեան դադարաբար դեկլավարութեանը և մյուս կողմից կազմակերպչական կապ հաստատել ներքին հետ» :

**) Մի քաղվածք կնք բերում Կենտկոմի 1908 թվին նամակներից—«Արհեստակցական միութեաններում սոցիալիստական աշխատանքներ տանելու մասին» (Сборник Истпарта: „Революция и РКП в материалах и документах“, т. 5, 1924 г.)

— Թեակցիայի տարիներում բայլչեիկները բաժարար շախտադեցութիւն չունեյին արհեստակցական միութիւններում: Սա-
կայն 1912 թվից այդ ազդեցութիւնն սկսում է մեծանալ շատ խո-
շոր թափով: Սկսվում է 1911-ից—1914 թվի արդյունաբերական
նոր վերելքը, իսկ դրա հետ միասին կենդանանալ է սկսում և բան-
վորական շարժումը*): Չնայած մենչեիկների վախատմունքին,

«կենտկոմը հանձնարարում է բոլոր գոյութիւն ունեցող լե-
զայ միութիւններում և այնտեղ, ուր դեռ կարելի չէ այդպիսին
ստեղծել, կազմակերպել նման բջիջներ բոլոր գործարաններում,
գլավոզներում, արհեստավորական ու առևտրական ձեռնարկնե-
րում»:

Միաժամանակ կենտկոմը մտանոնչում էր, վոր Ֆրակցիոն
ժորոչումներ կարեւոր է ընդունել միայն նշանակալից հարցերի
նկատմամբ, պիտի շատ լավ մտածել սոց-դեմոկրատներին, միու-
թիւններում տարվող աշխատանքների մասին, վորովհետև «Ար-
հեստակցական միութիւններում սոց-դեմոկրատական գիծը
պիտի տարվի մեծ աակտով և հատուկ զգուշավորութեամբ»:

*) Բանվորական շարժման կենդանացումը նկատվում է դեռ
1910 թվից, բայց լրակատար դարգացման և հասնում 1911-ից—
1914 թվի շրջանում: Այդ բանին նպաստում են կապիտալիստա-
կան գյուղատնտեսութեան աճումը, գյուղացիական կուլակային
տնտեսութիւնների աճումը—Ստալիպինի քաղաքականութեան և
չուկայի կոնյուկտուրայի շնորհիվ, ինչպես և հացի գների բարձր-
րացման հետևանքով: Արդյունաբերութեան կենտրոնացմանը
զգալի չափով նպաստում են նաև ոռոտական իմպերիալիզմի ա-
ճումն ու ուղղմական խոշոր պատվերները:

Պատերազմից առաջ, վերջին 5 տարիների ընթացքում Թու-
սասանի խոշոր արդյունաբերութեան բանվորների թիվը աճում
է $2\frac{1}{2}$ միլիոնից մինչև $2\frac{3}{4}$ միլիոն—11 տոկոսով: 1900-ից—1907
թվի շրջանում նա ընկնում է 15,7 տոկոսով: Չուգունի արդյու-
նաբերութեանը 1810 թվի 186 միլիոն փթից բարձրանում է 283
միլ. փթի—1913 թվին, իսկ քարածխի արտադրութիւնը 1,522
միլ. փթից—մինչև 2,214 միլ. փութ:

Ռուսական յերիտասարդ արդյունաբերութեանը արագորեն
առաջ է մղում և հնամենայ գյուղական տնտեսութիւնը (1900—
1913 թվերի շրջանում գյուղատնտեսութեան յեկամուտը բարձր-
րացավ 34 տոկոսով, իսկ արդյունաբերականից՝ 62 տոկոսով):
Արդյունաբերութիւնը հառաատուն կերպով կենտրոնանում է
սինդիկատների մեջ. «Պրոդամեաա»-ն իր շուրջն և համախմբում
յերկաթի արդյունաբերութեան 88-93 տոկոսը, «Հորոզվադոն»-ը
14-16 վագոն արտադրող գործարաններ, «Պրոդկոստրո-
ամբուլ» սննդի արտադրութեան 30 տոկոսը:

վորոնք կոչ ելին անում բանվոր դասակարգին շրջահայաց և զգուշ լինել, այնուամենայնիվ սկիզբ և առնում գործադուլները ընդարձակ ալիքը: Քանի գնում, այնքան շատ բանվորներ են գործադուլ անում քաղաքական պահանջներով: Նորից սրվում և Ռուսաստանի բանվորների դասակարգային պայքարը կապիտալի և միապետության դեմ: Սկզբում գործադուլային շարժումը շատ համեստ շրջանակներում եր ահամանափակվում, բայց 1912 թվի ապրիլ ամսին նա բորբոքվում և ու բոցավառվում—լենայի գեպքերի ազդեցությամբ տակ:

— Արժե պատմել ցարական ռեժիմի այդ սև գործի մասին: Լենայի և Բոգայրովի վոսկու հանքերի բանվորները, այլևս չգլխաւանալով հանքերի վարչության կամայականություններին ու ճնշումներին, գործադուլ հայտարարեցին և մի շարք անտեսական ու իրավական պահանջներ առաջադրեցին: Դրանցից մեծ մասը շատ համեստ պահանջներ ելին: Որինակ պահանջում ելին.

1. Տփամյա բանվորական ուր (10-ի փոխարեն), 2. աշխատավարձի բարձրացում 30 տոկոսով, 3. տուգանքների վերացում, 4. վերացնել խանութի համար տալոններ տալով աշխատավարձը վր-

1908-1913 թվերի շրջանում արտադրության արժեքը բարձր բանում և 20 տոկոսով:

Արտադրության մեքենայացումը և կենտրոնացումը բարձր բացնում և աշխատանքի արտադրողականությունը: Այսպես, յեթե մենք ուստական արդյունաբերության 1900 թվի աշխատանքի արտադրողականությունն ընդունենք 100, ապա—1908 թվին նա կարտահայտվի 129 և 1913 թվին 155 թվերով (ըստ Սարումիլինի):

Միաժամանակ ուժեղ թափով զարգանում և և ֆինանսական կապիտալը: (1910-11 թվի շրջանում բանկերի կապիտալների գումարը 332,1 միլիոն ռուբլուց հասնում և 774,3 միլիոն ռուբլու, իսկ ավանդների գումարը՝ 1,395 միլիոնից հասնում և 2,539 միլիոնի: Ընդհանուր առմամբ 1890—1914 թվերի ընթացքում բանկերի կապիտալների գումարը աճել և 135 տոկոսով, իսկ ավանդներինը 100 տոկոսով՝ կատարելապես իր աճման տեւպով առաջ անցնելով Արեւմտյան Յեփրոպայից: (Մանրամասնությունը տես «Արեւմուտքի արհարժման պատմություն»-ը նույն հեղինակի զրբի մեջ ՀԱՄԿ-ի 2-րդ հրատարակություն):

Արտասահմանյան կապիտալը վերջնականապես տիրապետում և Ռուսաստանի խոշորագույն ձեռնարկություններին: Նրա ձեռքում են գտնվում Դոնի ավազանի քարածուխի և չուգուն-պողպատածուլական ամբողջ արդյունաբերությունը:

ճարելու ձևը, 5. ճանաչել բանվորական հանձնաժողովները, վորոնք պիտի հսկեն թե տեխնիկները ճիշտ են չափում բանվորների կատարած աշխատանքը, լադուսի, հանքերի տեսակների բաժանման, փոխադրման և այլ աշխատանքները, 6. բանվորներին տրձակել միայն բանվորական հանձնաժողովի համաձայնութձամբ, 7. բանվորների պատուամալորները միանգամայն անձեռնմխելի պիտի լինեն, 8. քաղաքալարի վերաբերմունք, 9. բարելալել բձշկական ոգնութձան դործը, 10. արտաժամյա աշխատանքների համար վճարել ըստ համաձայնութձայն, ինչպես նաև վճարել այն ժամանակամիջոցի համար, վոր հարկալոր և հեռալոր վայրեր աշխատանքի դնալու համար, 11. հաշվեգրքույիը տալ բանվորների ձեռքը, 12. կանոնալոր կերպով վճարել այն որերի աշխատալարձը, վոր կորցրել և բանվորը ձեռնարկութձան հանցանքով հիլանդանալու կամ միաալելու պատճառով, 13. վարչութձյունից հեռացնել 27 հոդու, 14. ամուսնացած բանվորներին բաժանել ամուրիներից և առանձին տեղալորել: Ի պատասխան այս պահանջների ժանդարմերիայի գլխալոր Տերեշչենկոն 1912 թվի ալրիի 4-ին առանց վորևե պատճառի գնդակահարեց մի ահա-

լեռնային և մետաղամշակման արդյունաբերութձյան մեջ ոտարյերկրացիները տիրապետում են ձեռնարկութձյունների մեկ շորորին և ալցիանների 1/3-ից ալելին: Ելեքորարդյունաբերութձյան մեջ տիրում եյին ձեռնարկութձյունների 1/2-ին և ալցիանների 3/4-ից ալելին: Պատերազմից առաջ ալցիոներական ընկերութձյուններին պատկանող բոլոր ձեռնարկութձյունների ալցիանների 1/7 մասը պատկանում եր ոտարյերկրյա կապիտալիստներին, վորոնք դործի մեջ եյին դրել այդ բոլոր ձեռնարկութձյունների կապիտալի 1/3 մասը: Բացի կապիտալից, Ռուսաստանի արդյունաբերութձյունը իր սարքալորման 58 տոկոսը ստանում եր արտասահմանից: Ստանում եր նաև մանածագործութձյան հուս նյութի կեսը և մի շարք այլ նյութեր (քիմիական և այլն):

Պոչոր կալլածատիրական և կապիտալիստական գյուղաալնաեութձյան դարդացման կողքին տեսնում ենք գյուղացիութձյան հողային սով:

Յեվ իսկալես, ինչպես ընկ. Լենինն եր ասում, 1905 թվին Ռուսաստանի առաջին հեղափոխութձյանը 10 միլիոն մանր ու միջակ գյուղական տնտեսութձյուններ, վոր ունեյին ընդամենը 73 միլ. դեսյատին հող, հակադրվում եյին 28 հազար խոշոր հողատերերին (ճնշող մեծամասնութձյունը կալլածատերեր), վորոնք ունեյին 62 միլ. դեսյատին հող:

դին խաւար անգին գործադուլաւոր բանվորներին : Սպանվեցին 270 հոգի, վերաւորվեցին 250 հոգի, վերոնցից 100-ից ալեւի մեռան ծանր վերքերից : Այս ստոր վերաբերմունքը փոթորիկեց բանվորական լայն մասսաները : Բանվորական շարժման ալիքը չտեսնված չափով բարձրացավ : 1912 թվին գործադուլ արեցին 1,070,000 բանվորներ, վորոնցից 855,000-ը քաղաքական պահանջներ եյին առաջադրում : 1913 թվին գործադուլին մասնակցում եյին 1,185,000 հոգի (քաղաքական հոգի վրա 820,000) : Գործադուլային շարժման ալիքն անընդհատ զարգանալով՝ 1914 թվի առաջին կեսին համարյա թե հասնում ե 1905 թվի առաջինին : Հոգնած ե մատուր ուսակցիայի տարիներին հրապարակված լայն մասսաները այժմ ազատվելով մանր-բուրժուական ազդեցութեաներից՝ նոր յեռուն թափով գնում են բայլչեմիկներին հետեից : Արհշարժման բոլոր դիրքերից սկսում են հեռացնել մենչեիկներին (որինակ—1913 թվին բայլչեիկները իրենց ձեռքը դեցեցին մետաղագործների Լենինգրադի միութեանը) : Պետական Դումայում մի բուռն բայլչեիկները (6 մարդ) դումայի ամբիոնը հեղափոխութեան քարոզաւայր են դարձնում : Արհեստակցական միութեանները քանակով եւ աճում են, սակայն այդ աճումը չեր կարող հասնել 1905—1906 թվերին, վորովհետեւ 1914 թվին Լենինգրադում հաշվում եր ընդամենը 25,000 միութեան անդամ (ի դիմաց 1906 թվի 45,000-ի) : 1914 թվի հուլիսին արդեն Լենինգրադի փողոցներում բարրիկադներ եյին չինվում, բայց հենց նույն ամսին ել բռնկվեց համաշխարհային իմպերիալիստական սպանդանոցը : Յարական կառավարութեանը հայտարարում ե «պաշարողական» ե այլ «հատուկ» զրութեաններ, սկսվում են զորահաւաքները ե 1914—1917 թվերի շրջանում արհմիութեանները նորից քայքայման են յենթարկվում : Սրանով ընկեր Բարոզդինը վերջացրեց իր խոսքը :

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈ-
ԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(ՓԵՏՐՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ
1917թ.) :

1917 թվին փետրվարյան հեղափոխութեանը ջրիվ ե տալիս փթած միապետութեանը : Արհեստակց. շարժումը, համեմատաբար ազատ քաղաքական պայմաններում հետզհետե խորացող հեղափոխութեան շնորհիվ, դուրս ե գալիս ազատ հրապարակ :

Ընդամենը մի քանի ուր ե, ինչ Բ. քաղաքը—աեկատիլ արդյունաբերութեան խոշոր կենտրոնը—լուր եր յեկել հեղաշրջման մո-

սին, բայց քաղաքն արդեն անճանաչելի յեր: Իբրաք հետեւեց բան-
վորական կուռ կազմակերպություններ ելին ստեղծվում, վորոնք
սերա կապերով կապվում ելին բանվորական պատգամավորների
խորհուրդներին հետ: Միությունները սուեկի պես ելին բանում:
Կատարվում եր ամենամե աշխատանքը, բանվորների ցրված ու-
ժերը համաքելու և միութենական ասարատոր կարգի բերելու հա-
մար:

1917 թվի մարտի սկզբին, մի փոքրիկ սենյակում համաք-
վեց մանածագործների արհմիության նախաձեռնող խմբակը—հին
աշխատավորները այն միության, վորը փակվել եր 1906 թվին:
Նույն ամսի վերջին արդեն վերածնված միության մեջ կային
10,000 անդամներ: Նրա առաջին քայլերն ելին, պաշար սկսել
ութ ժամյա բանվորական օրվա համար, պաշարել բանվորների
աշխատավարձը բարձրացնելու, վորն արդեն շատ հետ եր մնացել
աճող թանկությունից, լայն կամպանիա տանել կոլլեկտիվ պայ-
մանագրեր կնքելու համար: Միությանը կից աշխատանքի բյու-
րոն ցուցակադրում եր գործադուրկներին և նրանց համար աշ-
խատանք եր գտնում: Միության կոնֆլիկտային բաժինը լիքն եր
ձեռնարկատերերի դեմ տված դանդառներով: Մի շարք հանձնա-
ժողովներ ու սեկցիաներ դրադված ելին տարիքների վերաբնու-
թյան, հատավճարի դնահատման և այլ աշխատանքներով: Արհ-
միությունների տեղական կենտրոնական բյուրոն (ինչպես և այլ
չրջանի բոլոր միութենական կենտրոնները) դեռ ևս շատ թույլ
եր և վոչ մի շոշափելի ողնություն չեր ցույց տալիս միության
աշխատանքներին: Բայց դրա փոխարեն միությունը սերտորեն
կապված եր տեղական Բանվորների, Չինվորների պատգամավոր-
ների խորհրդի աշխատանքի բաժնի հետ: Ենպես այս բաժինն իր
վրա յեր վերցրել միջմիութենական միավորումների աշխատանք-
ների մեծ մասը. քնդհանուր հրահանգներ եր մշակում պրոֆ-աշ-
խատանքների մասին, քննում եր բանվորների տնտեսական գրու-
թյան պայմանները, օժանդակում եր միություններին տնտեսական
պաշարի գործում, կազմակերպում եր նոր միություններ, դեկա-
վարում եր գործադուրկները, կոնֆլիկտների ժամանակ իր վրա յեր
վերցնում միջնորդությունը և այլն, և այլն:

Ընդհանուր առմամբ այլ չրջանում մանածագործների արհ-
միության աշխատանքը (և Բ. քաղաքի բոլոր մյուս միություն-
ների աշխատանքները) դեռ շատ եր նմանվում ցարիզմի ժամա-
նակվա միութենական աշխատանքին: Յեվ դա գարմանալի չե.

ճիշտ և, միապետութիւնը այլևս գոյութիւն չունի, բայց դեռ տապալված չեք կապիտալիզմը: Գործարաններն ու զավոդները առաջվա պէս պատկանում ելին ձեռնարկատերերին, իսկ հողը կալվածատերերին: Թեև ամբողջ Ռուսաստանն արդեն ծածկված էր Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդներով, սակայն յերկրի իշխանութիւնը բուրժուազիան իր ձեռքն էր գցել և իր լակեյները—եսերները ու մենչեիկները միջոցով, իր սարքած տիկնախաղը—Կերենսկու ժամանակավոր կառավարութեան միջոցով հրաշալի կերպով կարողանում էր խաբել, հիմարացնել ընդհանրական մասսաներին: Յեւ, ինչպէս ամբողջ Ռուսաստանում, այնպէս և Բ. քաղաքի բանվորները ու զինվորների պատգամավորական խորհրդում 1917 թվի մայիսին ձեռք մասնութիւնը կազմում ելին և մեծ ազդեցութիւն ունեյին համաձայնողական մանր բուրժուական եսերո—մենչեիկյան ինտերգենտները:

Մենչեիկները ու փոքրաթիւ բայլչեիկները միջև չարունակ փոթորկալից ընդհարումներ ելին տեղի ունենում:

— Միթե՞ դուք բանվորների շահերն էք պաշտպանում, — դուռաց մի անգամ բայլչեիկ Ռոզինը՝ Լավրսկի մանուֆակտուրայի գործարանի գործարկումի նախագահը, մի ժողովի ժամանակ: — Դուք խոսում էք ազատութեան, սոցիալիզմի և խաղաղութեան մասին, ու՞ր են ձեր այդ խոստումները: Առաջվա պէս այժմ էլ բանվորները տնքում են կապիտալի բռնան տակ, իսկ գյուղացիները կալվածատերերի լծի տակ: Զեռնարկատերերը որեց որ ավելի յեն լկտիանում, իսկ բանվորների ու գյուղացիների արյունը չարունակում և հոսել իմպերիալիստական պատերազմի ճակատներում: Դուք մեզ հայտարարում էք, թե այժմ մեզ ժամանակավոր կառավարութիւն ունենք, վոր ցարական մինիստրների փոխարեն այնտեղ նստած են սոցիալիստ—մենչեիկներն ու սոցիալիստ—հեղափոխականները: Սու՛տ և: Կերենսկու կառավարութեան մեջ վոչ մի իսկական սոցիալիստ ու բանվոր դասակարգի հարապատ ներկայացուցիչ չկա՛: Ամենակարեւոր պաշտոնները—արտաքին գործոց մինիստրութիւնը, Ֆինանսների, առևտրական ու արդյունաբերութեան մինիստրութիւնները առաջվա պէս հանձնված են կապիտալիստ մինիստրների: Կերենսկու կառավարութիւնը բուրժուազիայի կառավարութիւնն է, նա ինքը և իբ արբանյակները կեղծ—սոցիալիստներ են, բանվոր դասակարգի մատնիչներն են: Բանվոր դասակարգը նրանց չի վստահում իր

բաղդը: Մենք, բանվորներս, ցանկանում ենք ունենալ մեր կառավարութիւնը: Բուրժուազիայի դիկտատուրայի փոխարեն մեզ հարկավոր է պրոլետարիատի դիկտատուրա: Մենք պահանջում ենք ամբողջ իշխանութիւնը հանձնել խորհուրդներին:

— Յես խղճում եմ ընկեր Բոդինին,—խոսեց Պետտովը, վոր մենչևիկներին նշանավոր առաջնորդն (լիդեր) ու մանածագործներին նախագահն էր.—յես խղճում եմ նրան, ինչպես և բոլոր բայլչեիկներին: Գոռում, գոչում են բանվոր դասակարգի ու նրա իրավունքների մասին, բայց ո՞վ է գնում նրանց հետևից, մի փոքրիկ խմբակ, ուրիշ վոչ-վոք: Միայն մենք ենք, վոր հավատարիմ ենք դեմոկրատիայի իդեալներին, հեռու յենք անմիա բռնութիւնների յերացանքներից և մեր հետևից են դալիս բանվորական լայն մասսաները: Ինչպես մանածագործներին միութիւնն նախագահ, վորը 30,000 բանվորութիւն է միացնում, յես կարող եմ հավաստիացնել խորհուրդին, վոր մանածագործ բանվորները լիակատար նեցուկ կը լինեն Կերենսկու խակական—դեմոկրատական կառավարութեանը, վորը հեղափոխութեան գծով մեր յերկիրը տանում է գեպի ժողովրդական բաղձանքը, գեպի Հիմնադիր Ժողովը:

— Հավաստիացրեք ձեզ համար և վո՛չ բանվորներին,—գուռաց նորից Բոդինը:—Ի՞նչ գիտեք դուք բանվորներին մասին: Յես ձեզ հայտարարում եմ. գործարաններն ու գործարանային կոմիտեները ձեզ հետ չեն, այլ բայլչեիկյան կուսակցութեան հետ: Մեզ պետք չեն մենչևիկական խորհուրդները, վորոնք բուրժուազիայի փշած յեղանակով են պարում: Մեզ պետք են հեղափոխական խորհուրդներ, վորոնք հնարավորութեան կտան պրոլետարիատին իշխանութիւնն իր ձեռքն առնել:

— Ինչպե՞ս, վիրավորել խորհուրդը, գու՛րս, գու՛րս քչել տյուտեղից:

Այնքերեակայելի աղմուկ բարձրացաւ:

Լավրսկի մանուֆակտուրայի գործարկումի նախագահը գիտելով ինչ էր տաում: Գործարանները և զաւթները, գործարանային կոմիտեները, իսկապես վոր, կողմնակից ելին բուրժուական իշխանութեան տապալելուն և գնում ելին հեղափոխական կուսակցութեան—բայլչեիկներին հետևից: Դրա վարչուն ապացույցը յեղավ Պետրոգրադի գործարկումների առաջին կոնֆերենցիան, վոր գումարվեց 1917 թվի մայիսի 30-ին: Այդ կոնֆերենցիային մասնակցում ելին 421 պատգամավոր գործարաններից և զաւթո-

ներից : Ի՞նչ էլ ին խոսում նրանք : Քաղվածքներ բերենք մեր գործարկումների սկզբնավորման մասին արտասանած բանվոր ընկերներ և այդ կոնֆերենցիայի պատգամավոր Վորոնկովի ու Լևինի ճառերից :

«Իսկ ի՞նչ են ներկայացնում իրենցից այդ կոմիտեները (գործարկումները) և ինչպես սկիզբ առան նրանք : Դրանք մեր հեղափոխությունը դավակներն են, նրա արյունից ու նրա պսուղից : Փետրվարյան ու մարտյան որերին բանվորները ձգեցին գործարաններն ու փողոց դուրս յեկան, վորպեսզի միանգամ ընդմիշտ հաշիվ մաքրեն բազմազուլու հրեշի—ցարիզմի հետ : Գործարաններն ու գավոռները կանգ առան : Ապա, մի շարափ անց բանվորական մասսաները վերադարձան գործարանները : Յեկան տեսան, վոր շատ ձեռնարկներ բաղդի կամքին են թողնված : Կառավարիչները, գեներալներն, ինժեներները, տեխնիկներն ու վարպետները, վորոնք հիմք ունեյին վախենալու, թե բանվորները իրենց գործած ստորություններին համապատասխան իրենց հետ ել հաշիվ կը տեսնեն,—թողել ու փախել էլին...» (Վորոնկով) :

«Այդ գործարաններում ստիպված յեղանք գործի անցնելու տանց վարչական մարմինների : Բայց ի՞նչպես, չե՞ վոր վարչական մարմինը գործարանի աղն է, նրա շարժիչ ուժը : Յեվ ահա, գործարաններն անմիջապես ընտրեցին գործարանային կոմիտեներ, վորոնց ոչնությամբ գործարաններում և դավոռներում սկսեց վերականգնել նորմալ կյանքը : Յեվ այնտեղ, ուր առաջ կանգնած էլին կառավարիչները, ինժեներները, գեներալները (պետական գործարաններում), այժմ աշխատում էլին գործարանային կոմիտեներին անդամները» : (Լևին) :

«Այնուհետև հեղափոխությունը մտավ իր հուսի մեջ և սկսեց ընթանալ ավելի խաղաղ : Փախտականները տեսան, վոր բանվորներն այնքան ել արյունոտւշտ չեն, ինչպես իրենք էլին կարծում և սկսեցին վերադառնալ գործարանները : Նրանց մի մասին, վորոնք միանգամայն անհույս հակահեղափոխականներ էլին, բանվորները չթողեցին աշխատանքների անցնել : Մնացածներին թույլատրվեց, բայց անմիջապես նրանց հետ դրին գործարկումի անդամներին՝ վորպես ողնակներ : Յեվ այդպիսով, վաստորեն վերահսկողություն ստեղծվեց այն ամենի վրա, ինչ վոր կատարվում էր գործարանում...» (Լևին^{*)} :

^{*)} Տես՝ «Գործարկումների առաջին բանվորական կոնֆե-

կարող էր արդյոք այս ամենը դուր գալ բուրժուազիային: Ի հարկէ՝ վո՛չ: Կապիտալիստը չէր կարող հաշտվել Բուսաստանի բանվոր դասակարգի այդ առաջին փորձի հետ. մի փորձ, վերն իր արհեստակցական բջիջներին—գործարկումների միջոցով բուրժուական ձեռնարկությունների վրա յեր դնում նրանց խսկական տերերի տիրապետող ձեռքը: Յեռամյա պատերազմը ծանր աղբյուցություն էր թողել ուսական արդյունաբերության վրա. լավագույն բանվորները դռնվում էին ռազմաճակատներում, կամ թե զոհվել էին պատերազմի ընթացքում, նկատվում էր մի շարք նյութերի սակավություն, վոր առաջ ստացվում էր արտասահմանից, հնացել է չէր վերանորոգվել մեր ձեռնարկությունների կահավորումը: *)

Դրան ավելացրեք և այն, վոր բուրժուազիան, բանվորական մասսաների չըջանում հեղափոխական շարժումների աճման պատճառով դադարել էր և վերոջեց իր սարսուռի միջոցով կրկնապատկել տնտեսության զայքայտումը: Նա սկսեց փակել ձեռնարկությունները, արտադրությունից անցավ պահեստներում կուտակված ապրանքների և այլ արժեքների շահավետ սպեկուլյացիային, վոր

բնցիկան» հրատարակություն գործարկումների Կենտր. խորհրդի: Պետրոգրադ, 1918 թ.:

*) 1917 թվին արտադրության կարևորագույն ձյուղերը համեմատած 1916 թվին հետ ցածր էին 20—25 տոկոսով, իսկ 1916 թվին, իր հերթին, հետ էր մնում նախապատերազմյան չըջանից:

Պատրաստված է	1916 թվ.	1917 թվ.
Քուրածուխ	1886 միլ. փ.	1653 միլ. փ.
Չուգունի արտադրություն	232 միլ. փ.	183 . . .
Պղինձ	21 հազ. տոնն	16 հազ. տոնն
Պատրաստված է մետաղյա իրեր	206 միլ. փ.	155 միլ. փ.
Գործվածքներ	18700 հազ. փ.	15500 հազ. փ.

Առանձնապես վնասվեցին փոխադրական միջոցները, վորին նպատուեց նոր սկսած տարերային գորացրումը (այսպես, 1916 թվին ամեն մի շոգեկառքին ընկնում էր 7 «Հիվանդ», իսկ ամեն մի 100 վագոնին—3,7 անպետք. 1917 թ. «Հիվանդ» շոգեկառքեր—23,4, իսկ վագոններ—7,4):

պետդի մասսայական գործադրկութեան միջոցով բանվոր դասակարգին ստիպի գլուխ խոնարհել, չոքել իր առաջ: Յեւ գործարկումները ստիպւած են լինում հեղափոխութեան աշաւորջ պահակը դառնալ. նրանք պայքարում են այդ բոլորի դեմ, թույլ չեն տալիս, վոր արտադրութիւնը կրճատվի, հսկում են, վոր կատարվեն պատվերները, ժամանակին ստացվեն վառելանյութը, հում նյութը և այլն: Այսպիսով, Ռուսաստանի բանվոր դասակարգը, հետզհետե սուր կերպարանք ստացող դասակարգային պայքարի ընթացքում այն յեղրակացութեանն է գալիս, վոր չի կարելի սահմանափակել միայն ձեռնարկութեան ունեցւած քր պաշտպանելով, այլ անհրաժեշտ է, վոր բանվորները վճռակա՛նապէս ու արմատապէս խառնվեն ամբողջ արտադրական կյանքին: Դա պիտի սկսել բանվորական ուժեր վարձելուն և արձակելուն մասնակցելուց և ապա շարունակել, հասցնելով մինչև լիակատար հսկողութեան թե՛ տեխնիկական և թե՛ ֆինանսական ճյուղերի վրա: Բանվորական հաստատուն ու բազմակողմանի հսկողութիւն է հարկավոր արտադրութեան վրա, հակառակ դեպքում կխորտակվի բանվոր դասակարգը, կխորտակվի և հեղափոխութիւնը: Սակայն ի՞նչ անել, վոր բանվորական հսկողութիւնը իսկապէս վոր կարողանա իրեն յենթարկել բուրժուազիային: Պետրոգրադի գործարկումների կոնֆերենցիան, վորի 421 պատգամավորներից ամբողջ 335 հոգին ձայն տվին բայլչեիկյան բանաձևին, պարզ ու վորոշակի պատասխանեց այդ հարցին, թե՛ անհրաժեշտ է, վոր նախ և առաջ յերկրի տնտեսք իշխանութիւնը անցնի բանվոր դասակարգին. վոր ստեղծվի պրոլետարիատի դիկտատուրա:

Այսպիսով ուրեմն, հարցը դրված էր իր ամբողջ լայնութեամբ: Բանվորական հսկողութեան զարգացումը բնականաբար պրոլետարիատին տանում էր դեպի նրա հիմնական նպատակը՝ այն է՝ խորտակել կապիտալի ինքնակալութիւնը յերկրում և գործարանում, կործանել կապիտալիստական հասարակարգը և հիմնել Խորհուրդների իշխանութիւնը^{*)}:

*) Մանրամասնորեն բերենք բանվորական վերահսկողութեան ծրագրի հիմնական կետերը, վոր հաստատւած են Պետրոգրադի կոնֆերենցիայում.

ա) Բանվորական վերահսկողութիւնը պիտի զարգացնէ արտադրութեան լիակատար կարգավորման և արդյունքը բաշխելու համար:

Միանգամայն հասկանալի չե ուրեմն, թե ինչու մենչեիկները կապիտալի այդ համատարիմ արբանյակները, դործարկումների կոնֆերենցիայում կատաղի պայքար էյին մղում բանվորական վերափոխության գաղափարի դեմ: Նրանք ամեն կողմից գովաբանում էյին Կերենսկու կառավարութիւնը և առաջարկում էյին արտադրութիւն վերահսկողութիւնը հանձնել պետական պաշտոնյաներին, մտցնել պետական վերահսկողութիւն: Բայց ո՞վ պիտի իրադրծեր պետական վերահսկողութիւնը, Կերենսկու կառավարութիւնը, այսինքն նույն դործարանատերերի ու կապիտալիստների կառավարութիւնը—իրենց սպասավորներին՝ մենչեիկների ու եսերների հետ: Բանից դուրս եր գալիս, վոր կապիտալիստները իրենք իրենց պիտի վերահսկեն (ստուգեն կատարած աշխատանքը): Սակայն դործարկումների կոնֆերենցիայում պետական վերահսկողութիւն գաղափարը տապալելից, բանվորները մենչեիկների յարած թակարդի մեջ չնկան:

Սոց.—դեմոկրատական (բայլչեիկների) կուսակցութիւն համառոտական Եւրոպ համագումարում հաստատուեցին Պետրոգրադի դործարկումների կոնֆերենցիայի վորոշումները բանվորական վերահսկողութիւն մասին և պրոլետարիատի մարտական ծրագիրը դարձան: Մոտենում եր վճռական բաղխումը կապիտալի հետ: Դատակարգը դասակարգի դեմ եր կանգնել: Բուրժուազիան հակացալ, թե ինչպիսի խոշոր վտանգ և սպառնում իրեն դործարկումների հեղափոխական շարժումից և կատաղի հարձակում սկսեց նրա դեմ: Զբաղականանալով այն վայնասունով, վոր բարձրացրին նրանք, թե իրր դործարկումների արտադրութիւն մեջ

բ) Բանվորական վերահսկողութիւնը պիտի շարունակվի ամբողջ ֆինանսական և բանկային դործարքի ընթացքում:

գ) խոշոր կապիտալիստական տնտեսութիւն ունեցվածքի յեկամուտի ոգուտների մեծ մասը բանվորներին անցնելը:

դ) Գյուղատնտեսական դործիքներ և մեքենաների ու գյուղ-մթերքների կոոպերացիայի միջոցով:

ե) Ընդհանուր աշխատանքային տարապարհակի իրականացումը, բանվորական միլիցիա ստեղծելը:

զ) Բանվորական ուժի փոխադրումը ածուխի հում նյութի և տրանսպորտի աշխատանքների մեջ, տնտեսութիւն վերականգնման արդյունքներ պատրաստելու:

է) Իշխանութիւնը խորհուրդներին անցնումը:

խառնվելը ավելի յե ուժեղացնում քայքայումը, արդյունաբերող-ներին խոչոր միավորումները (Ուրալցիները, մետաղաարդունարե-րողները, կենտրոնական չրջանի միացյալ տեկստիլ արդյունա-բերության միությունը, հարավ Ռուսաստանի ածխարդյունաբե-րողները և այլն) բացահայտ պայքար են սկսում՝ վոջնչացնելու գործարկումները: Ժամանակավոր կառավարությունը ամեն կերպ ունում և կապիտալիստներին: Դեռևս 1917 թվի ապրիլի 23-ին նա մի որենք և հրատարակում գործարկումների մասին: Բայց ի՞նչ որենք էր այդ. հենց գործարկումների կազմակերպումը այդ որենքով պարտադիր չէր համարվում, իբր թե դա բանվորների ու գործարանի վարչության «համաձայնության» գործն և: Այդ որենքում մի խոսք անգամ չէր ասված այն մասին, թե գործար-կումները իրավունք ունեն խառնվելու բանվորներ վարձելու և ար-ձակելու խնդիրներին: Գործարկումների ու գործար. վարչություն-ների փոխհարաբերության բոլոր հարցերը, ընտրվածներին աշ-խատանքներից ազատելու կարգն ու պայմանները, ընտրություն-ների ժամանակն ու տեղը—այդ բոլորը թողնված էր նույն «կող-մերի համաձայնությանը»: Գործարկումների ազատված անգամ-ներին վարձատրելու մասին, ի հարկե, ծպտուն անգամ չկար: Այսպիսով այդ որենքը ամենալայն սահմաններն էր ավել վար-չության կամայականությանը գործարկումների նկատմամբ, իսկ գործարկումի վրա ու ձևով, ընդհանրապես, կաշկանդել էր: Սա-կայն ռուսական բանվոր դասակարգը ինքը խորտակեց այդ կա-պանքները, ու հեղափոխական ուղիով դիմեց զեպի իր նպա-տակները:

Դժվար էր այդ հանապարհը: Դեռ փոփոցներում չէին դա-դարել հրացանաձգությունները, վոր հետեանք էր Պիտերի բռն-վորների առաջին տարերային բռնկման ակիքների կերենսկու կա-ռավարության դեմ, յերբ նույն այդ ժամանակ Պիտերում գու-մարված Արհմիությունների 3-րդ համառուսական կոնֆերենցի-ան իր մենչեիկյան մեծամասնության բերանով լիակատար վստա-հություն հայտնեց կերենսկու կառավարությանը: Այդ կոնֆե-րենցիան բացասեց բանվորական վերահսկողությունը և արտա-հայտվեց հոգուտ «պետականի»: Այսպիսով, միությունների մեն-չեիկյան վերին շերտերը մի անգամ ևս աստացուցեցին, վոր նրանք ձգաում են կանոնեցներ ու հետ դարձնել հեղափոխական բնթոցոր

և մեր արհմիությունները կապիտալիստական կարգերի ամրապնդման համար մի զենք դարձնել:

Այսպիսով, 1917 թվին, Ռուսաստանի արհեստակցական շարժումը բաժանվում է յերկուսի. մի կողմից մենչևիկյան արհմիությունները (ավելի ճիշտ, նրանց վերին շերտերն ու կենտրոնական բյուրոն), իսկ մյուս կողմից՝ միություններից կտրված բայլչևիկյան գործարկումներն ու նրանց միությունները — գործարկումների խորհուրդները: Գործարկումների խորհուրդներն ավելի ազդեցիկ ու հաստատուն կազմակերպություններ հանդիսացան, քան թե միությունների կենտրոնական բյուրոները: Կենտրոնական բյուրոները նույնիսկ սեփական միջոցներ չունեին և իրենց գոյությունը բարձր էյին տալիս մեծ մասամբ պատահական յեկամուտներով ու նպաստներով, այնինչ գործարկումների խորհուրդները իրենց տրամադրության տակ բավական խոշոր գումարներ ունեին, վոր ստացվում էին գործարկումներից, վորպես տոկոսային հատկացում: Բանվորական մասսան հասունանալ էր սկսել: Անշան երայն մեծամասնությունը, վոր ունեին մենչևիկները Յ-րդ Համառուսական կոնֆերենցիայի ժամանակ. նրանց հետևից գնում էին անդիտակից բանվորները, գլխավորապես վոչ արդյունաբերական կենտրոններից, կիսա-արհեստավոր բանվորներն ու ծառայողները: Ընդհակառակը, խոշորագույն միությունները—մետաղագործները, մանածագործները, բանվորական չարժան ամենախոշոր կենտրոնները (Պետրոգրադ, Մոսկվա, Իվանո-Վադենսենկ) արդեն ամբողջովին ձայն էյին տալիս հոգուտ բայլչևիկներին:

Ռուսաստանի արհշարժումը աճում էր անսովոր արագությամբ: Յերրորդ Կոնֆերենցիան համախմբում էր արդեն 967 միություններ, 51 կենտ. բյուրոներ և 1,475,729 հոգի: Այս նշանակում է, վոր 1917 թվի 4 սոկտեմբերի ընթացքում մեր միությունը 6 անգամ ավելի մասսա յեր ընդգրկել է քան 1906 թվին: Սակայն այդ էլ դեռ անբավարար էր. միությունների մեջ կազմակերպված էյին բանվորների 25 տոկոսից վոչ ավելին: Բացի այդ, համարյա վոչ մի միություն (բացառությամբ կաչևգործների ու թղթագործների) դեռ չէր կարողացել ամբողջ Ռուսաստանի իր բոլոր անդամներին միացնել ու ստեղծել իր Համառուսական կենտրոնը—Կենտրոնական Կոմիտեն: Համենայն դեպս, մենչևիկյան յերրորդ համառուսական կոնֆերենցիան կարևոր դեր խաղաց. նա յեր կարող հաշվի չառնել

պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային պայքարի օր-
րումը, ուստի նկատեց, վոր Ռուսաստանի բանվորները բուրժու-
ազիային հաղթահարել կարող են այն դեպքում միայն, յերբ մո-
ռացության կտան համըարային բաժանումները և մանր համըարա-
յին արհմիությունների փոխարեն կտեղծեն ամբողջով միություն-
ներ ըստ արտադրությունների: Յերրորդ կոնֆերենցիան մի ուրիշ
կարևոր վորոշում ել ընդունեց. նա ընտրեց Համառուսական Արհես-
տակցական Միությունների Կենտրոնական Խորհուրդ—ՀԱՄԿԽ, վոր
համառուսական արհեստակցական շարժման միակ կենտրոնն է:
Ճիշտ է, այդ խորհրդի նախագահության Գ անդամներից 4-ն եյին
բայելեիկներ, իսկ 5-ը մենչեիկ եյին, վերջիններս, իհարկե, ամ-
մբողջ ՀԱՄԿԽ-ը իրենց համաձայնողական ճահիճի մեջ եյին քա-
շում: Դրան պիտի ավելացնել և այն, վոր այդ չըջանի ՀԱՄԿԽ-ն
այն ձևով եր կազմակերպված, վոր նրա մեջ եյին մտնում գլխավո-
րապես տեղերի ներկայացուցիչները, ուստի գործնական աշխա-
տանքներ տանելու համար (նիստեր և այլն) ամեն անգամ ստիպված
եյին անդամներին հրավիրել Սիբիրից, Կովկասից, Ուկրաինայից,
Արևմտահայկից, Կենտր. Ռուսաստանից և այլն, վորն, իհարկե,
անիրագործելի յեր: Բացի այդ ՀԱՄԿԽ-ը. չեր կարող հարկավոր
չափով ղեկավարել Ռուսաստանի արհշարժումը նաև այն պատճառ-
ով, վոր Արհմիությունների Յերրորդ Համառուսական կոնֆերեն-
ցիան նրան չեր տվել այդ իրավունքը: Այսպիսով, 1917 թվին Ռու-
սաստանի արհշարժումը դեռևս չունի իր իսկական ղեկավար կեն-
տրոնը: Առաջին գումարման ՀԱՄԿԽ-ը զբաղվում է կողմնակի խոն-
դիրներով, կապ է պահում արհ-կազմակերպությունների միջև,
հրահանգներ և տալիս նրանց, նրանց ներկայացուցիչն է հանդի-
սանում, բայց չի ղեկավարում:

1917 թվին կեսից Ռուսաստանի բանվոր դասակարգը, իր հե-
ղափոխական գործարկումների միջոցով և իր առաջնորդ բայելեիկ-
յան կուսակցության ղեկավարությամբ, ավելի ու ավելի համա-
խմբելով ու պողպատելով իր ուժերը՝ վճռական կռիվների յեր
պատրաստվում բուրժուազիայի դեմ: Սակայն ռեակցիան ել քնած
չեր: Պիտերի պրոլետարիատի հուլիսյան յեկույթի պարտությու-
նից հետո հակահեղափոխությունը գլուխ և բարձրացնում: Ժամա-
նակավոր կառավարության բարենհաճ մասնակցությամբ կատաղի
հարձակումներ են սկսվում բայելեիկների դեմ: Իսկական պատ-
ժիշ գործախմբեր են ուղարկվում գյուղացիության դեմ, վորն ար-

դեն սկսեւ եր բացահայտ կերպով վճռել հողային հարցը և իր ձեռքն առնել կալվածատերերի հողերը: Յերկրի ծայրամասերում խոհական ցարական քաղաքականութիւն և տարվում. ցրվում և ֆինլանդական սեյմը, Ուկրաինան հեղեղվում և զորքերով: Փորձեր և արվում փոթորկված զորքի մեջ նորից վերականգնել «յերկաթի դիպցիպլինան», նորից մտցվում և մահվան պատիժը, մի խոսքով, ամեն ինչ արվում և, վորպեսզի հեղափոխական ղեկավորին—բանվորին ու գյուղացուն նորից թնդանոթի անլեզու միս դարձնեն իմպերիալիստական սպանդանոցի համար: Պետական հակահեղափոխական խորհրդակցութիւնից հետո (1917 թ. ոգոստոսին) վաղուց ի վեր նախապատրաստովոյ բուրժուազիայի հարձակումը ծավալվում և լայն ճակատներում: Անողորմ էր պայքարը մանավանդ այն պատճառով, վոր նրա ղեկավարները դործարանատերերի հըզոր միավորումներն էյին: Զեռնարկատերերի միավորումների նույն ոգոստոսի կոնֆերենցիայում կազմակերպվեց «Գործարանատերերի Համառուսական միութիւնը», վորի մեջ մտնում էյին 2000 ձեռնարկութիւն, 1.500.000 բանվորներով:

Ինչ էյին ցանկանում արդյունաբերողները: Այդ բանը, իրենց համադումարներից մեկում բացարձակ կերպով հայտարարեց խոշորագույն կապիտալիստներից մեկը՝ Բյաբուչինսկին. «Կարող և պատահել,—ասաց նա,—վոր այս գրութիւնից դուրս գալու համար հարկավոր լինի սովի փոսկրոտ ձեռքը, ժողովրդական թշվառութիւնները, վորը կրտնի ժողովրդի կեղծ բարեկամների—դեմոկրատական խորհուրդների ու կոմիտեների բկից»: Այդ նշանակում էր գիտակցորեն կազմալուծում մտցնել արտագրութիւնի մեջ ու քայքայել այն: Սակայն կապիտալիստների ճանապարհին բուսել էյին դործարանային կոմիտեները: Յեւ հենց նրանց վիճակվեց իրենց վրա կրել ռեակցիայի հարվածների ամբողջ ծանրութիւնը: Ոգոստոսին խոշոր քնդհարում տեղի ունեցաւ կաշեգործարանների սինդիկատի ու Մոսկովայի կաշեգործների միութիւնի միջև: Բանվորական անողոք պայքարի ու կորնիլովչինայի յետուն չըջանում աշխատանքի մինիստր Սկորելնիվը պրոփակացիոն հրաման և տալիս, վորով սպառնում էր քրեական հետապնդման յենթարկել այն դործարկումներին, վորոնք կխառնվեն բանվորներին վարձելու և արձակելու աշխատանքներին:

Ընդհարումը հետեւում և քնդհարումներին: Բացի կաշեգործներից, այդ քնդհարումներին միանում են և իվանո-վադնսենսկի չըջանի մանածագործները լայն մասսաները, Դոնի ավազանի

լեռնագործ բանվորները և այլն: Միաժամանակ աճում և ձեռնարկատերերի լայն ու ծրագրված սարսուռաժը: Առանձին ձեռնարկությունները փակվելուց հետո (Լիկինսի մանուֆակտուրան) ձեռնարկատերերի միությունը ձեռնամուխ և լինում կանգնեցնելու ամբողջ Մոսկովյան շրջանի տեկտիկ արդյունաբերությունը: Յերբայդ ևլ միանգամից ցանկացած հետևանքը չի տալիս, այն ժամանակ սարսուռաժի գլխավոր հարվածն ուղղվում և «համառուսական հնոցի»՝ Դոնի ավազանի վրա:

Սև հարյուրակային դործիչները (Ֆոն-Դիտմարը, Սվիշչինը—դենեքալ Կալեդինի սժանդակությամբ) մոռոզում են Դոնի ավազանի չախտերն ու հանքահորերը: Ռուսաստանի ժողովրդական տնտեսությանը լիակատար քայքայման վտանգն և սպառնում, իսկ ժամանակավոր կառավարությունը կողակների զնդեր և ուղարկում այս մութ արարքներից հուզված բանվորների դեմ:

Դործարանային կոմիտեները ամբողջ ժամանակ սոցիալական պայքարի մեջ են: Նրանք դառնում են գործադուլային կոմիտեներ և ամեն տեղ, ուր ուղղվում են կապիտալիստների հարվածները, նրանք հայտարարում ու կազմակերպում են պատասխան—գործադուլներ: Նրանք անհրաժեշտ միջոցներ են հավաքում և համախմբում են բանվորներին հետագա պայքարի համար: Բուրժուազիայի հարձակումը բանվոր պատակներդի վրա, հակահեղափոխական ուժերի բացահայտ գործունեությունը (Կորնիլովչիկնա, Կալեդինչիկնա) այս ամենը հասունացնում, գիտակցության և բերում բանվորական լայն մասսաներին: Պարզվում և վոր մի բանվորական վերահսկողության և վոչ մի սոցիալիզմի մոտենալու մասին խոսք անելամ չի կարող լինել, քանի վոր չի տապալված բուրժուազիայի իշխանությունը և չի հաստատված բանվորների ու աղքատ գյուղացիների դիկտատուրա: Պետական խորհրդակցության և սոցիալ-դավաճանների ու բուրժուազիայի յեղաքարացման կոմեդիային Մոսկվայի Արհմիությունների Խորհուրդը գործադուլով պատասխանեց: Կորնիլովչիկնայի շրջանում Պետրոգրադի և Մոսկվայի Լեհմիությունների Խորհուրդները, ինչպես և մի շարք խոչորագույն արհեստակցական կազմակերպություններ վճռականորեն կողմնակից են դառնում հեղաշրջման և պրոլետարիատի գիկտատուրա հաստատելու ղաղավորին: Համադեմոկրատական խորհրդակցությունը (1917 թ. սեպտեմբեր) արհմիությունները նույն այդ պահանջն են դնում իրենց 9/10-մաս կազմող պատգամավորների միջոցով, մորոնք ներկայացուցիչներ էին 1,893,100 մարդու կող-

մից: Արհմիությունների պատգամավորների 70 տոկոսն այդ ժամանակ արդեն պատկանում էին բալլչեիկյան կուսակցությանը:

Գործարանային կոմիտեները անդադար հուզմունքներ, խռովություններ են հաղորդում: Հոկտեմբերի նախորդակին գումարված գործարկումների Համապետական կոնֆերենցիան «Տեղափոխության ու ժողովրդի մահացու վտանգի մոմենտին» հայտարարում է. «Տեղափոխության փրկությունն ու աշխատավոր մասսաների առաջադրած նպատակներին հասնելու ճանապարհն այն է, վոր իշխանությունն անցնի բանվորական, գյուղացիական և զինվորական պատգամավորների ձեռքը»:

Ահեղ վտանգի առաջ կանգնած բանվոր դասակարգն ավելի խիտ է համախմբվում իր փորձված առաջապահի—Տեղափոխական բալլչեիկյան կուսակցության շուրջը՝ «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լողունգի տակ: Հեղափոխական գործարկումները ճշտորեն են արտացոլում գործարանային շարժախի բանվորների տրամադրությունները: Նրանք ստեղծում են բանվորական մարտական կարմիր զվարդիական միավորներ, զինում են նրանց, կադմակերպում, կոչեր են տարածում, գումարում են միախնդներ, ամեն անհրաժեշտ պատրաստություն տեսնում են վճռական ընդհարման համար: Գործարկումների Համառուսական կոնֆերենցիայում քննարկված Կենտրոնական խորհուրդը Հոկտեմբեր կազմակերպող կենտրոններից մեկն է դառնում:

Նույն այդ ժամանակում խոշորագույն արդյունաբերական կենտրոնների բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներում բալլչեիկները ճնշող մեծամասնություն են գրավում: Բալլչեիկյան դարձավ և Բ. քաղաքի խորհուրդը: Որստորև ամրապնդում էր Տեղափոխական միջոցառը: Մոտենում էր հանգույցը: Միությունները մեկը մյուսի հետևից (մեծագործները, մանածագործները և այլն) իրենց կոնֆերանսներում հայտարարում էին, վոր բանվորական պատգամավորների խորհուրդների տրամադրության տակ են գնում իրենց բոլոր միջոցները, ամբողջ ապագաւար, իրենց ամբողջ կազմը, վորպեսզի անմիջապես զինված ապստամբություն կազմակերպվի, ազդայնացվի արդյունաբերությունը և ամբողջ իշխանությունը հանձնվի խորհուրդներին: Լավրովսկի մանուֆակտուրայի չերկարատև գործադուլից հետո գործարկումը, կարմիր զվարդիայի աշակցությամբ, պարզապես խից ձեռնարկությունն ու գուրս քչեց ակե-

բերին: Նույնպիսի տարերային դրամումներ տեղի ելին ունենում և մետադարձը յունաբերության մէջ:

Ծագեց Հոկտեմբերը: Ռուսաստանի արհմիութիւնները, ի դեմս իրենց գործարանային կոմիտեները, կոչում ելին հոկտեմբերյան բարրիկադները վրա, առաջին շարքերում, բայելչելով դրոշի տակ, վերադադրի հետո, Ռուսաստանի Սորհրդային իշխանության գոյութեան հենց առաջին օրերից, ինչպես ասում են, «գլխովին» նետվեն սոցիալիստական շինարարութեան ասպարեզը:

ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒ-
ՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ
(1918 թ. — 1921 թ.)

Հաղթական Հոկտեմբերյան հեղափոխութեան հենց միշտ օրինից Ռուսաստանի պրոլետարիատը ձեռք զարկեց ստեղծագործական աշխատանքին, աշխարհիս յերեսին առաջին Սոցիալիստական Սորհրդ. Ֆեդերատիվ Հանրապետութեան կառուցմանը: Այդ աշխատանքն ընթանում եր անյերեակայելի ծանր պայմաններում: Ռուսաստանի բուրժուազիան—գործարանատերերը, կալվածատերերը, կուլակներն ու սպաները, վորոնց բիւն չօքել եր արդեն բանվոր դասակարգը, ամեն տեսակ ոգնութիւն ստանալով արտասահմանի գործարանատերերից՝ կյանքի և մահու կատաղի պայքար ելին մղում աշխատավորական իշխանութեան դէմ: Քաղաքացիական պատերազմը, ներքին ու արտաքին հակահեղափոխութեան գրոհն ու բլրկադան կրկնապատկում ելին քաղցն ու յերկրի քայքայվածութիւնը:

Այս ամենը շատ լավ եր տեսնում Պյոտր Նաղարովը, վոր 1919 թվի մարտին վերադարձավ գերմանական գերութիւնից՝ մի ուշացած խմբի հետ: Վառելանյութը չէր բավականանում, ուստի գընացքներ շատ սակավ ելին դնում և այն ել չափազանց ծանրաբեռնված ու բոլոր կողմերից կախված «տոպրակավորներով» (мешочники): Մարդիկ գնում ելին տեղավորված սանդուխները վրա, բուֆերում, տանիքի վրա: Նաղարովը ստիպված յեղավ մի կանոնավոր կոխով սարքել, մինչև վոր վերջապես մի կերպ կարողացավ խցկվել ապրանքատար վաղոնը: Կայարաններում գնացքը կանգնում եր ժամերով, իսկ յերբմէն ել որբերով: Ամեն կայարանում վաղոններից դուրս ելին բերում 3—4 գիակ. ախֆն իր առատ հունձն եր անում: Տասն և չորս տանջալից օրերից հետ միայն վերջապես Նաղարովը մտավ Լավրոսկի մա-

նուֆակտուրի բակը, այն ձեռնարկութան, ուր նա աշխատել էր ամբողջ 6 տարի՝ մինչև 1914 թվի զորահավաքը: Ամեն ինչ կարծես հինն էր: Գործարանի շենքերի պատերը միայն կարծես կեղտոտվել ու սևացել էին: Ձախակողմի պատը լուռ էր ու տխուր, բակում անխնամ թափթփված էյին փայտի կույտեր իսկ «գործարանի գերեզմանատունը» — այսինքն բակի այն ազատ տեղը, ուր թափում էյին մաշված ու դարձածության համար անպետք մեքենաների մասերը, ձեղքված կաթսաները և այլն, այդ տեղը լայնացել ու բարձրացել էր:

Գործարանային կոմիտեյում, վոր տեղավորված էր նախկին գրասենյակում, իսկ այժմյան «Լենինի անվան պետական № 2 տեկստիլ գործարան»-ի գրասենյակի սենյակներից մեկում, այնքան շատ մարդ կար, վոր անցնելու հնար չկար: Անդադար ներս ու դուրս էյին անում մարդիկ՝ կապույտ բլուզով, կաշվե բաձկոնով, խայտում էյին բանվորուհիների գունավոր թաշկինակները, իսկ ուղում տիրում էր բացականչությունների խառնաչփոթ ժխորը, ծխախոտի թանձր ծուխը և անդադար հնչող հեռախոսի զանգի աղմուկը: Գործարկումի նախագահը — կորացած, չսպիրված, չըջապատող բազմության մեջ ճնշված՝ բառիս բուն իմաստով տրաքվում էր միջից:

— Ընկեր Րոզին, վառելանյութը կրկին խափանվել և, գործարանային վարչությունը ձեզ շտապ խորհրդակցության ե հրավիրում:

— Ընկեր Րոզին, համաձայն «Ա» լիտերի մթերափայլը հաջողվեց լիովին ստանալ: Անցյալ անգամ գործվածքային բաժնին լրիվ բաժին չհասավ, հիմա ինչպե՞ս անենք, նրանց բաժինը լրացնե՞նք, թե վոչ:

— Ընկեր Րոզին, ինչո՞ւ մինչև այժմ արտ-հազուստ չի ստացվել:

Նազարովն ուրախացավ. Րոզինը նրա հին ընկերն էր, վորի հետ միևնույն բաժանմունքում նա չորս տարի շարունակ աշխատել էր ձեռք-ձեռքի տված: Նա սկսեց մեծ դժվարությամբ առաջ շարժվել դեպի Րոզինի սեղանը:

Հեռախոսը զանգահարեց: Րոզինը թեքվեց դեպի հեռախոսափողը:

— Լսում եմ... հա, յես եմ, Րոզինը... վորտեղից ե... նա՛հ — պարենկոմից... Յերեկ պարենխմբի համար 40 հոգի յենք տվել

... Հա, այսոր... Ի՞նչ, քի՞չ ե... Կարող եմ ելլի 20 հոգի ուղարկել... Նրանցից կոմունիստ են 5-ը... Հը՞... Կփորձեմ, գուցե հաջողվի... Լավ... Շատ լավ...

Նա գիծը բաժանելու ազդանշանը տվեց և ուղղվեց։ Նաղարովը կանգնած եր նրա մոտ։

— Ի՞նչ կա, ընկեր։

— Ինձ չե՞ս ճանաչում, Բողին։

Նա, հիշողությունը լարելուց ճակատը փոքր ինչ կնճռոտած, սկսեց դննել անձանոթին և հանկարծ նրա դեմքը փախվեց ու աչքերում մի անուշ ժպիտ սկսեց խաղալ։

— Նաղարով, սիրելիս, եղ ինչպե՞ս ընկար ևստեղ։ Այ թե փոխվել ես հա՛...

— Ընկեր Բողին, հինգ բաղեյից հետո սկսվում է բջիջի արտակարգ նիստը...

— Լավ, գալիս եմ։ Գիտե՞ս ինչ, թանկազին Նաղարով, այժմ ինքդ ել տեսնում ես, վոր մո՞չ մի վարկյան ազատ ժամանակ չուրեմ։ Ավելի լավ է, այսոր յերեկոյան անցիր ինձ մոտ, մի կերպ մի յերկու ժամ կդանեմ քեզ հետ զրուցելու։ Գիտե՞ս վորտեղ եմ։ Կգաս յերկրորդ շենքը, դեպի աջ։

Նույն յերեկոյան փոքրիկ և ցածրիկ, ազգատ կահավորությամբ սենյակում, մազալի մոտ, տաբուրետների վրա նստած՝ տաքանում ու զրույց էլին անում յերկու ընկերները։ Մաղալից ուժեղ տաքություն եր բարձրանում և Նաղարովն աշխատում եր հետ քաշել իր աջ վոտքը, վորի մատները ճանապարհին սառել էլին ցրտից։

— Զարմանալի չե, չատ զարմանալի,—ասում եր նա—ով կարող եր հավատալ այս բոլորին։ Քեզնից վոր բաժանվեցի, անցնում էլի միջանցքով. նայում եմ, դեմս և գալիս Սերյոժան, վոստոյնագործ Սերյոժան, վոր քեզ հետ միասին կոսակցության մեջ եր։ Ճանաչեց, բարեկեցի։ «Յես, ասում է,—կոգնեմ, վոր դու տեղավորվես, Բողինի հետ կանենք այդ, նա վորպես գործարկում, իսկ յես,— ասում է,— ինչպես գործարանի տեսուչ»։ Յես նույնիսկ ցնցվեցի այդ բանից։ Ինքս, իմ աչքերով տեսա—Սերյոժան, մեր բանվորը տեսուչ։ Յեվ գործարանն էլ մե՛րն և յրանվորական և յսկորիկա տիրոջ հետքն էլ չկա... Գերմանիայում, գերության մեջ էլ մեկ ասում էլին այս բոլորի մասին, Սպարտակցիներն էլին ասում, բայց դե չատ անգամ չէլինը հավատում։ Հաղար մարդ եր ոչու-

մում, ամեն մեկը իր ձեռով: Կամ հենց դու գործարկում նո, միություն, իսկ այստեղ տղաներն ասում են, վոր մեզ մոտ—Սորհըրդային Ռուսաստանում միությունները մեծ ուժ են: Իսկ յես ուզդակի շփոթվել եմ, ինչքս չի հասնում: Մի տեղ տեսնում ես քաղց, ցուրտ, գնացքները շարաններով են շարվում, գյուղացիները հայհոյում են «կոմունան», իսկ մյուս կողմից բանվորական իշխանություն է, գործարաններն ու գալուղներն էլ բանվորական, և բանվորական միություններ կան . . .

Բողիկը ժպտաց, գրպանից հանեց իր չիրուխը, ծխախոտ լըցրեց, վառեց, մի քիչ ծխեց ու տվեց Նազարովին:

— Այ ինչ, սիրելիս—ասաց նա—ինչ վոր դու լսել ես սպարտակյաններից՝ կատարյալ ճշմարտություն է: Մեզ մոտ—Ռուսաստանում բանվորա-գյուղացիական Սորհըրդային իշխանություն է: Գործարաններն ու գալուղները պատկանում են բանվորական պետությանը, հողը խլված է կապիտալիստներից ու տրված է աշխատավոր գյուղացիներին: Նշանակում է մենք սոցիալիստական արտադրություն ունենք: Սակայն մենք մտցրինք նաև սոցիալիստական բաշխում, ինդուստրիալ ազատ շուկան, մասնավոր մանր ու խոշոր խանութները փակեցինք, իսկ բոլոր առաջին անհրաժեշտության մթերքներն ու առարկաները բաշխում ենք աշխատավորներին Պանավորման Ժողովրդական Կոմիսարիատի միջոցով:

— Իսկ մո՞րակից եք ձևոք բերում այդ մթերքները:

— Գյուղից, պարեն-մասնատրման միջոցով: Մենք գյուղացուն թողնում ենք այնքան ալյուր, հացահատիկ և այլն, ինչքան վոր հարկավոր է իրեն և իր ընտանիքին կերակրելու համար, անասուններին կերակրելու և ցանելու համար, իսկ մնացածն ամբողջովին տրվում է Պարենավորման Ժողովրդական Կոմիսարիատին:

— Այդ ինչպե՞ս. յեթե գյուղացուց վերցնեք ամբողջ ամեյցուկը, դրանից հո՞նքա տնտեսությունը կբալբայվի և ցանքսերն էլ կփչանան: Գյուղացին կմտածի, թե «ինչի՞ համար վարեմ, ցանեմ, չարչարվեմ, վոր քաղաքից գան ու ամբողջ ամեյցուկը վերցրեն: Ալեի՛ր լավ է այնքան կցանեմ, ինչքան ինձ պետք է»:

— Այդ ինքներս էլ գիտենք, Նազարով, պարեն-մասնատրումը ծանր միջոց է, բայց ժամանակավորապես անհրաժեշտ է: Յերեխի դու արդեն լսել ես, վոր արտասահմանյան բանկիրները մեզ վրա բաց են թողել իրենց շներին—վոսկե ուսադիրավորներին, սպաներին ու գեներավորներին: Ամբողջ կապիտալիստական Յեվրոպան

սոցալազիւնով եւ մեր դեմ, վոր համարձակվել ենք տապալել բուր-
ժուազիայի լուծը: Նրանք ուզում են հաղթահարել մեզ ուժասպառ
անելով, բոկադայի յենթարկելով, դեսաններ են հանում Ար-
խանգեյսկում, Ադեսայում, անդլիական ու Ֆրանսիական վոս-
կով եյնի զինվել ու հաղնվել Կրասնովը, Կալեդինը, այժմ—Դենի-
կինը, Կոլչակը, Յուդենիչը: Մենք պետք է վերջին ուժերը լա-
րենք այդ սև վոհմակի դեմ: Յեւ վատ սլարդ եւ, վոր ռազմաճա-
կատները թույլ չեն տալիս մեզ, ինչպես հարկն եւ, զբաղվել տըն-
տեսական ճակատի սլաքարով: Քաղաքացիական կռիւի մեջ փշա-
նում են մեր փոխադրական միջոցները, չի բավականանում հում
նյութը, վառելանյութը, բոկադան խեղդել եւ մեզ: Իհարկե
մենք չենք կարող, մեր քայքայված անտեսությունը թույլ չի
տալիս, վոր վերցրած հացի փոխարեն գլուղին տանք նրան ան-
հրաժեշտ քանակութեամբ ապրանքներ: Բայց դե, հո հարկավոր
ե կերակրել մեր Կարմիր բանակը, հարկավոր ե կերակրել մեր
քաղաքները, մեր պրոլետարական կենտրոնները, գործարաններն
ու զավոդները, վորոնք մահուդ, կաշի, հրացան, փամփուշտ,
դնդաղիք են պատրաստում, վորպեսզի հազցնենք ու զինենք մեր
Կարմիր հերոսներին: Յեթե ալդպես չարվի—կջախջախեն մեր
դորքին, արյան մեջ կխեղդեն հեղափոխությունը ե ո՞վ այն
ժամանակ կփոխարինի խորհուրդներին. իհարկե ցարական զե-
նեքալները, կալվածատերերը, կապիտալիստները: Գլուղը կուղի՞
վոր ալդպես լինի. իհարկե չի ուղի, բացառութեամբ կուլակների
—Պորհրդային իշխանութեան զազազած թշնամիներ: Ահա թե
ինչու մենք պարեն-մասնատրումը մտցրինք ե գլուղացիությունը
կատարում ե, մեծ պահարկություններ ե անում, գիտակցելով,
վոր ինքը չի կարող հաղթահարել կալվածատերերին, սոտանց
բանվոր դատակարգի հետ ռազմա-քաղաքական միություն ստեղ-
ծելու:

— Իսկ ինչ են անում արհմիությունները:

— Այժմ հենց այդ հարցին ենք մոտենում: Բանվոր դասա-
կարգը ջախջախեց բուրժուազիային ե իշխանությունն իր ձեռքն
տոալ: Այժմ նա պիտի կառուցի իր սոցիալիստական պետու-
թյունը—աշխատավորական պետությունը: Բայց ինչքան զժվար
ու աներեակայելի ծանր ե այդ: Մենք պիտի հաղթենք, ինչ զնով
եւ լինի, պիտի հաղթենք վոչ միայն ռազմական կարմիր ճակա-
տում, այլ ե անտեսական ու պարենավորման ճակատներում:

Ռուսաստանի բանվոր դասակարգը իր հուսալի առաջնորդն ունի. դա մեր Կոմունիստական կուսակցությունն է: Բայց առաջնորդին մշտական բանակ է հարկավոր, կուսակցությունն իր հետեւից պիտի քաշի աշխատավորական լայն մասսաներին, պիտի համախմբի, միաձուլի նրանց, յերկիրն ու խորհրդային շինարարությունը պաշտպանելու համար: Ահա հենց այդ խնդիրները կուսակցությունը իրագործում է մեր կարմիր արհմիությունների միջոցով:

— Ի՞նչ են ուզում մեր միությունները: Յեթե մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանք ձգտում էին նախ և առաջ տապալել բուրժուական պետությունը, ապա այժմ, պրոլետարիատի ղեկատարության շրջանում նրանց հիմնական նպատակն է. վորքան հնարավոր է ամրացնել իրենց արյունով ձեռք բերած բանվորական պետությունը, պաշտպանել այդ պետությունը բոլոր վտանգներից ու բարձրացնել նրա կարողությունները: Ռազմական առաջնակարգ ճակատում մեր միությունները միշտ առաջին շարքերումն են: 1917 թվին նրանք քաղաքներում կազմակերպեցին գործարանային Կարմիր Գվարդիա, վորը վճռական դեր խաղաց սոցիալական հեղափոխության հաղթանակի գործում: Իսկ ներկայումս նույն միությունների ուժերով, գործարանային պրոլետարիատի յեփփած շարքերից կազմվում է մեր պանծալի Կարմիր բանակի հիմնական կորիզը: Նախապատերզմյան շրջանում մեր գործարանում 4000 բանվոր էր աշխատում: Այժմ մենք դեփարությունների առաջ ենք կանգնած: Հում նյութի ու վառելանյութի սակավության պատճառով ստիպված ենք փակել մի շարք բաժանմունքներ: Անցյալ տարվա վերջին բանվորների թիվը պակասեց մոտ 2000-ով, վորոնցից 500 հոգի ուղարկեցինք կարմիր ռազմաճակատները:

— Սակայն մեզ կջախջախեն ռազմաճակատներում, յեթե մենք հաղթանակ չտանենք պարենավորման ճակատում: Հենց միություններն են, վոր իրենց ուսերին են կրում պարեն-մատնատրումը հավաքելու ամբողջ ծանրությունը: Մեր գործարանը արդեն դյուղերն է ուղարկել յերկու զինված բանվորական խմբեր—100 շարքային բանվոր և 3 գործարկումի անդամ: Շատ մեծ

և այդպիսի խմբերի, պարեն խմբերի ցանցը, վեր կազմել են ըստ արհմիությունները⁶⁾ :

Յեւ, չկարծես, ընկեր Նաղարով, թե մեր պարեն-խմբերը գյուղերում միայն բերքն են հաշվում, հացի ավելցուկը վերցրնում, բարձում և ուղարկում : Վո՛չ, նրանք միաժամանակ և կուսակցական հսկայական ագիտացիա յեն մղում ու կույտ-կրթական աշխատանք ասնում : Մութ ու խուլ գյուղերում արհմիությունների ռազմա-պարենավորման խմբերը—բազաի պրոլետարական գիտատուրան կազմակերպողի և իրականացնողի առաջապահ գնդերն են հանդիսանում : Նրանք անողոր հարված են հասցրել կուլակային բուսություններին, բազմաթիվ չրջանային ու գյուղական խորհուրդներ մաքրված են կուլակային տարրերից, հաստատված և չբավոր գյուղացիության ազդեցությունը, կազմակերպված են հաղարավոր միախնդներ ու ժողովներ, ճնշված են մի շարք կուլակային ապստամբություններ, հսկայական քանակությամբ գրականություն և տարածված, մի քանի տեղ կազմակերպված են մշտական խրճիթ-ընթերցարաններ, կազմակերպված են մեծ թվով կուսակցական—կոմունիստական ընթերցներ և այլն և այլն, և այս ամենը մեր այդ պարեն-խմբերի գործն և :

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Կրակարանի կրակը հանգչելու վրա
ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵ-յեր : Բողինը նորից փայտ ավելաց-
ՍՈՒԹՅՈՒՆԸ րեց ու շարունակեց :

— Բայց, իհարկե, անտեսական
հակառակ ավելի լայն ու բազմակողմանի աշխատանք են տա-
նում մեր արհմիություններն ու նրանց ստորին ընթերցները—գոր-
ծարանային կոմիտեները : Դեռ 1917 թվին, յերբ ձեռնարկատե-

⁶⁾ Աշխ-կոմիտեի աշխատանքային համաձայն, պարեն-մանածամբան դանձման հաջողությունն ամբողջովին պայմանավորված և արհմիությունների յեռանդով : 1918 թվի ոգոստոսից—1920 թվի ապրիլը Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. միությունները գործադավարման յեն յենթարկել ու պարեն-աշխատանքների յեն ուղարկել 80,029 հոգի (ՀԱՄԿՈՒ-ին կից ռազմա-պարենավորման բյուրոյի միջոցով, իսկ տեղերում—ՆԱՀ. Ա. Մ. Խ.-ին կից ՆԱՀ. պար. բյուրոնների միջոցով), վերոնցից 74,669 հոգի միությունների շարքային անդամներ և 5,340 հոգի պարեն-աշխատավորներ, վերոնք պատասխանատու ղերբեր գրավեցին :

րէրը ուղում էլին հաղթահարել մեզ ուժաթափ անելով, ձեռնարկությունները փակելով, մենք կատաղի պայքար սկսեցինք նրանց դեմ, բանվորական հսկողություն սահմանեցինք և թույլ չէլինք տալիս, վոր նրանք աչքաթող անեն, սարսուտով միջոցով կանդնեցնեն արդյունաբերությունը: Բայց ահա, վրա հասավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, գործարաններն ու գավոդները բանվորների ձեռքն անցան և բանվոր դատակարգի առաջ մի հակալական ու պատասխանատու խնդիր դրվեց.—կարողանալ միավորել այդ բազմահազար ձեռնարկությունները, կարգավորել նրանց կառավարելու հարցը, փրկել հետագա ավերածություններէց և բարձրացնել արտադրողականությունը:

— Յեւ, պիտի տեսնեմ, վոր մեր գործարանի նկատմամբ մենք դժվարություններ քաշեցինք: Գործարանատերն ու ավագ ինժեները փախել էլին, իսկ մնացած վողջ վարչությունն ու տեխնիկական ապարատը վոչ միայն չէր ցանկանում մեզ համար մատուցել խփել, այլ և ամեն կերպ աշխատում էլին խանգարել, արգելք լինել մեզ, վորովհետեւ համատարած էլին, թէ մենք—բայլչեիկներս մեկ-յեկու ամիս միայն կարող ենք գիմանալ, իսկ իրենց այդ վերաբերմունքով իրենք լավամարդ դուրս կզան հին «որինական» տերերի առաջ և նրանց բարյացակամությունը կվախելեն: Մեզ համար միանգամայն պարզվեց, վոր մենք՝ բանվորներս, մեր խորհրդային արդյունաբերությունը վերականդնելու գործում, պիտի հույս դնենք միմիայն մեր ուժերի վրա, վոր, յեթե Ռուսաստանի բանվոր դատակարգը ինքն իրեն չողնի, ուրիշ վոչ վոբեց նա ոգնության հույս ունենալ չի կարող: Յեւ ահա հենց այդ պայմաններում, այդ սարսուտի ժամանակ, մեր գործարանն ստացավ իր առաջին բանվոր տեսուչը—ընկեր Սերգեյին:

— Կոմունիստ տեսչի հետ միասին մեր գործարանային կոմիտեն աշխատանքի անցավ: Ամբողջ ժամերով յետ կարող էլի պատմել քեզ, թէ ինչպիսի ջանքեր գործ դրինք, վորպէսզի կարողանանք հստակ դնել ու վստեքանելուստանալ, դոնե մտաւոր ապահովենք բանվորներին փոխով, միեւրբնեբով ու արահազուստով: Մենք ստիպված էլինք զբաղվել վոչ միայն տարիֆային խնդիրներով, այլ և մշակում և հաստատում էլինք արտադրական ծրագրներ, անմիջական հսկողություն էլինք ունենում նրա աշխատանքներին: Յեւ այդ նույն անմիջական մտանակցությունը իրենց

վրա ելին վերցրել Ռուսաստանի բոլոր միությունները: Այժմ մենք
փորձ ենք անում կապիտալիզմի շրջանի անարխիկ արտադրությունից
անցնելու ծրագրային սոցիալիստական տնտեսության: Մեր
ձեռնարկությունները ղեկավարում են կենտրոնում գտնվող ար-
տադրության այս կամ այն ճյուղի գլխավոր կոմիտեները: Այս-
պես որինակ՝ մեր գործարանը գտնվում է Գլխ-տեկստիլի իրա-
վասության տակ: Իսկ այդ բոլոր Գլխավարչություններին ու կենտ-
րոնական վարչություններին միացնում է Ժողտնտխորհը (Ժողո-
վրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը): Նահանգներում
տեղական նշանակություն ունեցող ձեռնարկությունների աշխա-
տանքները ղեկավարում են նահանգական Ժողտնտխորհները, վո-
րոնք ունեն մետաղագործության, տպագրական, կաշվարդի և
այլ բաժիններ: Յեւ վ այդ առաջին հիմնարկությունները, վորոնք
սկսեցին կառավարել խորհրդային արդյունաբերությունը, բոլոր
այդ Գլխավարչությունները, կենտրոնները, Ժողտնտխորհն ու Նա-
խորհրդները, այդ բոլորը նույնպես, համարյա ամբողջո-
վին ստեղծված են արհմիությունների ուժերով, այն ընկերնե-
րից, վորոնց ուղարկել են արհմիությունները: Մենք, միու-
թյուններս առաջ ենք քաշել բաղմահազար տնտեսավարներ ու
հազարավոր կարմիր տեսուչներ (գործարանների): Միջմիութե-
նական կազմակերպությունների, միությունների վարչություն-
ների ու գործարկողների միջոցով մենք ակտիվ մասնակցություն
ենք ունենում տնտեսական նախագծերի ու ծրագիրների մշակման
գործին և անմիջականորեն հսկում ենք, վոր ի կատար ածվեն այդ
ծրագիրները^{*)}:

Մի խոսքով մենք ղեկավարում ենք ամբողջ խորհրդային ար-
դյունաբերությունը: Յերբեմն վատ, անչնորհք է դուրս գալիս,
յերբեմն սխալներ ենք անում, բայց վռչինչ, այդ սխալներով մենք

^{*)} Ընդհանուր առմամբ 1919 թվին Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. բոլոր
արգայնացրած ձեռնարկությունների գործարանային վար-
չություններում հաշվում էր միջին թվով 40 տոկոս բանվոր-
ներ և 60 տոկոս մասնագետներ: Մասնավորապես մետաղա-
գործների կենտկոմը հաստատել էր 184 գործար. վարչու-
թյուն, վորոնց մեջ բանվորներ 64 տոկոս, ինժինեյրներ 27,5
տոկոս և ծառայողներ 8,5 տոկոս:

1920 թվի սկզբին տեկստիլ արդյունաբերության մեջ կա-
յին 460 գործ. վարչություններ 1,124 անգամներով վորոն-
ցից բանվորներ—726 հոգի, այսինքն 66 տոկոս, իսկ տեխ-
պերսոնալ 398 հոգի—կամ 34 տոկոս:

և ամբողջ բանվորական մասսան սովորում ենք, վորովհետև մեր միությունները «վոչ միայն տնտեսությունը կառավարելու կազմակերպություն են, այլ և այդ կառավարելու ձևերը սովորելու դպրոցներ են»:

— Շատ ճիշտ և նկատել այդ մեր արհմիությունների Համառուկան համագումարը, դեռ 1918 թվի հունվարին: Իր բանաձևի մեջ նա չեչաեց, վոր Ռուսաստանի արհմիությունները պետք է «իրենց աշխատանքի կենդրոնը դարձնեն կազմակերպչական-տնտեսական աշխատանքների ասպարեզը... Արհեստակցական միությունները, վորպես դասակարգային կազմակերպություններ, կառուցված արտադրական սկզբունքներով, իրենց վրա պիտի վերցնեն արտադրությունը կազմակերպելու և յերկրի ցրված ուժերի վերականգնումը աշխատանքների մեծացումը մասը»:^{*)} Երկայնության ուղի խնդիրներ են յեռանդուն մասնակցություն ունենալ արտադրությունը կարգավորող բոլոր կենտրոնների աշխատանքներին, կազմակերպել բանվորական վերահսկողությունը, բանվորական ուժերի հաշվառում ու բաշխում կատարել, փոխանակության կազմակերպումը դյուզի և քաղաքի միջև, ամենագործուն մասնակցությունն ունենալ արդյունաբերության դեմոկրիլիզացիային, պայքարել սաբոտաժի դեմ, կիրառել ընդհանուր պարտադիր աշխատանքի սկզբունքը:

— Բայց այս դեռ քիչ է. մենք միություններս ստիպված ենք մեզ վրա վերցնել մի շատ կարևոր խնդիր ևս: Պակասությունը ծածկելու կարիք չկա. մեր բանվորների դրությունը այնքան էլ լավ չէ: Շնորհիվ քաղաքացիական կռիվների և արդյունաբերության քայքայվելուն—այժմ բանվորը 3 անգամ պակաս է ստանում բան նախապատերազմյան շրջանում^{*)}:

Շատ անգամ բանվորը ուղղակի քաղցած է մնում: Լինում են անդիտակից բանվորներ, վորոնք բոլորովին թողնում են աշխատանքը, կամ ավելի քիչ ու ավելի վատ են աշխատում: Ընկնում և

^{*)} 1919 թվին Ռուսաստանում բանվորների միջին աշխատավարձը կազմում էր 6,77 ապր. ուսիլի, (նախապատեր. չրջ. 30,8 տոկոս), 1920 թ. 7,12 ապր. ո. (32,4 տոկոս), 1921 թ. 6,35 ապր. ուսիլի (31,6 տոկոս): (Ըստ Մարտեմիլիների տվյալների):

Ըստ նույն տվյալների, յեթև 1913 թվի բանվորի աշխատանքի արտադրողականությունն ընդունենք 100 տոկոս, ապա 1917 թ. կունենանք 85 տոկոս, 1918 թ. 44 տոկոս, 1919 թ. 21,6 տոկոս և 1920 թ. 26 տոկոս:

աշխատանքի արտադրողականությունը, շատերն սկսում են պարտադիր աշխատել թրե դալ, ամենատարժեքավոր, ամենից լավ վարձված բանվորներն սկսում են գործը թողնել ու դուրս գալ քաղվել: Յեւ մեր արհեստակցական կազմակերպություններն ու գործարկողներն ստիպված են խոչընդոտել ճիգեր թափել, վարակազի բարձրացնել մասնաների արտադրութայունը, ապացուցել, վոր դադարահի վրա աշխատող բանվորի զոհարարութայունը բանվոր դասակարգի վերջնական հաղթանակի համար նույնքան անհրաժեշտ է, զորքան անհրաժեշտ են կարմիր բանակայինների հերոսութայունները ռազմաճակատում: Աշխատանքային կուռ դիսցիպլինա ստեղծելով, մենք ձգտում ենք համախմբել, ու այնպես սերտորեն ենք համախմբում բանվորական մասսաներին գործարանում, ինչպես հեղափոխական դիսցիպլինան է համախմբում կարմիր բանակի զորամասերը:

ՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

— Շատ լավ, — ասաց Նազարովը, — ՏՍՄԻՖԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ բայց ինչպես են աշխատում միութայունները պաշտպանում բանվորների նյութական շահերը: Աշխատանքային դիսցիպլինան լավ բան է, բայց ի՞նչ եք անում աշխատավարձի բարձրացման համար: Ի՞նչ փոխարարներութայուններ դոյութայուն ունեն միութայունների ու անտեսաւարների միջև:

— Այստեղ արդեն, Նազարով, մի բան պիտի նկատի ունենալ. ուրիշ բան է աշխատավարձի համար պայքարելը կապիտալիստների տիրապիտութայան ժամանակ է այլ բան է պրոլետարիատի զիլատատուրայի ժամանակ: 1917 թվին, մինչև կապիտալիզմի տապալվելը, մենք հավաքական (կոլլեկտիւ) պայմանադրեր էյինք կնքում տերերի հետ, վոր յերբեմն խաղաղ ճանապարհով էյինք ձեռք բերում իսկ հաճախ էլ գործադուլի միջոցով էյինք ստիպում համաձայնութայան գալ: Իսկ աշխատ⁶⁾ մենք կարելի չունենք կոլլեկտիւ պայմանագրեր կնքելու: Աշխատմեր դրութայունը չափազանց ծանր է: Մենք ստիպված ենք պայքարել սպիտակ զմարդկանների դեմ, պիտի հաղթանակենք սովն ու անտեսական քայքայվածութայունը: Մենք հաշվառումն ենք յենթարկում մեր ամբողջ պաշարը,

⁶⁾ Այսինքն «Ռազմական կոմունիզմի շրջանում»: (Զրույցը տեղի չե ունենում 1919 թ.):

բոլոր աշխատող գործարաններն ու գաղութները և պետք և ամեն ինչ բաշխենք այնպես, վորպեսզի ժամանակին փակենք մեր տընտեսութեան բոլոր ճեղքվածքները: Այդ ամենի համար մենք ստիպված յեղանք անշափ ուժեղացնել կենտրոնի ղեկավարութիւնը, Ժող. Տնտ. Գեր. Խորհրդին կից կազմակերպել հատուկ գլխավոր կոմիտեներ, վորոնցից յուրաքանչյուրը ղեկավարում և արդյունաբերութեան այս կամ այն ճյուղը:

— Վերցնենք հենց որինակ մեր գործարանը: Նա անմիջական կերպով յենթարկվում և տեկատիլ արդյունաբերութիւնը կառավարող Գլխավոր կոմիտեին, վոր գտնվում և Մոսկվայում: Իր ամբողջ արտադրական ծրագիրը նա ստանում և կենտրոնից. այստեղից են ուղարկվում նաև մեր պատվերները, վառելանյութը, մեզ անհրաժեշտ ամբողջ հում նյութը, աշխատավարձ տալու միջոցներն ու փողը, կահավորման բոլոր առարկաները և այլն: Գործարանը իր արտադրած ամբողջ ապրանքը պարտավոր և լիովին հանձնել տեկտ. արդյուն. Գլխումին, կամ մի ուրիշին տալ բացառապես նրա կարգադրութեամբ: Այսպիսով, մեր տեսիլ ձևն ու փոտը կապված և: Ասենք թե՛ միջոցներ չկան բանվորներին աշխատավարձ տալու համար—ամբողջ հուլիսը կենտրոնի վրա յեղրվում: Յենթադրենք գործարանի պահեստներում մեծ քանակութեամբ մանուֆակտուրա յե կուտակվել, կարելի յե բանվորներին բաժանել աշխատավարձի փութարեն, բայց դրա համար հարկավոր և կենտրոնի թույլտվութիւնը: Նշանակում և աշտեղ, հենց տեղում միութիւնն ու գործարկումը տեսիլ հետ համաձայնութեան գալու վոչինչ չունեն: Մեր բոլոր բանվորները բաժանված են վորոշ կարգերի և ստանում են կայուն սոճիկ. և նույն արտադրութեան բանվորները ամբողջ Ռ. Ս. Ծ. Խ. Հ. սահմաններում համասար են ստանում: Իսկ ո՞վ և սահմանում ու փոփոխում այս կարգերն ու դրութիւնները: ՀԱՄԿԽ—ը միութեան Կենտկոմի հետ միասին: Այստեղ էլ ուրեմն տեսուչը վոչ մի բանի խտոր չէ, նրա հետ համաձայնութեան գալու կարիք չունենք: Յեկ վերջապես, Գլխ-տեկատիլի աշխատանքները ղեկավարում են հենց այն ընկերները, վորոնց ուղարկել և նույն այդ տեկատիլ բանվորների միութիւնը և վորոնք հաշվետու յեն միութեան առաջ այնպես, ինչպես Ժ. Տ. Գ. Խ.—ի առաջ: Այ, հենց որինակ մեր Սերգեյը—տեսուչ և, բայց նրան մենք ենք առաջ քաշել: Նա իր աշխատանքների մասին հաշիվ և տալիս վոչ միայն բարձրագոյն

տնտեսական մարմիններին, այլ և գործարկումին և մեր միության տեղական բաժանմունքին: Մեր գործարկումը անմիջական կերպով մասնակցում է արտադրությունը կառավարելու գործին և միաժամանակ հսկում է աշխատանքներին: Շատ անգամ ուղղակի չես կարող վորոշել, քե տնտեսական աշխատանքների մեջ վորտեղ է վերջանում գործարկումի սահմանները և վորտեղ է սկսվում տեսչի իրավունքները:

— Այժմ յերեկ սարգ և քեզ համար, թե հարցն ինչպես և գրված: Քանի վոր ամբողջ արդյունաբերությունը ազդայնացված է և ամբողջ արտադրութիւնը—մշակութիւնը գնում է պետության տրամադրության տակ ու ազգային յեկամուտ է դառնում, ապա ուրեմն միությունների տարիփային աշխատանքը այլևս կապիտալիստների դեմ մղվող պայքարը չէ, աշխատավարձը բարձրացնելու համար: Բանվորը կարիք էլ չունի իր—բանվորական կառավարության դեմ պայքարելու: Այժմ մենք պարզապէս աշխատում ենք բանվորներին բաժին հանել ազգային ունեցվածքի այն մասը, վոր անհրաժեշտ է նրանց գոյությունը պահելու համար: Յեթե առաջ մենք պայքարում էինք աշխատավարձը բարձրացնելու համար, առանց մտածելու, թե դա կարող է չափազանց մեծ հարված լինել կապիտալիստի գրպանին, ապա այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի սլոյմաններում անմտություն կլինեք բանվոր դասակարգի համար այդպիսի մոտեցում ունենալ այդ խնդրին: Յեթե մենք—թեկուզ հենց տեկատիլ գործարանի բանվորներու, չափազանց բարձր աշխատավարձ պահանջենք, ի՞նչ կստացվի: Հանրապետության միջոցները չեն ների, հենց իրենք, տեկատիլ գործի բանվորները կմնան գործազուրկ, վոչինչ չի լինի կարմիր բանակն ու բանվորներին կերակրելու համար, վոչինչ չեր լինի, վոր գոնե մասամբ գյուղում փոխանակվի հացի հետ: Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Ժողովրդական տնտեսությունը ծանր հարված կստանա, վորի հետ և աշխատավորական իշխանությունը: Մյուս կողմից դա խրախճանքի մի ավելորդ առիթ կլինի միջազգային բուրժուազիայի համար, վորն առանց այն ել ատամներն և սրում իր ստեղծի բանվորա—գյուղացիական հանրապետության վրա:

Մեր արհմիությունները չառ լավ հասկացան այդ ամենը: Մենք հոկայական աշխատանք կատարեցինք չափերի (норма) ու աշխատավարձի կանոնադրություն մշակելու գործում, սահմանեցինք աստիճաններն ու վորակախորումը, համատեսական տարիֆներ—

րը, բայց այդ ամենի ժամանակ մենք աշխատավարձի խնդիրն ու չափը սերտորեն կապում ենք մեր ժողովրդական տնտեսութեան վիճակի ու կարողութեան հետ և նույնիսկ մեր ամբողջ Հանրապետութեան զբուժեան հետ: Ներկայումս հաճախ արհմիությունները գիտակցորեն աշխատավարձը այնքան ցած են պահում, վոր բանվորը նույնիսկ կիսաքաղց է մնում, միայն թե կարողանան ունենալ մեր ժողովրդական տնտեսութեանը գուրս գալ քայքայված զբուժեանից: Իսկ յերբ այդ մեղ հաջողվի, այն ժամանակ մենք վերջնականապես ու լուրջ կերպով կը բարձրենք բանվոր դասակարգի զբուժեանը:

— Այդպե՛ս... — մտադրազարտասանեց Նազարովը և հետ քաշվեց արդեն չափազանց տաքացած կրակարանից:

— Այսօր յես մեքենայական բաժնումն եյի, վորտեղ իմ ծանոթ մեխանիկը գանդատվում էր ինձ. «Յես, — ասում էր, — վորակցալ բանվոր եմ, չառ լավ գիտեմ իմ գործը: Պատեւազմից առաջ ինձ 5 անգամ ավելի եյին տալիս քան սեաւորո՞ծ բանվորին, իսկ այժմ նույնիսկ 2 անգամ ել ավել չեմ ստանում: Շատ դժվար է այսպես աշխատելը, յես կհեռանամ գործարանից»: Յես կարծում եմ, ընկեր Բոգին, վոր այդպիսի վարձատրութեանից արտադրութեանը մեծ վնաս կհասնի: Հարկավոր է մասնագետ բանվորներին ուժեղեցնել ավելացնել:

— Ճիշտ է, դու մեր հիմնական կողմը չուշափեցիր: Մենք կարողացել ենք մեր ամբողջ Պորհրդային Հանրապետութեան բնդհանուր զբուժեան հետ կապել բանվորի աշխատավարձը, բայց աշխատանքի արտադրողականութեան հետ կապել՝ մեղ այնքան ել չի հաջողվում: Հեշտ է, ի հարկե, բաժանել — սրան չառ տալ, նրան քիչ, բայց յեթե տալու բան կա: Բայց մեր ուժեղացուցիչը, ինքզնիքը ել գիտես, վոր այժմ չառ չնչին են: Պոռը տարբերութեան տեսլո՞ծել մասնագետ և վոչ մասնագետ բանվորների ուժեղեցնելի կարելի. դեռ այն ել լավ է, յեթե մեղ հաջողվի յերկուսին ել փրկել սովից: Մեր արհմիութեանների Համառուտական 2-րդ Համագումարը հալասարակչող տարիֆային ցանց մտցրեց: Այդ ցանցը ունի 35 աստիճան և ամենաբարձր աստիճանի բանվորը բնդամենը 4 անգամ է ավել ստանում ամենացած աստիճանի բանվորից*):

*) Շուտով այդ ցանցն ընդարձակվեց 1:5 հարաբերութեամբ:

Իսկ ամենազլխավորն այն է, վոր մենք աշխատում ենք, վորքան կարելի չէ, աշխատավարձի քիչ մասը դրամով վճարենք. չե՞ վոր խորհրդ. դրամանիշները որեց-որ կորցնում են իրենց արժեքը: Յեւ վայժմ բանվորն իր աշխատավարձի 80 տոկոսը ստանում է արտահայտւոտով և մթերաւիայով: Իսկ այդ մթերաւիայը այնքան չնչին է, վոր մենք հաւասարապէս բաժանում ենք բոլորին՝ առանց նկատի առնելու տարբիՓային ցանցն ու աշխատանքի արտադրողականութունը: Պարարտանալու, չաղանալու ժամանակը չի, զոնե կենդանի մեանք, այդ էլ բաւական է: Այսպէս է, ընկեր Նադարով *):

ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆ.— — Ուրեմն ի՞նչ, միությունների խնդիր-
ՆԵՐՐԸ ԿՈՄՈՒՆԻԶ.— Ներք միայն Կարմիր բանակը, պարենմաս-
ԽԻ ԴՊՐՈՅՆԵՐՆ ԵՆ. նատրումն ու ժողովրդական տնտեսու-
թյունն են:

— Վո՛չ, մի ուրիշ խնդիր էլ կա, ամենակարեւոր խնդիրը, յորի մասին չարունակ խոսում ու հասկացնում է մեզ ընկեր Լե-

*) Այս ամենը, ի հարկէ, չառ եր վնասում արտադրու-
թյան շահերին: Արհմիությունների թե յերկրորդ և թե մանա-
վանդ յերրորդ համառուսական համագումարները (1919-1920
թիւերին) իրենց բանաձեւերում ասում են, վոր հարկավոր է
բանվորին նյութապէս շահադրդուել իր ճյուղի արդյունաբերու-
թյան հաջողությունների մեջ. հարկավոր է նրան այնքան աւել-
ի լաւ վարձատրել, վորքան աւելի մասնապէս է և վորքան ա-
վելի շատ է արտադրում, մշակում:

1920 թվին մտցրվեց, այսպէս ասած, քնական մրցանակա-
բաշխության ձեւը—այսինքն՝ բարձր մշակումի, աշխատանքի
բարձր արտադրողականության համար բանվորը, վորպէս մըր-
ցանակ, վորպէս լրացուցիչ վարձատրություն, ստանում է ալ-
յուր, միս, մանուֆակտուրա և այլն: Պարենաւորման ժողո-
վրդական կոմիսարիատը բնական վարձատրության համար
հատկացրել էր մի քանի հարյուր հազար վուլթ հացահատիկ ու
այլ մթերքներ և մեծ քանակությամբ առաջին անհրաժեշտու-
թյան առարկաներ: Սակայն 1920 թվի վերջերին և 1921 թվի
սկզբներին պարենի սուր կարիքը այդ ձևի բնական վարձատ-
րությունը կործանման հասցրեց (1921 թ. ապրիլին):

Արհմիությունների տարբիՓային աշխատանքը փոխանակ
աշխատանքի արտադրողականության վրա հենվելու, ստիպված
յեղաւ սպառողական բնույթ ընդունել:

նինը : Արհմիությունները վոչ միայն խորհրդային շինարարության բոլոր ասպարեզները մեջ են քաշում բանվորական լայն մասսաներին, այլ և սովորեցնում են նրանց թե ինչպես պիտի կառուցել խորհրդային պետութիւնը, դաստիարակում են նրանց, կոմմունիզմի դպրոց են հանդիսանում :

Այ, յես կը կարդամ, և տես, թե ինչ է ասել ընկեր Լենինը մեր արհմիությունների յերկրորդ համառուսական համագումարին :

«Մենք սխալներ անշուշտ կունենանք, բայց յուրաքանչյուր սխալը դաս է լինելու վոչ թե ուսանողների խմբերի համար, վորոնք ուսումնասիրում են պետական վարչության վորեւէ կուրս, այլ դաս է լինելու միլիոնավոր աշխատավորների համար, վորոնք իրենց վրա պիտի զգան ամեն մի սխալի հետեանքը, ինքները պիտի տեսնեն, վոր իրենց առաջ կանգնած են հաշվառման և արդյունքների բաշխման անհետաձգելի խնդիրները, և վորոնք իրենց փորձով տեսնում են, վոր իշխանութիւնն իրենց ձեռքումն է, վոր վոչ վոք նրանց չի ողնելու, յեթե իրենք իրենց չողնեն» : Յեւ վարհմիությունների անելիքն է . «այդ միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր աշխատավորներին ավելի պարզ դործունեությունից մղել դեպի բարձր գործունեության, յերբք չդադարել շարժել նրանց մինչև ամենադժվարին խնդիրները, և դաստիարակել այսպիսով ավելի և ավելի լայն մասսաներին և սովորեցնել նրանց պետութիւն կառավարել, ձուլվել պրոլետարիատի այդ պայքարի հետ, պրոլետարիատի, վորն իր ձեռքն է սուկ զիկտատուրան և այժմ ամբողջ աշխարհի առաջ պահում է այդ զիկտատուրան, իր կողմը դրավելով բոլոր յերկրների արդյունաբերական բանվորների ու սոցիալիստների ջոկատներն իրար հետևից, վորոնք դեռ յերեկ հանդուրժում էյին սոցիալ—դավաճանների ու պաշտպանողականների ցուցմունքները, իսկ այժմ ավելի ու ավելի մոտենում են կոմունիզմի ու կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշին» :

«Պահել այդ գրոշը և դրա հետ միասին անշուշտ ընդլայնել սոցիալիզմ կառուցողները շարքերը, հիշել, վոր հարկավոր է լինել նոր կյանքի կառուցողներ, լինել նորանոր միլիոնների դաստիարակիչներ, վորոնք իրենց փորձով պիտի սովորեն սխալներ չանել, դեն չարտել հին նախապաշարմունքները, սովորել իրենց փորձով պետութիւն կառավարել և զեկավարել արտադրութիւնը, — ահա արհմիությունների անելիքները : Միայն այդ է այն անսխալ

յերաշխիքը, վոր սոցիալիզմի դործը լիապես կհաղթանակի՝ բողոքականով վերադարձի բոլոր հնարավորութիւնները :

— Այդ վերադարձը չի լինի : Մեր միութիւնները վաղուց արդեն բաշխեցին իրան կարմիր միութիւններն են դարձել : Վոչ մի ուժ չի կարող Ռուսաստանի բանավոր դատակարգի ձեռքից խլել իր արքունի գնով ձեռք բերված իշխանութիւնն ու կոմունիզմի կարմիր դրոշը : Դեռ արձմիութիւններին առաջին համառուսական համագումարին ջախջախեցին մենչեիկները . 416 պատգամավորներից 216 հոգի կոմունիստ ելին , իսկ մենչեիկներն ընդամենը 66 հոգի : Համաձայնողականներին քիչ մնաց , վոր հաջողվեր խցկվել վոչ աշխարհի գիտակից քառասունեցող միութիւնների մեջ , ինչպես որինակ , խորաշխի , տաղաքիչների ու յերկաթուղայիներին միութիւնները , բայց մեկ հաջողվեց աշխատելիք եւ դուրս վնդել իրանց : Արձմիութիւններին 2-րդ համառուսական համագումարին արդեն բոլոր համառուսական արտադրական միութիւնները կոմունիստներն ելին գրավել լիովին : Այդ համագումարին մենչեիկները մի վորդորմելի խմբակ ելին կազմում—748 հոգուց ընդամենը 37 հոգի*) :

Մի խոսքով , մեր Լավրսկի դործարանը դարձավ Լենինյան դործարան : Լենինյան դարձան և մեր բոլոր արձմիութիւնները :

*) 3-րդ համագումարին (1920 թ .) մենչեիկներն ավելի քիչ ելին՝ 1229 հոգուց—11 հոգի . 4-րդին (1921 թ . մայիսին)—1500 հոգուց ընդամենը 4-ն ելին մենչեիկ :

3-րդ համառուսական համագումարի վորոշմամբ Ռուսաստանի կարմիր արձմիութիւնները մտնում են 3-րդ Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ , վորով մի ավելորդ անդամ ել չեշտում են , թե պատրաստ են վճռական ու հեղափոխական պայքար մղելու միջազգային կապիտալի դեմ—կոմիւնալիզմի թիւն գրոշի տակ , և հենց դրանով խոր անջրպետ են փորում դեպի Ամստերդամի և հեղափոխական արձմիութիւններին միջի :

Վերջապես Ռուսաստանի արձմիութիւններին միջազգային կենտրոնում հեղափոխական արձմիութիւնների միջազգային կենտրոնի կազմելու և նրա հիմնական կորիզը գառնալու պատիվը . կենտրոն , վոր կազմվեց վորպես հակադիր ուժ դեպի ինտերնացիոնալին : Այդ կենտրոնը , վոր ծնունդ առավ Մոսկվայում , 1920 թվին , վորպես Միջազգ . Արձմիութհոլը . (հետագայում Արձմիութիւնների Կարմիր Ինտերնացիոնալ—հոգր Պրոֆինտերնը) միանգամից հայտարարում և հետեյալ բանաձեւը՝ «վոչ թե խաղաղութիւն , ալլ սուր ենք բերում բուրժուական աշխարհին» , և կոչ է անում ամբողջ աշխարհի արհեստալիզտ-

ԱՐՀՄԻՌԻԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԿԱՌՈՒՅ-
ՎԱՏՔԸ ՌԱԶՄԱ-
ԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՉԱԻ
ՇՐՋԱՆՈՒՄ (1918—
1921 թ.) :

— Լավ, բայց խորհրդային արհմիու-
թյունների ուժերը բավականապես^o մենայն
բոլոր խնդիրները լուծելու համար : Ար-
դյոք բավարար չափով ամուր են նրանք,
յա^o մեն կազմակերպված, աճե^oլ են բու-
վարար չափով :

— Այո, բավականաչափ զորեղ են : Հսկա-
յական և մեր արհմիությունների աճման թափը : Մենք կազմա-
կերպվել սկսեցինք 1917 թվին միայն, բայց 1919 թվի հունվարին
արդեն, 2-րդ համառուսական համագումարի ժամանակ ունեյինք
3,422,000 անդամ : Հեռու չե այն ժամը, յերբ մենք արհեստակ-
ցական միությունների մեջ կզբաղենք խորհրդային Ռուսաստանի
բոլոր ձեռնարկությունների և հիմնարկությունների բոլոր բան-
ջորներին առանց բացառության^o :

— Բայց այդ դեռ քիչ է : Մեր արհեստակցական միություն-
ները իրենց ցրվածությամբ նման չեն Անգլիայի, Ամերիկայի
համքարային միություններին, մորոնք շարունակ թշնամության
մեջ են իրար դեմ : Մեզ մոտ ձեռնարկության մեջ աշխատող և՛ հա-
տարակ բանվորը, և՛ ինժեները, և՛ մեքենագետն ու հաշվապահը բո-
լորն էլ միևնույն մասնաձուլորձների արտադրական միության ան-
դամներ են : Իսկ ինչու^o : Վարովհեա և մենք սպրում ենք պրոլե-
տարիատի զիկտատուրայի—բանվոր դատակարգի և համաշ-
խարհային բուրժուազիայի անողոր պայքարի շրջանում, յերբ
մեզ հարկավոր է մորթան կարելի չե ճիշտ ու լիովին համախմբել
մեր ուժերը, մեր դատակարգային թշնամուն հակահարված տա-
լու համար : Այժմ մեզ մոտ մոտ թե կապիտալիստական, այլ սո-
ցիալիստական տնտեսություն է : Մեր արդյունաբերությունը
հզոր միավորումների շուրջն է համախմբված բոտ արտադրու-

կան կազմակերպություններին—զինված ուժով տապալել կա-
պիտալիստական կարգերը և անցողիկ շրջանի համար հաստա-
տել պրոլետարիատի զիկտատուրա : (Այս մասին մանրամաս-
նությունները տես «Ամստերդամ և Մոսկվա» զրբում) :

^o) Իսկապես, Արհմիությունների 4-րդ Համառուսական
համագումարի ժամանակ արդեն (1921 թվի մայիսին) Ռուսաս-
տանի արհմիությունները ընդգրկում էին 8,485,000 մարդ,
ուրեմն համախմբել էին բանվոր դատակարգի հիմնական ու-
ժերը և կազմակերպվածության տեսակետից չափ առաջ էին
անցել, քան բուրժուական յերկրների աճենաճին բանվորական
կազմակերպությունները :

թյան և ղեկավարվում և կենտրոնից ու գլխավորներով: Արհմիությունները անմիջական մասնակցություն են ունենում այդ ղեկավարության գործում և վերաբերի բանվորական մասսան ավելի մոտ լինի կանգնած իր արտադրություն շահերին, մեր տնտեսություն ամեն մի խոշոր ճյուղին համապատասխանում և բանվորների հզոր միավորումը—Համառուտական արտադրական միությունը: Ներկայումս գոյություն ունեն 30 միություններ (մանածագործների, մետաղագործների, լեռնագործների և այլն): Սակայն մենք դեռ վերջացած չենք համարում միությունների համախմբման գործը: Հարկավոր և, որինակ, ունենալ վոչ ավել 22—23 միությունը*):

Դեռևս անցյալ տարի մենք դժվարանում էինք մեր գործարանում կիրառել տալ «մի ձեռնարկություն—մի միություն» սկզբունքը: Գործարանի ծառայողները, և ամենից առաջ վարչությունն ու բարձր տեխնիկական պերսոնալը, սարսուռած էին անում մեր աշխատանքները, հայտարարում էին, թե՛ «Մենք չենք միանա ձեզ հետ, դուք սե վոսկորավոր եք, մենք ճերմակ»: Բայց անցավ ժամանակ, Հոկտեմբերյան հեղափոխություն յերկունքը փչեց ինտելիգենցիայի սարսուռը և այժմ նվազում և անգիտակցությունը: Ինտելիգենցիան, ծառայողները և մասնագետ—տեխնիկները սկսում են արդեն առաջ ընթանալ ամբողջ բանվոր դասակարգի հետ միասին: Շուտով արդեն մի տարի կլինի, ինչ նրանք ձեզ հետ մի միություն մեջ են և նրանց մեծամասնությունը ձեռնարկության մեջ աշխատում և ագնություն վոչ թե ահից ու սարսուռից ստիպված, այլ իր խղճմտանքից, իր գիտակցությունից դրդված:

— Լավ, այդ ամենը միություն մասին, իսկ ինչ են գործարկումները:

— Դե գործարկումն էլ միություն մասին է, նրա հենարանն և ձեռնարկության մեջ, նրա ստորին ըջիջն է: Ամբապնդվում են միությունները, ամբապնդվում են և գործարկումները: 1917 թվին գործարկումները ու միությունները տարբեր ճանապարհներով էին ընթանում: Արհմիությունների մենչեիկյան վերին խավը բուրժուազիայի գիկտատուրան ևր պաշտպանում, իսկ բայլչեիկյան գործարկումները համառորեն պայքարում էին Խորհրդային իշ-

*) 1920 թվին արհմիությունների համառուտական միավորումներ կան 32 հատ, 1921 թ.—22, իսկ 1922 թ.—23 հատ:

խանության ու պրոյեկտարիատի գիկտատուրայի համար: Պարզ է, զոր նրանց մեջ կապ լինելու փոխարեն ջլատում ու պայքար կար: Բայց ահա հաղթանակեց Հոկտեմբերը, միութենական վերին շերտերից դուրս քշեցինք մենչեիկներին, միությունները կարմիր—հեղափոխական դարձան և այժմ կարմիր զործարկումները ամբողջովին յենթարկվում են նրանց ղեկավարությանը:

— Իսկ ո՞վ և միավորում բոլոր 30 միությունները:

— Սպասիր մի քիչ, ալգտեղ ել կհասնենք: Հսկայական և Ռուսաստանի արհմիությունների աշխատանքը և այժմ, ավելի քան յերեք, նրանց հարկավոր է մի ղեկավարող կենտրոն: Իսկ դրա համար գոյություն ունի Համառուսական Արհեստակցական Միությունների կենտրոնական Խորհուրդը (ՀԱՄԿԽ): Մի ժամանակ ՀԱՄԿԽ—ն թույլ էր, չէր կարողանում ղեկավարել արհ. շարժումը, 1917 թվին նրա մեջ ելին խցկվել մենչեիկները, ինչ-ժոր կազմակերպչական անհամաձայնություն ել կար. բայց այժմ ալգ բոլորը փոխվել է*):

— Ներկայումս մեր ՀԱՄԿԽ—ը դարձել է Ռուսաստանի արհ. շարժման ընդհատակյա բայլենիկյան գերագույն շտաբը և Համառուսական 2—րդ համագումարը այս բանը ամբողջեց միայն: Համագումարն ընդունեց, զոր. «1. ՀԱՄԿԽ—ը Համառուսական արհ. շարժման գերագույն մարմինն է, զոր գործում է համագումարների ու կոնֆերենցիաների փորձումների հիման վրա, 2. Հա-

*) Զոտեյով գեո այն մասին, զոր մենչեիկները միանդամայի դուրս քշվեցին ՀԱՄԿԽ—ից, վերջինս գեո Համառուսական 1—ին համագումարին (1918 թ.) այնպես էր կաղմված, զոր յուրաքանչյուր Համառուսական կենտրոնացած արհմիություն ՀԱՄԿԽ էր ուղարկում 1 ներկայացուցիչ (յեթե ուներ մինչև 50,000 անդամ) և ելի մեկական ներկայացուցիչ հետեյալ ամեն մի 50,000 անդամից: Բացի ալգ Համառուսական համագումարում ընտրվում էին 11 հոգի և կաղմում էին ՀԱՄԿԽ—ի նախագահություն: Այսպիսով, ՀԱՄԿԽ—ի մեջ մտնող աշխատողների զգալի մասը շարունակ դանկում էր Մոսկվայում ուստի կարիք յեղած դեպքում հեշտ էր լինում նրանց հավաքել: Իսկ միությունները կենտրոնական կոմիտեների հետ, ընտրությունները նոր ձեի միջոցով, սերա կապ էր հաստատվել: Այս ամենը ուժեղացնում էր ՀԱՄԿԽ—ի հեղինակությունն ու աշխատունակությունը և նա 1919 թվի սկզբներին արդեն փաստորեն ընդգրկում ու ղեկավարում էր Ռուսաստանի բոլոր արհմիությունները:

մատուցական համագումարների, կոնֆերենցիաների, նաև ՀԱՄԿԽ-ի բոլոր վորոչումները պարտադիր են ինչպես արհմիությունների համառուսական միության մեջ մտնող առանձին միությունների, այնպես և այդ բոլոր միությունների բոլոր անդամների համար: Վորոչումները խախտողները կամ չլինթարկվողները կհևաացվեն պրոլետարական միությունների ընտանիքից»: Արհմիությունների նախկին նվազ ու լրարիկ կենտ. բյուրոների փոխարեն տեղերում յերևան են դալիս մեջմիութենական հաստատուն միավորումներ: Արհմիությունների նույն 2-րդ համագումարը մատնանչում է, վոր «արհեստակցական միությունների տեղական խորհուրդները, լինելով արհեստակցական շարժման ղեկավար մարմինները և հանդիսանալով տվյալ վայրի տնտեսապես ձագմակերպված ամբողջ պրոլետարիատի լիազոր ներկայացուցիչը՝ միաժամանակ իրենց գործունեյության ընթացքում ղեկավարվում են Համառուսական համագումարների ու ՀԱՄԿԽ-ի վորոչումներով, իսկ առանձին արտադրական միությունների նկատմամբ՝ նաև իրենց ղեկավար մարմիններով: Նահարհմիորհները պիտի հետեն ինչպես միությունների կառուցվածքի ճշտությանը, այնպես և ղեկավար կենտրոնների ղերեկալմների իրականացմանը»:

— Այսպես եր սահմանված դեմոկրատական կենտրոնացումը մեր ոռուսական արիշարժման մեջ*):

Արհմիությունների բոլոր մարմինները, վարից վեր (սկսած գործարկոմից մինչև միության կենտ-կոմն ու ՀԱՄԿԽ-ը) ընտրովի մարմիններ են, ընտրվում են ընդհանուր ժողովներում և համագումարներում: Միության ամեն մի անդամ վճռական ձայնի իրավունք ունի ընտրությունների ժամանակ և ընդհանրապես բոլոր միութենական գործերը վճռելիս: 18 տարին լրացնելուց հետո նա կարող է ընտրվել միութենական ամեն տեսակի պաշտոնի համար: Մյուս կողմից՝ մեր արհեստակցական շարժումը կենտրոնացված է: Հենց վոր միութենական մարմինն ընտրվից, միության անդամը պետք է յենթարկվի նրա բոլոր վորոչումներին, պետք է իրականացնի միութենական կուռ գիացիպլինան. միութենական տեղական բաժիններն էլ, իրենց հերթին, իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում յենթարկվում են միությունների

*) Դեմոկրատական կենտրոնացման մասին մանրամասն տես «Ի՞նչ է առում միության կանոնադրությունը» գրքի մեջ:

կենտրոնական կոմիտեների ղեկավարութեանը, վերոնք անընդհատ հետևում են, վոր տեղերում վոչ մի հիվանդագին թեքում չլինի և համառուսական արտադրական միութեան աշխատանքների գիծը ամբողջապէս միասնական լինի: Նահարհմխորհներն ել իրենց հերթին համախմբում, ղեկավարում և ուղղութեան են տալիս արհեստակցական աշխատանքներին՝ իրենց նահանգի սահմաններում: Յեւ վերջապէս Ռուսաստանի արհեստակցական շարժման գլխավոր շտաբը՝ ՀԱՄԿՍ-ը, ղեկավարելով և Նահարհմխորհները տեղերում և միութեանների կենտ-կոմները կենտրոնում, աշա-յուրջ կերպով հետևում ե, վորպէսզի ռուսական արհմիութեաններին ամբողջ բանակը առաջ ընթանա միատեղ, վորպէսզի մասնակի շահերն ու պայմանները չմթագնեն ընդհանուր խնդիրներն ու ընդհանուր ուղիները, վորպէսզի Ռուսաստանի բոլոր 30 արհեստակցական արտադրական միութեանները—30 հզոր արտադրական գիւղիկանները խիտ շարքերով, յետանդով ու համերաչխ ընթանան գեպի կոմունիզմ տանող ուղիով:

— Ուրեմն, ի՞նչ ե յեղեկ մեզ մօտ և ի՞նչ կա այժմ: Յեղեկ են նեղ—համաքառային միավորումներ, այժմ կան արտադրական կուռ միութեաններ: Յեղեկ են մանր, իրարից կտրված, Ռուսաստանի ամբողջ տարածութեան վրա ցրված աննշան միութեաններ, այժմ կան—համառուսական հզոր միավորումներ: Լիակատար խառնաշփոթութեան եր, այժմ կա առողջ գեմեկրատական կենտրոնացում իր ղեկավար կենտրոնով, հանձնու ՀԱՄԿՍ-ի: Ձեռնարկութեաններում ու հիմնարկներում աշխատող Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատը միութեանների մեջ և համախմբվում: Կապիտալիստական յերկրներից և վոչ մեկը իր արհմիութեանների կազմակերպման դործում այդպիսի նվաճումներ չի արել: Յեւ ուրիշ կերպ լինել ել չեր կարնդ: Այդպիսի հաջողութեաններ հնարավոր եր միայն պրոլետարիատի գիկտատուրայի պայմաններում, յերբ բուրժուազիան իշխանութեան չունի, վոր խանդարի բանվորներին միանալ, յերբ բանվոր դատակարգը լիովին իր ձեռքն և դրել արտադրութեան ղեկավարութեանն ու կառավարութեանը, յերբ միասնական ուժերով նա աշխատավորական պետութեանն և կառուցում:

— Յեւ պրոլետարիատը կկառուցի այդ պետութեանը,—ցույցով աչքերով վերջացրեց Րոզինը:

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՈՒԺԵՐԻ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ :
ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱ-
ՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ :

Իրոք վոր Ռուսաստանի բանվոր դա-
սակարգը կառուցում էր , բայց 1919-
1920 թվերին նա հաճախ ստիպված էր
լինում հրացանը ձեռքն առնել , քան
թե դազգյա՜հ առաջ կանգներ աշխա-
տելու : 1919 թվի գարնանը Խորհրդային Ռուսաստանի միջազգա-
յին ու ներքին դուռթյունը չարունակ վատանում էր : Եսալանդեա-
յի , Լատվիայի , Լիտվիայի ու Բելուուսիայի , իսկ հետո նաև Վեն-
զուելայի ու Բավարիայի յեղբայրական խորհրդային հանրապետու-
թյունները ճնշված ու խեղդված էյին : Թշնամին մոտենում էր ա-
մեն կողմից : Արևելքում Կոլչակը , վորին առատորեն մատակա-
րարվում էր անգլո—ամերիկյան վոսկին ու զինամթերքը , տիրել
էր Ուրալին և ջանք էր թափում Վոլգայի չրջանը մանել : Հարա-
վում Դենիկինը հաղթելով մեր հեծելազորին , սև ամպի նման
առաջ էր շարժվում : Խորհրդային Ուկրաինան աչքվում էր կու-
լակային խլրտումների հրդեհից (առամաններ Գրիգորևի , Ջելյու-
նովի , հայր Մախնոյի և այլոց ապստամբությունները) : Լենին-
գրքադի վրա էյին հարձակվում Ռոճյանկոյի և Բաբախովիչի , իսկ
հետո Յուդենիչի սպիտակ գվարդիականները : Բանվորա—գյուղա-
յիական հանրապետությունը իր ճիգերն էր թափում հակահեղա-
փոխության հրավառ չրջանակի մեջ :

Առանց մի ակնթարթ անգամ չերկյուղ կրելու , կոմունիստա-
կան կուսակցությունը աննկարողելի յետանդով կազմակերպում
և Ռուսաստանի բանվոր դասակարգը՝ վճռական գիմադրություն
ցույց տալու համար թշնամիներին : Հափառարկմ նրա կոչին՝
խորհրդային արհմիությունները 1919 թվին բառիս բուն իմաստով
զենիի տակ են մտնում : ՀԱՄԿՈ—ի համարյա բոլոր աշխատողներն
ու հազարավոր միութենական պատասխանատու աշխատակիցներ
բազմաճակատ են ուղարկվում : Ռազմալայրերի արհմիության
բոլոր անդամները զորահավաքման են յենթարկվում : 1919 թվի
ապրիլի 30—ին ՀԱՄԿՈ—ը արհմիության բոլոր անդամների 10 %—ի
զորահավաք է հայտարարում : Այնուհետև 1919 թվի հունիսին ,
Խորհրդային Հանրապետությունների ամենամանր որերին , Ժող-
կովխորհը , արհմիությունների լիակատար համաձայնությամբ
զորահավաքման է յենթարկում արդյունաբերության , փոխա-
դրության և առևտրի բոլոր բանվորներին ու ծառայողներին՝
սկսած 18 տարեկան հասակից—48 տարեկանը : Դատարկվում էյին

Համաքառություններն ու գործարանի բաժինները, քաղաքներէջ հպարտ վստահ յերգերով չարունակ դուրս ելին գալիս նորանոր կարմիր ռազմախմբեր:

Մեկ անգամ, 1919 թվի սեպտեմբերին, Լենինի անվան գործարանում չհակները ահալոր սուլոց բարձրացրին: Դենիկինը վերջըրել էր Վարոնեթը և մոտենում էր Տուլային: Մեր բանակի թիկունքում վխտում էին Շկուրոյի ու Մամոնտովի ավերիչ զուգամակները: Յժամ չանցած՝ Նաղարովը մոտ հազար ընկերներէ հետ գնում էր գորահալաքաղաքը՝ զինվելու: Իմպերիալիստական պատերազմը վերջացավ սոցիալիստական հեղափոխության պայքարում և դարձավ քաղաքացիական պատերազմ:

Սակայն հակահեղափոխության որերն ել արդեն հաջմած էին: Բանվորա—գյուղացիական Ռուսաստանի ուժերի չտանված չափի յարումը, հերոսական կոմկուսակցության ղեկավարությամբ ընկճեց, խորտակեց գեներալներն ու լոտկի ուսաղերավորներն արչալանքը: Ամրոցը 1919 թվի ընթացքում Նաղարովի գունդը զիլիզիայի չարքերում չհչտակի կերպով դեպի Սև ծովը քշեց Դենիկինին, խորտակեց Յուդենիչին, Սիբիրում ջախջախեց գեո 1919 թվի ամբանը ջարդված Կուչակին: Նոր տարին—1920 թիվը կարծես հանգստություն էր խոստանում: Սպիտակ զվարդիական բանակներէջ մաքրված էին Ուկրայնան, Դոնը, Կուբանը, Հյուսիսային Կովկասը, Արեւմտյան ու կենտրոնական Սիբիրը: Վրաստանում, Ադրբեջանում ու Հայաստանում Խորհրդային իշխանություններ են: Հյուսիսում Սպիտակ ծովն և նետված անդլիական դեսանոր: Ճեղքված և վերացված և ըլոկադան: Կնքված են առաջին միջազգային պայմանագրերը՝ Եստոնիայի, Լիտվիայի, Լատվիայի ու Ֆինլանդիայի հետ:

Սակայն համաշխարհային բուրժուազիան դեռ չէր ուղում հանձնվել: 1920 թվի ապրիլին Նաղարովի գունդը նորից ծանր կռիւներէ մեջ է Անտանտայի վարձկան սպիտակ Լեհաստանի հետ: 1920 թվի աշունը զինադադար է ըրում Լեհաստանի հետ (իսկ 1921 թվի մարտը Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. համար պատվաւոր հաշտություն) և հենց այդ նույն աշնանը ուժերի նոր լարումն և պահանջվում, վորպեսզի հաշիվ մաքրվի Դրիմում բուն դրած վերջին սպիտակ զվարդիական ուժի—Վրանդելի հետ: 1921 թվի աշնանն արդեն Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ռազմական պայքարը վերջացած էր: Հակահեղափոխությունը մաքրված էր, Անտանտայի սպասաւորները

խաղը ամենուր էլ ինչ ավել: Խորհրդային Ռուսաստանը ուղղամահա-
կատներից աստիճանաբար անցնում է իր անտեսական խորունկ
վերքերի բուժմանը: Սկսվում է նոր ու յերկարատև հանգստի մի-
ջոցը—խաղաղ շինարարական շրջանը:

Սակայն, 1921 թվին չափազանց ծանր էր Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.
Ժող. տնտեսության վիճակը: Առաջվա պես Խորհրդային Ռուսաս-
տանը կտրված էր համաշխարհային տնտեսությունից, Արևմուտ-
քի բանվորներից չառ թե՛ քիչ լուրջ ուղնություն դեռ չէր ստաց-
վում: Յեւ զբա հետևանքը յեղավ այն, վսր ուղմական կոմու-
նիզմի շրջանում—(այսինքն 1919—1921 թվի յետմյալում) Ռ. Ս.
Ֆ. Խ. Հ. արդյունաբերությունը, վսր քաղաքացիական պատե-
րաղմների շնորհիվ քայքայվում էր անընդհատ (մանավանդ, վսր
վատելանյութերի, մետաղանյութերի և այլ հում նյութերի շըր-
ջանները—«Համառուսական հնոց» Դոնի ավաղանը, Ուրալը,
Բաղվի նաֆթը—յերկար ժամանակ սղխտակ գվարդիականների
ձեռքին էլին գտնվում), մյուս կողմից բլոկադայի շնորհիվ
կտրված էր արտաքին աշխարհից, այդ շրջանում շեչտակի կերպով
դեպի կործանում էր գնում: 1920 թվին տեկտոլի գործարանները
20 անգամ ավելի քիչ գործվածք էլին պատրաստում, քան նախա-
պատերաղմյան շրջանում. շուգունի գործարանները մշակում և-
լին 40 անգամ պակաս, քարածուխը 4 անգամ, հանքերը 60 անգամ
պակաս և այլն: Քաղաքացիական կռիվներից ու սղխտակ գվար-
դիականների ավերածություններից ատանձնապես շատ տուժեց
վտխաղրական գործը: Սարքից ընկած շուգեկառքերի թիվը
1920 թվին 3 անգամ ավելացավ, քան թե 1916 թվին էր, իսկ
սարքից ընկած վաղոնների թիվն ավելացավ 6 անգամ^{*)}:

^{*)} Այս ամենը ատանձնապես լավ պարզվում և հետևյալ
աղյուսակից:

Արդյունաբերված և	Նախա պատ. արդ. % 0/0-ով		
	1918 թ.	1919 թ.	1920 թ.
Քարածուխ	42	29	27
Նավթամթերք	44	49	41
Հանքեր	0,2	—	1,6
Չուգուն	12,3	2,7	2,4
Պողպատ	9,4	4,7	4,0
Պրոկատիկ	10,2	5,1	6
Բամբակի մանվածք	—	6,2	5

Պետական ծախսերը անընդհատ աճում ելին և վոչինչ չկար ալդ ծախսերը ծածկելու: Պետութունն ստիպված ե լինում ավելի ու ավելի մեծ քանակությամբ թղթադրամներ բաց թողնել, վորի հետևանքը լինում ե այն, վոր ամեն ինչի գները անխեղձակայիլի չափով բարձրանում են:

1921 թվին թղթի դրամանիշերը—խորհրդային ուրբլին իր արժեքը կորցրել եր 26,539 անգամ: Քաղաքը մասնատրման միջոցով գյուղից վերցնում եր պարենի ամբողջ ավելցուկը, իսկ փոխարենը վոչինչ տալ չեր կարողանում: Գյուղատնտեսութունը հետզհետե ավելի յեր ուժաթափ լինում: Գյուղացիական մասսաների մեջ մեծանում եր դժգոհութունը: Հեղափոխության յերկու հիմնական ուժերի՝ բանվորության ու գյուղացիության միջև գծաության վտանգ եր ստեղծվում: Յեւ վերջապես ժողտնտեսրէին կից բոլոր ալդ «գլխիկոմները» և «կենտրոնները» (կենտրոնական վարչությունները) չեյին կարողանում ղեկավարել խորհրդային ամբողջ արդյունաներությունը: Վարչական ամբողջ գործի կենտրոնացումը Մոսկվայում՝ թույլ չեր տալիս սեղերում աշխատողներին իրենց նախաձեռնությունն ու ինքնագործունեյությունը հանդես բերել: Այն հանգամանքը, վոր անհրաժեշտ եր լինում ամեն մի շնչին գործով, համարյա թե ամեն մի Փունտ մեխի համար կենտրոնին դիմել, գրասենյակային անտանելի ձեւականությունների ու դրադրությունների շարանների յեր հասցնում, ստեղծում եր ամե-

Սարբից բնկած շոգեմեքենաներ կային—1918 թ. 40,7%, 1919 թ. 51,7%, 1920 թ. 56,8%, սարբից բնկած վագոններ—14,7%, 18,2%, 20,7%:

Յանքի տարածությունը—1920 թվին 76,3%—ով նվազում ե—համեմատած 1916 թվի հետ և ստացվում ե 1916 թվի բերքի 37,3%—ը:

Բանվոր ձի 1917 թվին կար 22,725 հազար իսկ 1920 թվին 19,169 հազար գլուխ:

Կովեր—1917 թվին 21,452 հազ. իսկ 1920 թվին 20,212 հազ. գլուխ:

Սովի պատճառով բանվորական ուժերը սկսում են ցրվել գործարաններից: Ըստ Սարումելիին տվյալների 1917 թվին դոժարաններում կային 3,024 հազ. մարդ, 1918 թվին—2,486 հազ., 1919 թվին—2,035 հազ. և 1920 թվին—1,581 հազ. մարդ: Նվազում ե և աշխ-դիացիւլիւնան: Այսպես—խոշոր մեծագործարաններում աշխատանքից խույս տալու դեպքերը հասնում ե 30—50%—ի (նախապատերազմյան չրջանում 8%—եր):

նակոպիտ բյուրոկրատիզմ, վորն անթույլատրելի յե հատկապէս այնպիսի գործում, ինչպիսին ե արտադրութեան կառավարութեանը, վորը պահանջում ե ուշիմութեան, յեռանդ ու ճարպիկութեան: Վորպէս սեփականութեան պետութեանն եյին հանձնված առանց բացառութեան բոլոր գործարաններն ու զավոդները, սակայն ժողտնտեսութեան հաշիւը բոլորը գործի դնել չկարողացաւ. պակասում եր հում նյութը, վառելանյութը, միջոցները, գործը կառավարող ու ղեկավարող մարդիկ: Յեզ զա ամենից առաջ վերարկւում եր ցրված մանր ձեռնարկութեաններին, վորոնք վերանորոգման ու կառավարելու համար այնպիսի ծախսեր եյին պահանջում, վոր չեր կարելի սպասել, թե նույնքան ոգուտ կարող են տալ: Ահա այդպիսի ձեռնարկութեաններն անգործ եյին մնացել և քայքայվում եյին:

«Ռազմական կոմունիզմը» չըջանում քաղաքացիական անողորհոյից թույլ չեր տալիս մտածել արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան բարձրացման մասին, հեղափոխութեանը, ինչ գնով ել լինի, փրկելու խնդիրն ստիպում եր հաշտվել և պարեն—մատնատրման և «գլխովների» բյուրոկրատիզմի և ամեն բանի հետ: Սակայն 1921 թվին արդեն դրութեանը փոխվել եր: Պարզվեց, վոր քաղաքացիական կոմիւնիստ ծանր պայմաններում, «ռազմական կոմունիզմը» տարիներին կուսակցութեանն ստիպված ե յեղել շատ ավելի առաջ գնալու, քան թե հնարավոր եր Ռուսաստանի նրման մի յերկրում, վոր ունի հսկայական քանակութեամբ մանր ու բաժան—բաժան գյուղական տնտեսութեաններ և համեմատաբար թույլ զարգացած արդյունաբերութեան: Նա ստիպված յեզաւանցեց ինչպէս ընկեր Լենինն եր ասում, հնարավորութեան եր ստեղծվում «առաջ ընթանալ բաւական դանդաղ, բայց աշխատել, վոր ավանգարդի հետ առաջ ընթանան և բանվորական լայն մասսաները և մանավանդ—գյուղացիութեանը»:

Պատերազմական գործողութեանները դադարեցումը զգալի չափով թեթեացրեց յերկրի պարենամբարման ճգնաժամը: Հնարավոր եր արդեն գյուղացիներից չվերցնել նրանց հացի ավելցուկները: Ծանր պարեմ—մասնատրման փոխարեն մոցվեց պարենուտութիւն, վորով գյուղացին պարտավորվում եր պետութեանը տալ իր բերքի մի փոքր մասը (առաջվանից շատ ավելի քիչ), իսկ մնացածն ինչ ուզեր՝ կաներ. կուզեր կուռեր, կուզեր իր պահեստները կլըցնել, կուզեր կծախեր կամ կփոխանակեր այլ մթերքների ու ապ-

րանքները հետ : Բայց վորպեսզի գյուղացին կարողանար ծախել իր մթերքները և ձեռք բերեր այն ամենը, ինչ վոր հարկավոր էր իր տնտեսութեանը անհրաժեշտ և, վոր ընդհանրապես թույլատրվի առևտուրը (արգելված էր 1918 թվից) :

Հայտարարվում է առևտրի ազատութիւն. ազատ շուկա : Եկզրում թույլատրվում էր միայն գյուղացու ավելցուկ մթերքներին ու գործարանային ապրանքներին փոխանակութեան և այն եւ այն սահմաններում, ուր ապրում էր գյուղացին, բայց չուտով թույլատրվում է առևտուր անել ամեն տեղ :

Սակայն, բավական չէր, վոր թույլատրվում էր գյուղացուն ծախել իր հացը և դնել արդյունաբերական ապրանքներ : Հարկավոր էր հենց արդյունաբերութեանը կարգավորել, վորպեսզի նա պարողանա գյուղին տալ, վորքան կարելի չէ, շատ կարևոր ապրանքներ : Սկսվում է ամբողջ պետական արդյունաբերութեան ստուգում : Ընտրվում և արագ թափով գործի յեն դրվում փոքր-թիւ ձեռնարկութեաններ, վորոնք ամենախոշոր և ամենալավ կահավորվածներն էին : Յեւ հաջողվում է հարկավոր չափով ծանրաբեռնել այդ ձեռնարկութեանները : Վերջապես, վճռականապես փոխվում է և պետական արդյունաբերութեան կառավարելու ձևը : Խաղճական կոմունիզմի ամբողջ ժամանակաշրջանում մեր արդյունաբերութեանը լիովին կենտրոնացված էր : Սյգ կենտրոնացումը բյուրոկրատիզմի աճման պատճառ էր դառնում, բայց մենք առանց դրան յոյա դնալ չէինք կարող : Քաղաքացիական կռիվների պայմաններում մեր ամբողջ պետական առաջարատի լիակատար կենտրոնացումը գոյութեան ուներ վորպես յերկաթե անհրաժեշտութեան : Առանց այդպիսի կենտրոնացման մենք չէինք կարող ջանջախել սպիտակ գվարդիականներին :

Բայց ահա, վերջացավ քաղաքացիական կռիվը և հնարավոր յեղավ ժողովրդական տնտեսութեանը վարելու նոր ձև-վերի անցնել, այնպիսի ձևերի, վոր թույլ տան մեզ ազատվել «գլխավորից»-ի ստեղծած թերութեաններից—անցնել նոր տնտեսական քաղաքականութեան (ՆեՊ) : ՆեՊ-ի չրջանում արդյունաբերական կարեւոր ճյուղեր միայն մնում են կենտրոնացած (ոսպական արդյունաբերութեան, լեռնարդյունաբերութեան և այլն), իսկ մնացածն անցնում է տնտեսավարական հաշիվների : Սյգ նըշանակում է, Լենինի անվան նույն տեկատիլ գործարանը, վոր առաջ առանց Մոսկվայի Գլխտեկատիլի մի քայլ անգամ չէր կարող անել, այժմ միացել է մի քանի տեկատիլ գործարանների հետ ու

կազմել և նահանգային տեկատիլ տրեստ : Պետությունը , հանձնինս ժողտնտեսքիսորհի , այդ տրեստի վարչությանն և հանձնել գործարանները մեքենաներով , շենքերով , էլեքտրոկայանով , պահեստի հում նյութով , վառելանյութով , պատրաստի ապրանքների պահեստներով և այլն : Տվել և նույնպես անհրաժեշտ քանակությամբ գրամական միջոցներ բանվորներին վարձատրելու և արտադրությունը ղեկավարելու համար : Տրեստն իր արտադրական ծրագիրը կազմում է իր առանձին գործարանների արտադրական ծրագիրների հիման վրա , արտադրում է վորոշ քանակությամբ մանուֆակտուրա—յենթադրենք 500 ,000 արշին : Այդ մանուֆակտուրան առաջվա պես անմիջապես պետությանը չի հանձնում , այլ վաճառում է ինքը : Նա առևտրական հարաբերություններ և սկսում կոտպերացիայի , զանազան տնտեսավարական մարմինների ու մանավոր առևտրականների հետ , վաճառում է իր ապրանքը , նորից գնում է հում նյութ , վառելանյութ , վճարում է բանվորներին աշխատավարձը , նորից է ապրանք արտադրում և այսպես շարունակ :

Տրեստի մեջ մտնող ամեն մի գործարան վորոշ ինքնուրույնություն ունի : Նա ինքն է կարգադրում իր միջոցներն ու պահեստները՝ տրեստի հաստատած տնտեսական ծրագրի սահմաններում : Յերը նա ապրանք և հանձնում տրեստին , վերջինս պարտավոր է վճարել նրան : Ամեն մի գործարան կառավարվում է բոլորովին ինքնուրույն կերպով . կառավարում է տեսուչը , վորը լիովին պատասխանատու չէ արտադրության համար : Յեթե առաջ «գլխկոմները» գործարանը բարուրի մեջ էյին պահում և իրականության մեջ տեսուչը վոշ մի ղեկավար իրավունք չունեի , և ուրեմն վոշ մի բանել համար պատասխանատու չեի , ապա այժմ , յերը ամեն մի ձեռնարկության վորոշ տնտեսական ազատություն է տրված , անհրաժեշտ է դառնում և ղեկավարող անձի պատասխանատվությունը : Վորպեսզի տեղական առանձին տեկատիլ տրեստները չմրցեն իրար դեմ և դրա համար զուր տեղից ուժեր չվատեն , նրանք , իրենց առևտրական և մասամբ տնտեսական գործունեյությամբ միանում են Համագումարական տեկատիլ սինդիկատի մեջ : Վերջինս միացնում է^{*)} 73 տեկատիլ տրեստ , վորոնց մեջ աշխատում են ամբողջ տեկտատիլ արդյունաբերության (227,529 մարդ) 79 տոկոսը : Նա իր կազմի մեջ մտնող բոլոր տրեստների համար հայթհայթում է հում

^{*)} 1924 թվի սկզբներին :

նյութ (ջութ, բամբակ), վորոշ սահմաններ և դնում, ուր յուրաքանչյուր տրեստ պիտի վաճառի իր ապրանքը, ընենում և վճռում է, թե նպատակահարմար է իր կազմի մեջ մտնող տրեստների ընդարձակումը կամ փոքրացումը, վերջապես, ժողովարարո՞րհի կամ համապատասխան կոմիսարիատների առաջ միջնորդում և դանդաղան տուրքերի ու աքցիզային հասույթների համար հասույթ տրտնություններ առլ տեկտիլ արդյունաբերության և այլն:

Տրեստների ու սինդիկատների գործունեյության բարձրագույն հսկողությունը կատարում է ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը: Նա հաստատում է փոփոխում և արտագրական նախահաշիվները և ծրագրերը նշանակում է վարչություններ, վերակազմում է տրեստներ ու սինդիկատներ: Տրեստների վաստակած ամբողջ ոգուտը, իր ոգտին վորոշ մաս կատկացնելուց հետո, անցնում է պետության տրամադրության տակ: Այսպիսով, նոր տնտեսական քաղաքականության շրջանում պետությունը, իր բոլոր ձեռնարկությունների նկատմամբ իրեն է վերապահում միայն հսկողությունը նրանց աշխատանքներին, նրա հավատարմյունը, վարչության նշանակելն ու արձակելը, տնտեսության ընդհանուր ծրագրերը մշակելը: Մի խոսքով, ստեղծվում է պետական կապիտալիզմ, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում:

Սա բոլորովին այլ տեսակի կապիտալիզմ է: Գործարանները, տրեստներն աշխատում են, առևտուր են անում, վարկեր են վերցնում նոր կազմակերպված բանկերից, մասնակցում են տնտեսականության, բորսաների,—բայց առաջվա պես ելի պատկանում են աշխատավորության պետությանը, խորհրդային արդյունաբերության վաստակած ամեն մի ուրլին դնում է վոչ թե կապիտալիստի, այլ բանվորական պետության գրպանը, վորպեսզի ամէլի բարվոքվի ամբողջ բանվոր դասակարգի դրությունը: Խաղաղ շինարարական պայմաններում և նոր տնտեսական քաղաքականության շնորհիվ Ռուսաստանի ժողովրդական տնտեսությունն սկսում է բարձրանալ խիստ արագ թափով: 1920 թվին արդյունաբերությունն ընկել էր մինչև նախապատերազմյան շրջանի 14 տոկոսը, 1923 թվին արդեն նա միջին թվով հասնում է նախապատերազմյան 30 տոկոսին, իսկ 1924 թվին—50 տոկոսին: Գյուղատնտեսությունը դեռ 1923 թվին յերեք քառորդով

վերականգնում է իր արտադրողական ուժերը, իսկ 1924 թվին համարյա ինը տասներորդով^{*}) :

ԲԵԿՄԱՆ ՄՈՄԵՆՏ Խաղմական կոմունիզմի շրջանից տըն-
ԱՐ ՀՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ : տեսական նոր քաղաքականությանն անցնե-
ԴԻՍԿՈՒՍԻԱ ԱՐ Հ- լու շրջանը մի շատ հիվանդագին շրջան
ՀԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ : եր : Վերջացել էր քաղաքացիական պատե-
րազմը : Գյուղացիության հետ ռազմա-
քաղաքական միության փոխարեն պետք էր ստեղծել տնտեսա-քա-
ղաքական միություն : Անհրաժեշտ էր նաև նկատի ունենալ, Վոր

^{*}) Շատ խոշոր են Խ. Ս. Հ. Մ.-ի տնտեսական հաջողու-
թյունները 1922—1924 թվերի շրջանում : Ֆանքսերի տարածու-
թյունն ու բերքը 1922 թվին արդեն հասել էր նախապատե-
րազմյանի 75 %-ին իսկ 1924 թվին—88 %-ին : Կարևորագույն
կուլտուրաների մշակույթի ցանքսի մակարդակը—բամբակը 1922
թվի 52,000 գեոյատինից 1924 թվին հասավ 419,000 գեոյա-
տինի, կտավատը 1922 թվի 169,000 գես. 61924 թվին հասավ
1,065,000 գեոյատինի, ճակնդեղը (տակը) 1922 թվի 169,000
գես.—1924 թվի 320,000 գես. : Խոշոր յեղջուրավոր անասուն-
ների թվի աճումն էլ նույն շրջանում հավասար է 32 %-ի, խո-
զերինը—200 % և այլն :

Արդյունաբերության աճումը բնորոշելու համար, չափա-
դանց հետաքրքիր է հետևյալ աղյուսակը .

Արդյունաբերության ճյուղերը	Արտադրութի 0/0-ը համե- մատած 1913 թվի հետ			Արտադրված է 1923-24 թվին (բացարձակ թվեր.)
	1922	1922-23	1923-24	
Հանածո—ածուխի	34	37	53	905,3 միլ. փ.
> հանքի	2,2	5	—	—
> թուջի	3,9	7,9	15,6	40,053 հազ. փ.
Պողպատ	7,4	14,8	22,9	60, միլ. փ.
Պրոկատկա	7,1	13,7	19,6	41,7 » »
Նավթ	51	56,6	66%	369,3 » »
Բամբակի մանվածք	19	27	36,4	828,4մ.հետր գործվ.
Բրդի արդյունաբերութ.	30	36	50,9	27,7 » »
Վուշի արդյունաբեր.	45	—	86,2	107,2 » »

դյուզապետութեան արամադրութիւնը իր արտահայտութիւնն եր
գտնում եւ բանվորական մասնաձեւերի մեջ, մասնավորապէս այն
պատճառով, վոր բանվորները չափազանց արդէն հոգնել ելին
ուղղմական կոմունիզմի շրջանում չլսված չափով իրենց ուժերը
լարելուց։

Այսպիսի բարդ պայմաններում ինչպե՞ս կարելի յեր յուծել
արհեստակցական միութիւններին նպատակների հարցը։ Խնդրին
տոնենաճիշտ մոտեցումը այսպէս կարող եր լինել. նախապէս հաշվի
տոնել անցողիկ շրջանի բոլոր քաղաքական ու տնտեսական պայ-
մանները, նկատել (նշանակել), թե այդ պայմանները ինչ ուղ-
ղութեամբ են փոփոխվում, ճշտորեն վորոշել այն դերն ու փոխ-
հարաբերութիւնը, վոր գոյութիւն ունի բանվոր դասակարգի ու
գյուղացիութեան միջև։ Յեզ վրանից հետո միայն, այդ բոլորի հի-
ման վրա կարելի կլինի ասել. «Ահա այս ուղիով կդնա մեր արհես-
տակցական շարժումը։ Այսպիսի խնդիրներ պիտի ունենա նա»։

1920 թ. վերջերում տնտեսական նոր քաղաքականութեան
տեսնելու անհրաժեշտութիւնը դեռ բավարար չափով չեր գիտակե-
ցրվում, նա զգացվում եր միայն, եւ բնական եւ, վոր ճիշտ ճանա-
պարհներ վորոնելու ընթացքում շատերը պարզապէս շեղվում ելին
ճանապարհից։ Այդ վորոշումները, վոր հուզեցին կոմունիստական
կուսակցութեան լայն խավերը, անսպասելի մի դիտկութիւն ստեղ-
ծեցին արհեստակցական միութիւններին մասին։

Դիտկութեան ընթացքում յերեք գլխավոր հոսանքներ աչքի
յնկան։ Նրանցից առաջինը, վորի գլուխ կանգնած եր ընկեր Տրոց-
կին, խնդրին այսպէս եր մոտենում. միութիւնները ծանր ճգնա-
ժամ են ապրում։ Բացի բնդհանուր պատճառներից, — քաղաքա-
ցիական պատերազմ եւ այլն, — ճգնաժամի գլխավոր պատճառն այն
եւ, վոր իրր թե, միութիւնները բավարար չափով չեն իրականաց-
նում այն խնդիրները, վոր դրված են նրանց վրա ուղղմական կո-
մունիզմի շրջանում, նրանք բավարար չափով քաշված չեն մեր
Ժողովրդական տնտեսութեան շինարարութեան աշխատանքների
մեջ։ Ուրիշ այդքան կարեւոր խնդիրներ միութիւնները չունեն,
վորովհետեւ պրոլետարիատի գիտատուրայի յերկրում կարեք
չկա, վոր արհմիութիւնները պաշտպանեն բանվորների տնտեսա-
կան շահերը։ Վատ իրադրոճելով իրենց հիմնական խնդիրները,
արհմիութիւնները դառնում են մեռած բյուրոկրատական կազ-
մակերպութիւններ։ Այդ դրութիւնից դուրս գալու միջոցն այն եւ,
վոր «Թափ արվեն» միութիւնները, թարմացվի նրա գործիչները

կազմը, վորքան կարելի յե, ալելի միացնել միությունները արև-տեսական մարմիններին: Ընկ. Տրոցկու կարծիքով, մոտ ապագա-յում, անտեսական մարմինների կառավարչությունը կարելի էլի-նի և բոլորովին արհմիություններին հանձնել, վորոնք այդ ժամա-նակ կծուլվեն անտեսական մարմինների հետ: Խնդիրը շատ նեղ էր դրված: Դուրս եր գալիս, վոր, իբր թե, արհմիությունների մեջ կատարվող բոլոր յերևույթները շատ քիչ կախումն ունեն այն փոփոխություններից ու շարժումներից, վորոնք հասունանում էին նրանց չըջապատող պայմաններում: Հենց արհմիությունների դերն ընկեր Տրոցկին սխալ էր պարզաբանում և յերբ միություն-ների խնդիրներն էր մատնանշում, նա միշտ վոչ թե առաջ, այլ հետ էր նայում:

Ընկ. Լենինը դիսկուսիայի ժամանակ իր ճառերով շատ հրա-շալի կերպով ցույց տվեց այդ բոլոր թերությունները: Այո, ար-հեստակցական միություններում ամեն ինչ այնքան էլ հեշտ ու հանգիստ չի ընթանում: Ռազմական կոմունիզմի չըջանում մենք անխուսափելի կերպով ստիպված էլինք լինում գլխավորապես «հրամանատարություն անել» միութենական աշխատանքների նկատմամբ, մեր միություններում յերևան յեկավ և բյուրոկրա-տական ապպարատ: Բայց խնդիրն այն չի, թե հարկավոր է «թափ-ւալ» միությունները կամ նրանց ականջից բռնած քաշել գեպի անտեսական աշխատանքները:

Մենք «անցողիկ չըջանում անցողիկ չըջան» ենք ապրում:*)

Նկատվում են բանվոր դասակարգի ու գյուղացիության նոր փոխհարաբերություններ, նոր տրամադրություններ հենց իրեն—բանվոր դասակարգի մեջ: Ինչ են միությունները կուսակցության համար, դա այն ողակն է, վոր միացնում է կուսակցությունը աշ-խատավորական լայն մասսաների հետ: Վո՞րն է այսորվա խոն-դիրը. «Այժմ խնդիրն այն է, թե ինչպես մոտենալ մաստային, տի-րապետել և կապվել նրա հետ, ինչպես կարգավորել աշխատանքի բարդ նախատվայները, այն աշխատանքի, վոր տարվում է պրո-լետարիատի դիկտատուրան իրականացնելու համար»**):

Այն հիվանդագին դրությունը, վոր ապրում են միություննե-

*) Լենին.—«Արհեստակցական միությունների ընթացիկ մո-մենտի և ընկ. Տրոցկու սխալի մասին».—«ժողովածու «Հոդ-վածներ ու ճառեր արհչարժման խնդիրների շուրջը»» (Հրատ-չվածք-ի), 319 յերես:

**) Նույնը՝ 311 յերես:

քը, վոչ թե անկժան հիվանդություն է, ինչպես կարծում է ընկ. Տրոցկին, այլ ամսան հիվանդություն է մեր տնտեսական քաղաքականութեան նոր շրջադարձի (поворот) նախորդակին: Ամենինն էլ այդ չէ միությունների հիմնական խնդիրը: Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում արհեստակցական միությունները կապ են ստեղծում ավանդարդի և մասսայի միջև, իրենց առարկա աշխատանքներով արհեստակցական միությունները համոզում են մասսաներին, այն դատակարգի մասսաներին, վորը միայն կարող է մեզ դուրս բերել կապիտալիզմից և տանել դեպի կոմունիզմ: Այս մի կողմից: Մյուս կողմից միությունները պետական իշխանության «պահեստն են»: «Միությունները դպրոցներ են կառավարելու, դպրոցներ են տնտեսություն վարելու, դպրոցներ են կոմունիզմի»^{*)}:

Այս բանը հիմնովին յուրացնելուց հետո միայն պիտի վճռել, թե ինչով պիտի զբաղվեն արհմիությունները:

Կարելի^{*)} չէ արդյոք միություններին—«կոմունիզմի դպրոցին» այն հասարակ մտեցումն ունենալ, թե պետք է «թափահարել» ի հարկե, մո՛չ: Վնասակար է մասսայական կազմակերպությունն այդ ձևով զեկավարելը:

Այնուհետև, ասում է Լենինը, — ընկեր Տրոցկին նորից սխալի մեջ և ընկնում, յերբ առաջարկում է միությունները միաձուլել տնտեսավարական մարմինների հետ: Ամենինն էլ կարևորն այն չէ, գոր արհմիությունների վերին խավերն արտագրոթյունը ղեկավարող վարչական ապարատներ դարձնենք: Հարկավոր է միությունն անդամների ամբողջ բազմամիլիոն մասսային սովորեցնել և այն էլ յերկար ու լուրջ կերպով սովորեցնել այդ կառավարելու յեղանակները: «Արդյո՞ք սո՞ւն մի բանվոր գիտե, թե ինչպես պիտի կառավարել պետությունը: Մեզ մոտ միլիոնավոր արհեստակցականորեն կազմակերպված բանվորներ նույնն են պարում, ինչ վոր մենք ասացինք, թե միությունները կոմունիզմի և կառավարչութեան դպրոցներ են: Յերբ նրանք կանցնեն այդ դպրոցներով, կառավորեն այդ բոլորը, բայց դա տեղի չէ ունենում դանդաղ»^{**)}:

Յուրաքանչյուր շտապողականություն և առաջարկություն արհմիությունները պետորգաններին միացնելու, վնասակար են, և արհմիությունների հիմնական դերը չհասկանալու հետևանք

^{*)} Նույնը՝ 309 յերես:

^{**)} Նույնը՝ «Տրոցկու սխալները շտապողականութեան մեջ են» յերես 368:

են : «Դա հեռավոր ապագան է , յերբ արհմիությունները հարցա-
կանի տակ կկանգնեն , մեր թուները կխոսեն դրա մասին» :

Շտապողական ու սխալ է նույնպես ընկեր Տրոցկու և այն
հայտարարությունը , թե պետք է կատարել միացումը (արհմետ-
և տնտես . մարմինների) նաև այն պատճառով , վոր իրր բանվորա-
կան պետության մեջ արհմիություններն սպառել են իրենց այն
խնդիրը , վոր պետք է պաշտպանեն բանվոր դատավարգի նյութա-
կան ու հոգեկան շահերը :

Դա սխալ է , ասում է ընկ . Լենինը , մեր պետությունը բանվո-
րական է , բայց ինչպիսի՞ : Մեր կուսակցական ծրագրից ել արդեն
յերևում է , վոր մեր պետությունը բանվորական է , բյուրոկրա-
տական ալլասնումով (извращение) :

Մեր այժմյան պետությունն այնպիսի պետություն է , վոր
գլխովին կազմակերպված պրոլետարիատը պիտի պաշտպանի իրեն ,
իսկ մենք պետք է ոգտագործենք այդ բանվորական կազմակերպու-
թյունները , մի կողմից բանվորների ամբողջ պետությունից
պաշտպանելու համար և մյուս կողմից ամբողջ պետությունը բան-
վորների միջոցով պաշտպանելու համար :

Ի՞նչ է նշանակում այս բոլորը : Վոր բանվորները դատակար-
դային պայքար են մղում հենց իրենց բանվորական պետության
դեմ : Ի հարկե , վո՛չ : Խորհրդային պետությունը յերկնքից չի ըն-
կել , բանվոր դատակարգն իր գեղեցիկ ապագան կերտում է «մինչև
ծնկները խրված այն ցեխի մեջ» , վոր ժառանգություն է թողել նը-
րան կապիտալիզմը : Խորհրդային մարմինների բյուրոկրատիզմն
եւ հնի ժառանգություն է : Միանգամից վերացնել չի կարելի : Արհ-
միությունները պիտի պայքարեն այդ բյուրոկրատիզմի դեմ , պի-
տի պաշտպանեն իրենց անդամների առոյգա նյութական ու հոգե-
կան շահերը : Այդ պայքարի մեջ մաստան պետք է վորքան կարելի
յե լավ հասկանա կոմունիզմի շինարարության խնդիրները , պիտի
ոգնի կուսակցությանը բարելավել բանվորական պետությունը :

Զարմանալի չե ընկ . Լենինի խորաթափանցությունը : Ռեզ-
մական կոմունիզմի չըջանում բանվորների նյութական ու հոգե-
կան շահերի պաշտպանության հարցը հետին շարքերն եր գցված :
Բայց հենց վոր վերջացավ քաղաքացիական պատերազմը , Լենինն
անմիջապես պարզ ու վորոշակի միությունների առաջ դրեց այդ
խնդիրը : Այնուհետև , մեկ տարի հետո , 1921 թվին , ընկեր Տրոց-
կու հետ րացված վեճի առթիվ առաջադրած իր հիմնական խնդիր-

ներն ընկ . Լենինը զարգացնում ու հիմնադրում է իր զարմանալի պարզ հատուկ թեզիսներում , վոր վերաբերում են արհմիությունների խնդիրներին տնտեսական նոր քաղաքականության պայմաններում :

Մեզ մնում է այստեղ քննել յերրորդ հոսանքը , վոր յերևան յեկավ դիսկուսիայի ժամանակ և պաշտպանվում էր Շլյապնիկովի խմբակի կողմից (այսպես կոչված՝ «բանվորական ուղղուղիցիա») :

Այս խմբակը ցանկանում էր «միությունացնել պետությունը» , պահանջում էր , վոր արդյունաբերության կառավարությունն անմիջապես անցնի արհմիությունների ձեռքը և վերացվեն տնտես . մարմինները : Դժվար չե նկատել , վոր այդ խմբակը պարզապես տանում էր դեպի մանր-բուրժուական սինդիկալիզմը (վորի մասին արդեն մանրամասն ասվեց 2-րդ դրսում) : Այստեղ բերենք միայն սինդիկալիզմի բնորոշումն այնպես , ինչպես տվեց ընկ . Լենինը , վոր անողորձաբար հարձակվեց «բանվորական ուղղուղիցիայի» վրա . (Ռ . Կ . Կ . 10-րդ համագումարի բանաձևը) :

«Մարքսիզմը մեզ սովորեցնում է , վոր միայն բանվոր դասակարգի քաղաքական կուսակցությունը , այսինքն կոմունիստական կուսակցությունը կարող է համախմբել , կազմակերպել պրոլետարիատի ու ամբողջ աշխատավոր մասսայի այնպիսի մի ամփնգար , վորն ընդունակ է ընդդիմանալու այդ նոր մասսայի մանր-բուրժուական անխուսափելի տատանումներին ու նեղ արհեստակցականության անխուսափելի հանցագործություններին կամ արհեստակցականության նախապաշարումներին : Նա միայն կարող է ղեկավարել պրոլետարական շարժման բոլոր կողմերը , ուրեմն և բոլոր աշխատավոր մասսաներին» : Իսկ ժողովրդական տնտեսության կառավարությունը անմիջականորեն արհմիություններին հանձնելուց դուրս կգա , վոր «աչքաթող է արվում և վերացվում է կուսակցության ղեկավարողի և դաստիարակողի դերը պրոլետարիատի արհեստ . միությունների նկատմամբ , ինչպես վերջինիս ղեկավարի ու դաստիարակի դերը՝ կիսամեջշանական ու պարզապես մանր-բուրժուական աշխատավորական մասսայի նկատմամբ» :

Այսպիսով փոխանակ խորհրդային իշխանության սկսած շինարարական աշխատանքները շարունակելուն , տնտեսական նոր ձևեր գտնելու , կստացվի աշխատանքի մանր-բուրժուական-անարխիստական կոմանդումը , վորն ընդունակ է հասցնել մեզ միայն բուրժուական հակահեղափոխության հաղթանակին» :

Կուսակցութեան 10-րդ համագումարը անդառնալի կերպով դատապարտեց ընկ. ընկ. Տրոցկու և Շլյապնիկովի բռնած դերքը : Նոր տնտեսական քաղաքականութեան պայմաններում արհեստակցական շարժումը վստահորեն մտաւ նոր ուղի , մի ուղի , վոր լուսափորված է լենինյան հանճարեղ մաքի ճառագայթներով :

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ամբողջ 1921 թվի ընթացքում և ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆեՊի-ի 1922 թվի սկզբներին Խորհրդային ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ . յերկրում մարում էլին հակահեղափոխութեան վերջին բռնկումները : Կարմիր բանակի այն զորամասը , վորի մեջ ծառայում էր Նազարովը , մասնակցեց Բուլակ—Բալախովիչի ու գեներալ Պերեմիկինի բանգաների վոչնչացմանը , իսկ հետո մի քանի ամիս շարունակ սահմանապահի պարտականութիւնն էր կատարում մեր և Լեհաստանի սահմանագծի վրա : Յեւ 1922 թվի աշնանը միայն զորացրման յենթարկված Նազարովը նորից վստք դրեց «Լենինի անվան» զործարանի բակը :

Վաղուց արդեն մտիւ էր : Գործարանի հսկա բակը շատ մայի ու մոայլ կլինէր , յեթե աջակողմի յերկհարկանի փոքրիկ շէնքից լուսի մի խուրձ չընկներ բակը և չլավեր ձայների մի աշխույժ աղմուկ : Նազարովը մոտեցավ պատշգամբում հավաքված բանվորների խմբին :

— Ես ի՞նչ կա այստեղ , ընկերներ , և վո՞րտեղ կարող եմ գտնել Բոգինին :

— Նա՞ , նա այսօր այստեղ—ակումբում գեկուցում է տալիս «ՆեՊ»-ը և արհմիութիւնների խնդիրները՝ նյութի մասին : Բայց արդեն շատ վաղուց և սկսվել , բաժանան ուշացել էր :

Նազարովը շնորհակալութիւն հայտնեց և խիտ ամբոխի միջով մի կերպ դահլիճը խցկվեց : Այդ նոր վերանորոգված հսկայական շէնքում չող էր , տոթ ու ծխախոտի միտով լցված : Խոշոր ելեքտրական լամպաների լույսը մարդու աչքեր էր ծակում : Դահլիճն ընդարձակ էր , բայց այնքան էլ յերկար չէր , և Նազարովը շատ պարզ տեսնում էր գեկուցողի գեմքը : Բոգինը համարյա թէ չէր փոխվել , նա մաքուր ածիրված էր և այդ պատճառով էլ ավելի նիհարած էր թվում : Զայնն էլ այնպես էր , ինչպես միշտ . վոչ շատ բարձր , բայց պարզ , հնչյուն :

— ...Այժմ , ընկերներ , ձեզ բոլորիդ պարզ է , վոր այդ տնտե-

տական նոր քաղաքականությունը ամենեւին Սորճրդային իշխանութեան թուրացում չի նշանակում: Առաջվա նման այժմ էլ պրոլետարիատի ձեռքում են մնում ամբողջ քաղաքական իշխանությունը, արդյունաբերութեան բոլոր ղեկավար ժառմինները, ագրոգրացրած խոշոր ու միջակ ձեռնարկությունները, փոխադրական միջոցները, արտաքին առևտրի մենաշնորհը նույնպես պրոլետարիատի ձեռքումն է գտնվում: Իսկ յեթե այդ այդպես է, յեթե տրեւտեական նոր քաղաքականությունն ամենեւին չի նշանակում պրոլետարիատի ղեկատաւութիւնը հրաժարում կամ նրա թուրացում, ապա ուրեմն անփոփոխ է մնում և Ռուսաստանի արհեստակցական միությունների նպատակը, այն է—հենարան դառնալ այդ պրոլետարիատի ղեկատաւութիւնն և անդադար պայքար մղել վերջին հաշիւով կոմունիզմն իրականացնելու համար:

— Սակայն և այնպես փոխվել է մեր տնտեսական անմիջական շրջապատը, ուրեմն և անխուսափելի կերպով փոխվել են և արհմիությունների մոտավոր նպատակները: Այս ամենն իր ժամանակին հաշիւի յետեւ կոմունիստական կուսակցությունը—Ռուսաստանի արհմիութեան առաջնորդը: Անցյալ տարեմ (1921 թվի) դեկտեմբերին հրապարակվեց Ռ. Կ. Կ. Կ. Կ. բանաձեւը արհմիությունների նոր խնդիրների մասին, վեր կազմել էր Վլադիմիր Իլյիչը: Այդ բանաձեւում զարմանալի պարզ ու փորոշ կերպով ցույց են տված մեր հետագա ուղիները: Այդ բանաձեւի մեջ համաքօմ ու զարգացրած են նույնպես շատ ու շատ բան, վեր գրել ու տսել է րնկեր Լենինը նոր անցած արհմիությունների մասին բացված դիտկուսիայի ժամանակ: Այդ բանաձեւը խրախուսվեց 1922 թվի դեկտեմբերին, ՀԱՄԿԽ-ի հատկապես այդ խնդրի համար հրապարակված պլենումի կողմից: Ռ. Կ. Կ. Կ. Կ. բանաձեւում ամենից առաջ հարց է դրվում այն մասին, թե ինչ վերաբերմունք պիտի ունենան միություններն արտադրությունը կառավարելու հարցերի նկատմամբ: Քանի վեր արդյունաբերությունը ղեկավարող խորհրդային մարմինները կազմակերպվել ու շատ թե քիչ ամբողջով են, քանի վեր ձեռնարկությունները անցել են տնտեսավարական հիմունքների և կառավարվում են իրանձնյա տեսչի միջոցով, վերը յիշվին պատասխանատու յե իր ամբողջ աշխատանքի համար, ապա ուրեմն «ձեռնարկությունների կառավարչութեան անմիջականորեն խառնվելու ամեն մի փորձն արհմիությունների կողմից, այս պայմաններում, պիտի համարել վնասակար ու անթույլատրելի»:

Մեր տեսուչը մեծ պարտականություն է կրում իր վրա դարձաբանի դրության ու աշխատանքների համար, ապա ուրեմն՝ նա պետք է ունենա և աշխատանքի ազատություն ու խոշոր իրավունքներ։ Յեթե ռազմական կոմունիզմի շրջանում ձեռնարկության մեջ, անհրաժեշտությունից ստիպված, յերկու տերեր կային, — մեկը տեսուչը և մյուսը տնտեսական աշխատանքի մեծ մասը փաստորեն իր ուսերի վրա կրող դարձարկումը, ապա այժմ, ՆԵՊ-ի պայմաններում դարձարկումը նախկին «տիրական» իրավունքներն ունենալ չի կարող։ Շատ լավ է տեսլ ընկ. Տաճկին, թե — «Արհեստակցական միությունները պիտի պարզեն իրենց համար, վոր հավասար իրավունքները հավասար պատասխանատվության են հասցնում, իսկ յերկու տարբեր կազմակերպությունների պատասխանատվությունը արդյունաբերության կառավարության գործում, փաստորեն նշանակում է լիակատար անպատասխանատվություն»։

— Ի հարկե, դա ամենևին չի նշանակում, թե միությունները յերես են դարձնում արտադրությունից։ Նրանք և վոչ մի բոսկի չեն հրաժարվում մեր ժողովրդական տնտեսության հոգսից ու աշխատանքից։ Բայց ինչպե՞ս են շարունակում հոգ տանել նրա մասին։ Նրանք պետք է ուսումնասիրեն իրենց արտադրությունը, ոգնեն տնտեսական մարմնին յերեսն հանել բոլոր թերությունները — վառելիքի, ջրի, վառումը, հում նյութի վատ վերակի լինելը, դարձարանի սխալ կահավորումը և այլն։ Նրանք պետք է հետեն, վոր լավ կազմված լինի արտադրողական ծրագիրը, ճիշտ լինի կալկուլացիան, չափից դուրս վերադիր ծախսեր չլինեն, և պիտի զրգեն տնտ. մարմիններին լավացնել արտադրությունը։ Միությունները մասնակցում են այն բոլոր մարմիններին, վորոնք համախմբում և ուղղություն են տալիս արդյունաբերությանը — Նահատնախորհ, Նահժողտնտխորհ, Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդ, Ժողտնտգերխորհ և այլն։ Մի խոսքով միությունների այս ամբողջ տնտեսական աշխատանքը մնում է վորպես շատ արժեքավոր ու կարևոր աշխատանք։

— Առաջ, որինակ, արհմիությունը դարձարան էր ուղարկում մի տեսուչ և վերջացավ. դրա թեկնածությունը պարտադիր էր համարվում է Գլխամի և Նահժողտնտեսխորհի համար։ Այժմ ի հարկե, այդպիսի կարգ չկա, բայց, ինչպես բանաձևի մեջ է տված, «առաջվա պես արհմիությունների կարևորագույն խնդիրն —

բից մեկն էլ այն է, «վոր նրանք բանվորական ու բնագնահատական աշխատավորական մասսաներից ստաջ քաշեն ու պատրաստեն վարչական անձնավորութիւններ (ադմինիստրատորներ)»։ Մենք պետք է վորոնենք բոլոր գործարաններում, բոլոր բաժիններում, յերևան հանենք մինչև այժմ անհայտ, բայց անշուշտ գոյութիւն ունեցող այն բանվորներին, վորոնք ապագայում կարող են լինել «անտեսական Ֆրոնտի բանվոր հրամանատարներ»։ և ապա մեր խորհրդային անտեսական մարմինների հետ միասին ստաջ քաշել այդպիսի ընկերներին և հասցնել պատասխանատու աշխատանքներին։ Արհմիութիւնները վաղ միայն ստաջ են քաշում այդպիսի ադմինիստրատորներ, այլ և նախապատրաստում են։ «Ժողովրդական տնտեսութիւնը բարձրացնելու և Խորհրդային իշխանութիւնն ամրապնդելու համար—ստաջ է բանաձևը—ամենուրեքականն այն է, «վոր հաշվի առնվի միութիւնների կատարած աշխատանքի հսկայական փորձը տնտեսութիւնը կազմակերպելու ու ղեկավարելու ուղղութեամբ, ինչպես և սխալները, վորոնք պակաս վնաս չեն հասցրել անմիջական անպատրաստ, անտեղյակ ու անպատասխանատու կերպով վարչական գործի մեջ խառնվելու հետեանքով, վոր զիտակցւորեն ու վճռականապես անցնի համառ գործնական, մտածված և յերկար տարիների պրակտիկ աշխատանքի փորձի վրա հիմնած ձեռք նախապատրաստելուն բանվորներին ու աշխատավորներին, վորպեսզի սովորեն նրանք սամբողջ յերկրի ժողովրդական տնտեսութիւնը կառավարել»։

Հետևապես, մեր գործարկումը այլևս մի փոքրիկ տնտեսական մարմին չի լինի՝ մինչև ականջները խրված հում նյութի, գառնլանցութի, արտ-հազուստի, մթերամսի և այլ խնդիրների մեջ։ Տնտեսական նոր քաղաքականութեան պայմաններում մեր ստաջ մի նոր հիմնական խնդիր է դրվում.—վորքան կարելի յե լավ ապահովել ու պաշտպանել բանվորների նյութական շահերը և բարելավել նրանց կենցաղը։

Ի հարկէ, ռազմական կամուրջով չըջանում, յերբ մենք, քայքայված ու սովի մատնված վերջին ճիգերն էլինք թափում, արշաւ վերջին կաթիլն էլինք գոհում, վորպեսզի ջախջախենք մեր և տուրքերկրյա բուրժուազիային և ապահովենք Խորհրդային իշխանութիւնը, այդ չըջանում ի հարկէ, դժվար եր այդ մտօին խտելը։ Իսկ այժմ, յերբ մեր ժողովրդական տնտեսութիւնը սկսում է լա-

վածայ, հետազոտություն և ստեղծվում լավացնելու և աշխատավարձն ու բանվորի կյանքի ալլ պայմանները:

— Միությունների ալլ աշխատանքը առանձնապես կարևոր և այն պատճառով, վոր մեզ մոտ մի կողմից յերևան և յեկեղ «Նեպոմանք» — մոսնավոր գործարանը, վորը առիթ և վորոնում առաջվա պես տարկացնելու իր բանվորներին, իսկ մյուս կողմից պետական արդյունաբերությունն անց և կացրված տնտեսավարական հիմունքներին: Ահա հենց ալլ «տնտեսավարական հիմունքները» հատուկ խնդիրներ են գնում միությունների առաջ: Յեղ իսկապես, ամեն մի տեսուչ — գործարանի կառավարիչ հարկավոր չափով հող չի տանի, վոր իր ձեռնարկության բանվորները վորքան կարելի յե շատ աշխատավարձ տոտանն ու հնարավոր չափով լավ պայմաններում ապրեն: Նա ձգտում և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, աշխատում և այնպես անել, վոր խորհրդաքին գործարանը վորքան կարելի յե շատ ոգուտ տա: Պատահում և, վոր այսպես մտածելով նա չափից ավելի առաջ և գնում. այսպես՝ այն միջոցները, վոր կարելի յեր հատկացնել աշխատավարձին, նա առաջին հերթին հատկացնում և հում նյութի, շենքի կամ կահավորության վերանորոգման և այլն: «Աչքերը չափաի փակել այն փաստի առաջ», ասում և րնկ. Տոմսկին, «վոր անվնասության սկզբունքը ներկա պայմաններում իրականացնել կարելի յե այն դեպքում, յերը տնտեսական ամբողջ իշխանությունը կենարոնացվի վարչատնտեսական մարմինների ձեռքում, և պահանջվի, վոր նրանք հատուկ ուշադրություն դարձնեն ալլ խնդրի իրականացման վրա: Այս հանգամանքը անշուշտ մրցություն կտեղծի մյուս բոլոր տնտեսական ձեռնարկությունների մեջ: Այս պայմաններում գործարանային վարչությանը պարտավորեցնել, վոր նա իր ամբողջ գործունեությունը, կարգադրություններն ու ձեռնարկած կոնկրետ միջոցները համաձայնեցնի բանվորների նյութական շահերին և միանգամայն համապատասխանի նրանց — նշանակում և խրվել անիրագործելի իդեալիզմի մեջ, նշանակում և սպասել նրանցից այն, ինչ վոր չեն կորոզ իրականացնել, վորքան ել ցանկանան»^{*)}:

— Դեռ լավ և, վոր մեր գործարանի տեսուչն և րնկ. Սերգեյը, վոր ինքն ել հին բանվոր և ու կուսակցական: Բայց ի՞նչ դրության

^{*)} Մ. Տոմսկի. — «Պրոֆմիությունները նոր ուղիների վրա», յերես 17.

մեջ կլինեն այն դործարանի բանվորները, վորտեղ մի ինչպիսի հին մասնագետ ե նստած, վորը ճարպիկորեն համակերպվել է Խորհրդային իշխանութիւնն ու աշխատում է այդ դիմակի տակ ել հիւրընդունկրատական խաղերը առաջ տանել: Ահա թե ինչու սոցիալիզացիայի յենթարկած ձեռնարկութիւններում արհմիութիւնների վրա պարտականութիւնն է դրվում պաշտպանել աշխատավորների շահերը, հնարավորութեան սահմաններում աշխատել յաւանքել նրանց նյութական ու կենցաղային պայմանները, շարունակ ուղղել տնտեսավարական մարմինների սխալներն ու հափազանցութիւնները այնքան, վորքան դրանք հետեանք են պետական պարտի բյուրոկրատական այլասեռման^{*)}:

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ
ՏՍՐԻՖՆԵՐԻՑ ԴԵՊԻ
ՀԱՎԱՔԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

— Իսկ ինչպես են արհմիութիւնները պաշտպանում բանվորների նյութական շահերը՝ ամենից առաջ հսկափական պայմանագրերի միջոցով: Ինչու առաջացաւ համաքական պայմանագիր կնքելու անհրաժեշտութիւնը: Ձեռնարկութիւններն անց են կացրված տնտեսավարական հիմունքների: Դրանով ամեն մի տնտեսավար ավելի մեծ իրավունքներ է ստանում ձեռնարկութեան միջոցների ու արտադրածի մասին կարգադրութիւններ անելու, քան թէ առաջ եր: Դրա հետ միասին նրա վրա ընկնում էր ե մեծ պատասխանատվութիւն: Պարզ է, վոր այժմ տնտեսավարը շատ ավելի մեծ չափով իրավունք է ստանում բանվորների աշխատավարձը վորոշելու խնդրում, քան թէ առաջ: Քանի վոր մենք—արհմիութիւններս ՆԵՊ—ի պայմաններում անմիջական կերպով չենք խառնվում արտադրութեանը, ուրեմն ե մենք ինքնեք չպիտի վորոշենք կարգերը, բանվորներն ըստ վորակի բաժանենք ե այլն: Այդ աշխատանքը մենք հանձնում ենք տնտեսական մարմիններին, բայց ի հարկե միութիւնների մասնակցութեամբ ե տեղի ունենում ամեն բան: Իսկ գլխավորն այն է, վոր մենք—միութիւններս սկսել ենք համաձայնութեան գալ տնտեսավարների հետ ձեռնարկութեան մեջ աշխատող բանվորների աշխատանքի պայմանների մասին (աշխատավարձի չափի, տարիֆային ցանցի, մասնագիտական հագուստի ե այլնի մասին):

*) Ռ. Կ. Կ. Կ. Կ. Կ. բանաձևը:

— Առաջ, յերբ Հեալին տնտեսավարական հիմունքներ, միությունները (ՀԱՄԿԻ-ի և Աշխատողութի միջոցով) մշակում էլին համատնտեսական տարրիՖներ, աշխատավարձի կանոններ և այլ բոլոր տարրիՖներն ու կանոնները անխոս կերպով պարտադիր էլին բոլոր տնտեսական մարմինների համար։ Աշխատավարձը ու պարկվում էր կենտրոնից, արդյունաբերությունը մատակարարելու քնդհանուր կարգով, անկախ նրանից, թե ինչպիսի հնարավորություններ ունի ինքը ձեռնարկությունը։ Տնտեսավարական հաշիվներին անցնելուց հետո գրությունը փոխվեց։ Ձե փոք սոփարարար տարրեր ձեռնարկներում, արդյունաբերության զանազան հյուպերում տարրեր ևն այն միջոցները, վոր մեր ձեռնարկները կարող են հատկացնել բանվորների աշխատավարձին։ Ուստի և անհրաժեշտ է ամեն մի առանձին դեպքի համար հատուկ համաձայնության դալ. և միությունները այս խնդիրն իրականացնում են հավաքական պայմանագրեր կնքելու միջոցով։

— Դրա հետ միասին մենք դիտակցարար հրաժարվեցինք տնտես. մարմիններին ստիպելուց, վոր նրանք անպայման ստորագրեն հավաքական պայմանագրերը և ահա թե ինչու։ Կոլլեկտիվ պայմանագիրն ստորագրել—նշանակում է պարտավորություն վերցնել այդ պայմանագիրն անպատճառ իրականացնելու։ Կլինի տնտեսական մարմին, վոր միության ճնշման տակ ստիպված կլինի ստորագրել պայմանագիրը, չափից ավելի խոստումներ կանի, իսկ հետո դրա հետևանքը յերկուսի համար էլ վատ կլինի, տնտես. մարմինը ուժ չի ունենալ բանվորներին վճարելու, իսկ բանվորներն էլ միության ուժիքը կրունեն։ «Ինչու հավաքական պայմանագրերը չի իրադրծվում» կասեն։ Դրա համար էլ միությունները այլ կերպ են վարվում. հավաքական պայմանագրերը կնքելուց առաջ նրանք մանրամասն ուսումնասիրում են տվյալ գործարանի, դափողի կամ ամբողջ տրեստի արտադրությանը պայմանները, պարզում են, թե ձեռնարկությունը շահ և բերում թե վնաս և ինչ չափով, իր միջոցների վոր մասը նա կարող է անհիմնադրաբար կերպով հատկացնել փոքրեկ բանվորների աշխատավարձ և այս առանք պարզելուց հետո, բոլոր տվյալների հիման վրա միայն համապատասխան պահանջներ են ներկայացնում տնտես. մարմինին։ Սովորաբար հաջողվում է հենց-այդ պահանջների հիման վրա յեղ հավաքական պայմանագրեր կնքել։ Իսկ յեթե չի յեղ հաջողվում, ապա, նույնիսկ սուսնց հավաքական պայմանագրեր կնքելու մասին

պարտադիր որևէք լինելու, բավարար հնարավորութիւններ ունենք այդ բանն անել տալու՝ բարձրագիւր տնտ. մարմիններէ ու միութենական օրգաններէ կամ ծայրահեղ պեպքում միջնորդ գտնարանի միջոցով :

— Կարելի՞ յե, ուրեմն, համեմատել ցարիզմի շրջանի համարական պայմանագիրը ՆեՊ-ի շրջանի համաքական պայմանագրի հետ. իհարկե, վո՛չ: Հին ժամանակ մենք հավաքական պայմանագրի միջոցով վարձողի ուժիւքն ելինք բռնում, նրա դեմ դատակարար լինելով պայքար ելին մղում: Բանվորները, կազմակերպւած կերպով ճնշելով ու սովորաբար գործադուլի միջոցով ստիպում ելին, վորքան կարելի յե ավելի շատ բան պոկել կապիտալիստի ստացած օգուտներէր: Բայց բանվորական պետութեան մեջ բանվորները վաճ մի դասակարգային պայքար չեն մղում իրենց վարչական մարմնի դեմ, վորը նույն այդ բանվորական պետութեան նշանակածն ե և հաճախ նույն բանվոր դասակարգի ծոցիցն ե դուրս յեկել: Նրանք պարզապէս միասնաբար վորոշում են, թե ինչպէս ե նրապատկահարմար, ինչպէս բաշխեն տնտեսութեան միջոցները, վորպէսզի նա կարողանա ավելի շատ արտադրել, ավելի լավ վորակի ապրանք արտադրել և վոր բանվորներէ աշխատավարձը աստիճանաբար բարձրանա: Իսկ բանվորի աշխատավարձի բարձրացումը նշանակում ե և աշխատանքի արտադրողականութեան բարձրացում, աշխինքն արդյունաբերութեան ավելի ևս զարգացում և այլն:

— Ուրեմն, համաքական պայմանագիր կնքելիս ԽՍՀՄ-ի արհմիութեանները նկատի յեն ունենում վոչ թե միութենական նեղ, իրենց կաշկին վերաբերող խնդիրները, այլ պրոլետարիատի ընդհանուր դասակարգային շահերը, նկատի յեն ունենում յերկրի ընդհանուր ժողովրդական տնտեսութեան դրութեանը և, հետևապէս, ամբողջ պրոլետարական պետութեան կարողութեանները: Այսպէս որինակ, այն ձեռնարկութեաններում, վորոնց ապրանքը հեշտ և վաճառվում չուկայում, վորոնք արագ կերպով կարողանում են վորոշ գումարներ ստանալ (սնունդի, ծխախոտի, կաշիի և այլ գործարաններ), այդպիսի թեթեւ և միջակ ձեռնարկութեան արհմիութեաններն ավելի մեծ պահանջներ արին աշխատավարձը բարձրացնելու համար և հասցրին մինչև նախապատերազմային շրջանի 70—80 տոկոսին, իսկ յերբեմն նույնիսկ ավելի: Իսկ ընդհանրապէս, այն արդյունաբերութեան մեջ, վորը համարյա ամբողջովին պետութեան պատկերներն ե կատարում ու պետական սեռը միջոցներով

և ապրում (ինչպես—յերկաթուղային գործը, մեծադարձ յունարե-
րությունը, լեռնագործությունը), աշխարհի ձեռնարկներում միութ-
յունները ավելի ցածր աշխատավարձով են բավարարվում: Յեւ/
վերջապես, միությունները զիտակցելով, վոր յերկրի ժողովրդա-
կան տնտեսութեան մեջ հիմնական ու վճռական դերը խաղում է
հենց այդ ծանր արդյունաբերությունը, նրանք զիտակցութեան կան-
գնեցնում են քեթև ու միջակ արդյունաբերութեան ձեռնարկու-
թյունների աշխատավարձի բարձրացման ընթացքը, վորպեսզի պե-
տութեանը դրա շնորհիվ ազատված միջոցները ծախսի ծանր ար-
դյունաբերութեանն ոժանդակելու համար, նրա մեջ աշխատող բան-
վորների դրությունը բարելավելու և աշխատանքի արտադրողակա-
նությունը բարձրացնելու վրա:

— Յերբ մենք քննում ենք գործադուլների հարցը, ավելի լավ
է պարզելում այն տարբերությունը, վոր կա մի կողմից պատե-
րադմի չրջանի և մյուս կողմից Նեֆ—ի պայմանների բանվորների
տնտեսական սպաբարի միջև: Ի՞նչ է գործադուլը կապիտալիստա-
կան կարգերում: Դա բանվոր դասակարգի ամենաազդեցիկ գնեքե-
րից մեկն է ձեռնարկատերերի դեմ սպաբարելու ընթացքում: «Կա-
պիտալիզմի ժամանակ գործադուլային պայքարի վերջնական նը-
պատակն է կործանել պետական ապարատը, տապալել տվյալ դա-
սակարգային պետական իշխանութեանը (Ռ. Կ. Կենտկոմի բա-
նաձեւը): Մասնավոր գործատեր նեպմանը միութեան դասակարգա-
յին թշնամին է: Նրա վերաբերմամբ միությունները գործադուլում
են գործադուլը, հաճախ վորպես ամենակտրուկ միջոց, նրա վրա
ազդելու, ստիպելու, վոր պայմանագիր կնքի և իրադրոծի այդ
պայմանագրի կետերը: Մակայն բոլորովին այլ բան կատացվի, յե-
թե վերջենք հենց որինակ մեր տեկտիկ գործարանը: Այդ գործա-
րանը պատկանում է բանվորական պետութեանը, նա աշխատում է,
վորպեսզի վորքան կարելի յէ շատ ապրանք, շատ արժեքներ տա-
այդ պետութեանը, հարստացնի նրան, վորն արդեն նշանակում է
բանվորների դրությունը բարելավել: Ամեն անգամ պետական գոր-
ծարանի թեկուզ մեկ բոպե կանգ առնելը (նույնպես յեթե դա գոր-
ծադուլի հետեանքով է յեղել), ամեն մի այդպիսի գաղար նը-
պատում է քայքայումին, վատացնում է բանվոր դասակարգի
դրությունը: Յեւ նա, ով խորհրդային հանրապետութեան բանվոր-
ներին գործադուլի կոչ կանի պետական ձեռնարկութեանների մեջ,
բոս է յութեան կոչ կանի նրանց սեփական ձեռքերով խորտակել ի-

րենց պրոլետարական պետութիւնը և իրենց պրոլետարական դասակարգային իշխանութիւնը: Պետական ձեռնարկութեան մեջ գործադուլները կարող են թուլատրուել միայն բացառիկ դեպքերում, մի քանի տնտեսական հաշվի անցած տնտեսական որգանքների բյուրոկրատական խեղաթուրումների հետևանքով: Բայց այդ դեպքում եւ, յերբ վորեն դուրս պրծած սպեց բյուրոկրատ վերջնականապես համբերութիւնից կհանի բանվոր մաստային, նրա արդարացի պահանջները չկատարելով (սովորաբար հավաքական պայմանագրի հողի վրա), միութիւնը «ընդհարման խաղաղ վճռի բոլոր հնարավորութիւնները ողտագործելուց հետո միայն պետք և դործադուլի դիմի, այն անհրաժեշտ պայմանով, յերբ նրա անհրաժեշտութիւնը կհաստատուի ալելի բարձր կանգնած միութենական կամ միջմիութենական միացումների կողմից»: (ՀԱՄԿԻ վորոշումը):

— Հավաքական պայմանագրի կնքման հետ սերտ կապված և բանվորներ վարձելու կարգի, աշխատանքի պաշտպանութեան, կենդանի լավացման հարցը: Ռադմական կոմունիզմի շրջանում արհմիութիւններն ամեն քայլափոխում իրենց վրա վերցնում եյին պետական մարմինների պարտականութիւններ: Այն ժամանակ հենց նրանք եյին կատարում աշխատանքի ամբողջ պաշտպանութիւնը, հաշվառում եյին ու բաշխում բանվորական ուժը: Այժմ այդ բոլորը արհկադմակերպութիւնները չեն վարում, այլ Աշխատանքի ժողովրդական կոմիտարիատը: Բայց այնուամենայնիւ միութիւնների համար այստեղ եւ աշխատանքի լայն հրապարակ և մնում. — Նրանք կադմակերպում են աշխատանքի պաշտպանութեան միութենական հանձնաժողովներ, վորոնք հայտնաբերում են Աշխատանքի Ռենդգրքի բոլոր խախտումները ձեռնարկութիւնների մեջ և հոգ են տանում նրանց վերացման մասին աշխատանքի տեսուչների միջոցով. իրենք, այդ տեսուչներն ընտրվում են միութիւնների կողմից և պարբերաբար նրանց հաշիվ են ներկայացնում. վերջապես միութիւնները մտցնում են և անցկացնում աշխատանքի պաշտպանութեան վերաբերող որենքները: Նույնպես և Աշխատանքի բորսայի միջոցով բանվորական ուժի հաշվառման ու վարձման դործում միութիւններն ահազին դեր են խաղում, այդ բորսաներին կից և իրենց դեկավարութեամբ դործող միութենական սեկցիաների շնորհիւ:

— Վերջապես միութիւնները լայն աշխատանք են ծավալում

բանվորների կենցաղի լավացման անպարիզում, նրանք մասնակցում են ապահովագրական դանձարեկեղերի կազմակերպմանը, կադմոն են նրանց վարչությունը, կազմակերպում են հանգստի տրաներ, ամեն կերպ ամրապնդում և ընդլայնում բանվորական կոոպերացիան—սպառողական ու բնակարանայինը և այլն:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ — Ընկերներ, այժմ խոսենք այն մասին
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՆԵՊ-Ի Թե ինչպես են կառուցվում մեր արհ-
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ: միությունները ՆեՊ-ի պայմաններում:

Մենք բոլորը հիշում ենք աշխատանքի պարագաները ռազմական կոմունիզմի շրջանում: Այդ իրոք ռազմական պարագաներ էյին, հարվածային կամպանիաներ—պատերազմականը, պարենալսմանը, վառելիքին, աշխատանքի դիպրիպլինայի բարձրացմանը և այլն հետևում էյին մեկը մյուսին: Յեւ դարմանալի չե, յեթե այդ պայմաններում լայն մասսայական արհեստակցական աշխատանքի տեղը կարծեք թե հրամայելը սկսեց բռնել: Միջմիութենական կադմակերպությունները, նահանգական արհխորհուրդները, գալառական արհխորհուրդներն անհրաժեշտությունից դրված վոչ միայն իրենց ձևւքն առան արհաշխատանքի ղեկավարությունը, այլև խնամակալում էյին մանր բաներում միությունների նահանգական և գալառական բաժանմունքներին, հաճախ նրանց զրկում էյին ամեն մի ինքնուրույնությունից, ուրեմն և աշխատունակությունից: Իր հերթին միությունները գործարանային կոմիտեներին խիստ հակողության տակ էյին պահում:

— Նույնիսկ միտք ծագեց բոլոր միությունները ձուլել, ինչպես ձուլված են տնտեսության առանձին ճյուղերը, վորովհետև, ասում էյին, սոցիալիստական տնտեսության ժամանակ արդյունաբերությունը պետք է շարունակ ավելի շատ սեղմվի ու միանա միասնական մի կենտրոնի միջոցով, ասպա դրա համապատասխան պետք է առանձին միությունները բոլորովին վոչնչացնել, թողնել ՀԱՄԿԻ, Նահանգական արհխորհուրդները և Գալառական արհխորհուրդները, իսկ նրանց կից—արտադրական սեկցիաներ (որինակ, մանածագործների և ուրիշների սեկցիաներ): Այդ այսպես կոչված «միասնական միության» կուրսն էր, վոր յերևան յեկավ դեռ 1920 թ.: Մի քանի միությունների վերաբերմամբ նույնիսկ խորքից գործի էյին անցնում: Այսպես, 1921 թ. վճռվեց, վոր յերբ գոյութուն ունի միասնական ճանապարհների հաղորդակցության

Փողովրդական կոմիսարիատ, պետք է ձուլել նաև յերկաթուղայինների և ջրային հաղորդակցութեան ծառայողների միութիւնները, երբ գոյութիւն ունի Լուսժողովատը—պետք է ձուլել Լուսաշիր և գեղաշիր: Ասացին, արեցին: Այդ միութիւնները ձուլեցին, չնայած չպետք է արվեր այդ, վարովհետև նրանց մեջ չափազանց աշխատանք եր միութենական մասսան, չափազանց տարբեր էին նրա աշխատանքի պայմանները*): Ինչքան ել այդ տարրերնակ է, նոր տնտեսական քաղաքականութիւնը սկսւում մի քիչ ուժեղացրեց «միասնական միութեան» ձգտումը, և ահա թե ինչու.— Տեղական արդշտարեութիւնը «գլավիկով» կապանքներեց, «գլավկներ» և «կենտրոններ» բոլորովրատական վարչութիւնից ազատելու համար, նրա մի նշանավոր մասը հանձնվեց նահանգական ժողովուրդհանրի կառավարմանը: Վերջիններս սկսեցին միացնել իրենց ձեռնարկութիւնները և այդ ուժեղացրեց «միասնական միութեան» կողմնակիցների այն ձգտումը, թե նահանգական արհիւրհուրդներն ել պետք է միացնեն բոլոր բանվորներին «միասնական միութեան» կազմելով և վոչնչացնելով նահանգական բաժանմունքները, նրանց արտադրական սեկիւրներ դարձնելով: Ու այսպես ամբողջ արհարժման մեջ, վերելց մինչև ներքև: Այդ տեսակետի վրա կանգնեց նաև Խրհմիութիւնների Համառուսական համագումարը (1921 թ. մայիս): Այդ ուղղութեամբ վորոշ գործնական քայլեր ել արվեցին.— մասնավորապես միութիւններն իրավունք ստացան իրենց միջոցները ծախսել բացառապես միջմիութենական կազմակերպութիւնների հաստատած նախահաշիվներով: Իհարկե, այդ ամէլի ևս կապեց միութիւնների մոտ ու ձեռքը: Սակայն ընդիմութիւնը առմամբ «միասնական միութեան» կուրսը բավական զգուշորեն եր անցկացվում:

— Մեր միութենական կազմակերպութիւններն ամեն տեսակ տնտեսական խնդիրներով ծանրարեւոյած լինելով, չափազանց ուղեւում էին իրենց շտատները, մեծ ու անճոռնի բոլորովրատական մեքենաներ էին դառնում, վորոնք թույլ կապ ունէին մասսաների հետ: Արդարեւ այդպիսի մեքենան կարող եր ուշադիր և զգալուն վերարեմունք ունենալ դեպի գործարկումների աշխատանքը և նրանց միջոցով ամէլի սերտ կապվեր մասսայի հետ:

*) Հետադարձ գրանից ստիպված յեղան հրաժարվել և 1922 թ. սկսած մատնանշած միութիւնները գոյութիւն ունեն տնտեսական-տնտեսական:

Իհարկե, վո՛չ: Առանց հարկավոր զեկազարության թողնված, հարկածալին կամպանիաներով ծանրաբեռնված, մեր գործարկումներն ավելի շուտ արտադրության կառավարումով, փաշերի և սոփեհահուստի բաշխումով էլին զբաղված, իսկական արհեստակցական աշխատանքով: Մեր ընդհանուր ժողովները հաճախ խիստ սակավամարդ են լինում: Յեւ վաստաների ինքնուրույնության այդ անկման ամենակարեւոր պայմաններից մեկն այսպես կոչված պարտադիպակամագրութիւնն էր: Ասենք, մի բանվոր մտալ գործարան, գործարկումը նրան իսկույն միության անդամ է գրում, իսկ գրասենյակը մեքենայորեն սկսում էր նրա աշխատավարձից հանել անդամավճարները: Այդ ընկերը կարող էր մեկ տարի միության անդամ լինել և ամենևին վոչինչ չլիմանալ միության մասին, նույնիսկ չլիմանալ, թե ընդհանրապես ինքն անդամավճար է տալիս, ինչ չափով և ինչի վրա յե գործադրվում այդ փողերը: Գրեցի՞ն և վե՛րջ:

— Ինչո՞ւ այդպես յեղավ այդ: Ավելիված արտադրութիւնը կարգի բերելու համար անհրաժեշտ էր, վոր միություններն իրենց անդամների մեջ աշխատանքային ամուր զիւցիլլին անցկացնեն, իսկ դրա համար հարկավոր էր, վորպեսպի բոլոր բանվորները և ծուռալողները պարտադիր կերպով միության մեջ մտնէին և կատարէին նրա բոլոր մատնանշումները: «Տիպական կոմունիզմի» պայմաններում այդ բոլորովին անխուսափելի և անհրաժեշտ էր: Բայց վրա հասավ Նե֊Պը: Ստեղծված բարդ տնտեսական պարտականքում արդեն չի կարելի հրամայելով կառավարել: Միությունները պետք է ինչքան կարելի յեր շատ տոկունութիւն, գիտակցութիւն և յեռանդ յերևան բերէին իրենց միացրած մասնաների շահերի պաշտպանության գործում: Իսկ մասնաների շահերը պաշտպանելու համար, պետք է, ինչպես հարկն է, ճանաչել նրանց, պետք է ամենասերտ կապերով մոտենալ այդ մասնաներին: «Կապն այդ մասսաների հետ, այսինքն բանվորների ահազին մեծամասնության հետ (ապա նաև բոլոր աշխատավորների հետ), — ասում է այս հարցի մասին Ռեկկի ընդունած բանաձևը, — ամենակարեւոր, ամենախիմնական պայմանն է հանդիսանում արհիւրքիւնների ամեն տեսակ գործունեւորության: Ներքեից մինչև վերե միությունների և նրանց ապարատի կազմակերպութիւնները պետք է ստեղծվեն և անցկացվեն գործնականապես, յերկար տարիների վորձով, պատասխանատու ընկերների մի ամբողջ սխառն, վոչ անպայման միայն կոմունիստներից, պետք է

բանվորական կյանքի ժխտում լինեն, ճանաչեն նրան ուժեն կողմից, կարողանան անսխալ կերպով ուղած հարցի մասին ուղած մոմենտում անսխալ կերպով վորոշել մասսայի տրամադրությունը, նրա իրական ձգտումները, կարիքները, մտքերը, կարողանան ատանց կեղծ իդիալականացման սովերի, վորոշել նրա գիտակցության աստիճանը և այս կամ այն նախադասարումների և մնացորդների ազդեցության ուժը, կարողանան ընկերական վերաբերմունքով, նրա կարիքների հողատար բավարարումով նվաճել նրա անսահման վստահությունը»:

— Իսկ միութենական կազմակերպության վոր մասն է իր աճենորյա աշխատանքի մեջ ամենից մոտ շփում ունենում լայն մասաների հետ: Իհարկե, գործարկումները, տեղկումները: Ահա թե ինչու ՆեՊ—ի պայմաններում արհմիությունները սկսում են ահագին ուշադրություն նվիրել իրենց ստորին բջիջների ամրացմանը և աշխուժացմանը: Միությունները հնար են ստանում հենց այդ նույն մասսայի դաստիարակության գործին ավելի լուրջ և ավելի խոր կերպով մոտենալ: Փոխանակ պետական ձևով միությունների անդամների ցուցակը կազմելու, նրանց բռնի մորիլիզացիա անելու, միությունները կամավոր անդամութան են անցնում: Ամեն մի բանվոր կամ ծառայող այժմ ազատ է ինքը վճռելու, թե արդյոք ուզում է միության անդամ լինել, թե՞ վոչ: Մեր բանվորների և ծառայողների ահագին մեծամասնությունն (92 տոկոսը) ինքն է սերտ կապ գրում իր բանվորական կազմակերպության հետ, իր միության հետ, վոր Կոմունիստական կուսակցության ղեկավարությունը և Պորհրդային իշխանության հետ սերտորեն կապված տանում են լայն բանվոր մասսաներին ղեպի լուսավոր ապագա: Նրանք կամավոր անդամության ժամանակ ել արհմիությունների անդամ մնացին: Բայց այժմ, իհարկե, նրանց ուրիշ պահանջներ ենք ներկայացնում: Մենք ասում ենք նրանց, նշանակում ենք, նաև ձեզ, ընկերներ.—«Նեղություն կրեք ավելի գիտակից վերաբերվելու, քան առաջները, արհմիության անդամի գոյմանը, հիշեցեք, վոր յեթե դուք ձեր բարի կամքով բանվորական կազմակերպության անդամ եք դարձել, ապա նրա շահերը ձեզ պիտի թանկ լինեն, դուք վոչ միայն իրավունքներ, այլև պարտականություններ ունեք: Ի հարկե, միությունն իր կողմից ամեն կերպ կը պաշտպանի ձեր շահերը, ձգտելով վոր առաջին հերթին ձեզ յեթե աշխատանք արվի, ինչպես և արտոնություն

ներ կոմմունալ ծառայութիւնների մեջ և այլն Բայց դուք եւ պետք և ամեն կերպ հոգաք ձեր միութեան ամրացման մասին, սպենք նրան իր աշխատանքների մեջ» :

— Մենք ե՛լ ալելի յենք ամրացնում բանվորի այդ կապը միութեան հետ անդամավարների անհատական մուծման շնորհիւ : Միութեան ամեն մի անդամ այժմ իր անդամավճարը դրասնեյակի միջոցով չի վճարում, ինչպես առաջ եր, այլ անձամբ միութեան վճարները համարողին և հանձնում այն : Այդպիսով, յեթե առաջներն աշխատավարձից հանելու ժամանակ բանվորը միայն դիտեր այն, վոր ինքը մեկին ինչ վոր բան և վճարում և չէր հետաքրքրվում այն հարցով, թե ում, ինչքան և ինչու, չէր հետաքրքրվում իր վճարումների բախտով, ապա այժմ անձամբ իր անդամավճարը տալով, նա սկսում է հետաքրքրվել, թե ինչի վրա յեն ծախսվում իր արշունքըրդինքի փողերը, թե ինչպես և միութեանը ծախսում այն, լա՞վ, թե՞ վատ, և թե ընդհանրապես ի՞նչ և անում նրա միութեանը, ի՞նչ աշխատանք և կատարում : Անդամավճարների անհատական մուծումը նոր դործ է : Բայց պետք է ձեռք դարկել նրան լրջորեն և ամբողջովին իրազօրծել այն : Յեւ ինչքան ալելի լավ հաջողվի մեզ իրազօրծել կամավոր անդամութեանը և ամեն մի բանվորի կողմից իր անդամավճարի անձամբ տալը, այդան ալելի հեշտ կը լինի աշխուժացնել, լցնել ընդհանուր ժողովների դատարկ սրահը :

— Բաղձական կոմունիզմի շրջանում մեր միութեաններն այնքան շատ զուտ պետական խնդիրներ ունեյին, վոր մեր սուգ միութենական միջոցները բավական չեյին կատարելու այն : Միութեանները նյութական ոժանդակութեան ևյին ստանում պետութեանից, տնտեսական մարմիններից և այլն : Միութեանների աշխատանքի նոր պայմաններում պետութեան կամ տնտեսական մարմինների վորեւ նյութական ոժանդակութեան մասին չի կարող և չպիտի խոսք լինի : Իսկ յեթե այդպես և, ապա մենք պետք է խոսորեն կենսազօրծենք միութենական աշխատանքի հիմնական կանոններից մեկը. — «Վառներդ վերմակիդ չափ մեկնիր», ասվորիք քո սեփական միջոցներով, միութեան հավաքած անդամավարներով ապրել : Յեւ իրօք, անդամավճարները չարունակ ալելի յեն դառնում միութեանների գոյութեան գլխավոր աղբյուրը : Արագորեն կըճառվում են և անցյալի սեփականութեան դառնում միութեանների ահադին ու անճոռնի և փրուն դրասնեյակները : Մի փոքրիկ աշխատունակ շատա և մնում, վորի մեջ հրահանգիչներ ու

պատասխանատու աշխատողներ, աշխինքն կենդանի գործի և իրական զեկափարութեան աշխատողները, շատ ավելի յեն քան տեխնիքական աշխատողները—գործավարները, մեքենագրութիւնները և նմանները: Իրբն որինակ տոնենք մեր նաճանգային արհմիութեանը և տարիֆային և տնտեսական բաժինները: Գեւ մի տարի առաջ նրանցից ամեն մէկն ուներ 30—40 աշխատակից, իսկ այժմ նրանք սեղմվում են, կազմելով մէկ բաժին—Տեկո (տարիֆ—տնտեսական) և 3 հոգուց կազմված շատա ունեն ու հիանալի կատարում են իրենց աշխատանքը: Յեթե միջակ նաճանգական արհմիութեանը 180—200 մարդուց կազմված շատա ունեն, ապա այժմ նա կրճատել և այն հասցնելով 24—30 մարդու: Նույն ենք տեսնում նաև միութայինների մեջ:

— Իրենք միջմիութենական կազմակերպութեանները շարունակ ավելի յեն հրաժարվում հրամայելուց, ասանձին միութայինների աշխատանքին սխառմատիկորեն միջամտելուց, այն աշխատանքը կատարելուց, վոր հիանալի կը կատարեն նաև այդ ասանձին արտադրական միութայինները: Մի խոսքով «միասնական միութեան» կուրսի հակառակ, արտադրական միութայինները կշահակալի ինֆլուրայնութուն են ստանում, իսկ նախագական արհմիութեանը և գալատական արհմիութեանը միայն քնդհանուր ուղղութուն են տալիս, հարթում և համաձայնեցնում միութայինների աշխատանքը: Մասնավորապես միութայիններն ավելի մեծ ազատութուն են ստանում նաև սեփական միջոցների տնտրման գործում: Նոր տնտեսական քաղաքականութեան պարագաներում արհեստակցական միութայինները պետք և, ինչպես մենք ասացինք, հատուկ լրգայնութուն ու ճկունութուն յերևան բերեն իրենց աշխատանքում: Ամեն մի արտադրական միութեան աշխատանքի պայմաններն սկսում են շարունակ ավելի ուժեղ կերպով զանազանվել մյուս միութայինների աշխատանքի պայմաններից, քան առաջները: Արտադրական միութայինները կենտրոնական կոմիտեները կարող են այդ պայմաններն ավելի լավ հաշվառել, քան տեղական միջմիութենական կազմակերպութայինները: Հենց նրանց էլ անցնում և նաճանգական բաժինների աշխատանքի զեկափարութեան մի մասը*): Բայց, իհարկե, արհարթման մեջ վոչ մի ցրվածութեան պատճառ չի գտնա այդ: Առաջվա պես արհարթման միասնա-

*) ՀԱՄԿԻ տնտեսական ուսյոնացման և շրջանային բյուրոների կազմակերպման մասին տես պրակ իններորդ—«Ի՞նչ և ասում արհմիութեան կանոնադրութայինը»:

կան զեկամար կենտրոնը, ՀԱՄԿԽ-ն, աշաղթորեն կը հետեւի մեր բոլոր արհկազմակերպություններին և ամուր ձեռքով նրան ուղղություն կտա: Այդ մասին նորից ու նորից ասում և մեզ արհմիությունների 5-րդ Համաուսումնական համագումարը:

— Ընկերներ, վերջապես մեկ բան էլ.—մենք գտեցինք այլ-էեսակցական միությունների շարքերը «ոսկւական կոմունիզմի» շրջանում նրանց մեջ մտած տնայնագործներից և նման մանր-բուրժուական, վոչ-պրոլետարական տարրերից^{*)}: Յեւ վերսկիւ հետեւ տնտեսական հաշիւ շնորհիւ, աշխատող պետական ձեռնարկությունների (պետական բազաների) քանակը և նրանց բանվորների թիվը կը ճատովեց, ապա մեր միությունների անդամ-ների թիվն էլ կը ճատովեց՝ հասնելով ընդհանուր առմամբ 5,100,000 (արհմիությունների 5-րդ Համաուսումնական համագումարին, 1922 թ. սեպտեմբերին): Դրա փոխարեն մենք կարողացանք լավացնել մեր միությունների վերակային կազմը^{**)}:

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱ- Ռոգինը մի կում ջուր առավ բե-
ՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ Յեւ րանը և շարունակեց:

ԱՐ ՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԿՈՒՆՏԱՇՆԱՍԱՆՔԸ:

— Չափազանց յուրջ և կարեւոր են արհեստակցական միությունների խնդիրները Նեղի- պայմաններում: Բայց վատ կը լիներ, յեթե մենք հուսայինք իրականացնել այն միայն կազմակերպչական վերակառուցումով կամ տարիֆ-տրնտեսական աշխատանքով, կամավոր անդամության կամ հալա-քական պայմանագրերի միջոցով: Ինչպես Կարմիր բանակը սարսափ և ազդում կապիտալիստներին իր մարտական գիտակցությամբ, այդպես էլ մենք, արհմիություններս պետք և կազմենք պրոլետարիատի գիտակից և դրանով անհաղթելի աշխատանքային բանակը: Մենք դրան հասնում ենք միության կուլտուր-լուսա-վորական աշխատանքի միջոցով:

— Պետք և խոստովանել, վոր մինչև այժմ այդ աշխատանքը մեզ մոտ կաղում էր և մի քիչ կաղում է այժմ էլ: Պարզ բան և, վոր բազմական կոմունիզմի շրջանում, յերբ խոսքը վերաբերում էր հեղափոխության կյանքին ու մահին, արտապրության կյանքին

^{*)} Մանրամասն տես պրակ իններորդ:

^{**)} Հետադաշում տնտեսության առողջացումը և ընդլայնումը հարակցում է ԽՍՀՄ մեջ միությունների անդամների թվի մեծացումով, վոր համամիութենական 6-րդ համագումարին (1924 թ. նոյեմբերին) անցնում և արդեն վեց միլիոնից:

ու մահին, յերբ անհամատալի ծանր էլին բանվորի կյանքի պայ-
 մանները, դժվար եր խոսել խմբակների, դասախոսությունների,
 պարոցների, կարգի ընկած ակումբային աշխատանքի և այլն մո-
 սին: Յեվ բացի այդ ստանձնելով խոշոր չափով ամեն տեսակի
 պետական խնդիրներ, մկնք միություններս մեզ վրա էլինք առել
 ժողովրդական լուսավորության մարմինների համարյա ամբողջ
 աշխատանքները (մանավանդ, վոր այդ մարմինները գեռ թույլ
 էլին և համարյա միջոցներ չունեյին): Միություններն ստեղծում
 էլին ակումբներ, Փարբիկա-գործարանային զպրոցներ, մանկա-
 պարտեզներ, Սոցապի զպրոցներ, այդ բոլոր կուլտուրական հիմ-
 նարկներն իրենք էլին կառավարում: Այնպես եր գուրս գալիս,
 վոր միությունների կուլտաշխատանքը ըստ էյության կրտովում
 եր ամբողջ արհեստակցական շարժումից, նա դադարում եր իրենց
 արհմիությունների անդամների դաստիարակչության համար մի-
 ջոց ծառայելուց, նա չեր լուսաբանում և չեր արձագանքում արհ-
 միությունների աշխատանքի բոլոր հիմնական հարցերին: Բայց
 հաղիվ լուսավորության մարմինները, որինակ, Նահանգական
 սոցդասվարչությունը, նահանգական քաղլուսավարչությունը
 ամբաջան, նրանք և միությունը սկսեցին իրար մեծապես խան-
 գարել: Մեր միություններին հաջողվեց միայն մեծ արդյունք-
 ների հասնել 1921 թ. արհեստակցական տեխնիքական կրթության
 գործում, բացի այդ միությունները յնոանդուն ազխտացիա և
 պրոպագանդ էլին մղում հոգուտ աշխատանքի արտադրողակա-
 նության բարձրացման—այսպես կոչված արտադրական պրո-
 պագանդա^{*)}:

— Բայց նոր տնտեսական քաղաքականությունը ցնցեց մեր
 կուլտաշխատողներին: Նա կարծեք ասում եր նրանց. «Հիշեք,
 վոր կուլտաշխատանքն ամբողջ արհեստակցական շարժման ան-
 խզելի մասն և և պետք և սպասարկի նրան: Եյականն այն չե, վոր
 Սոցդասի զպրոցներ կազմակերպվեն, Լուսրածնի հետ մրցեն,
 այլ այն, վոր ողնեն արհմիության ամեն մի անդամի, ինչքան

*) Միությունների ուժերով արհեստակցական կրթության
 վարչություններին կից ստեղծվեցին արհեստակցական—տեխ-
 նիկական կրթության բաժիններ, վորոնք մեծ աշխատանք ծա-
 վալեցին.—առ մեկն մայիսի 1921 թ. ՌՍՖՍՀ մեծ 1,046 արհ.-
 տեխ. կուրսեր և զպրոցներ կային, նրանից 735 բարձր տիպի,
 224—յերեկոյան և 87 տնչափահասների զպրոցներ:

կարելի յե լավ, գլուխ հանելու իրեն չբճապատող նոր բարդ պայմաններից, բացատրեն նրան, թե ինչ է նրա միությունը, ինչպես ե նա ծագել, ինչ ձևով ե զարգանում, ինչ նպատակների ե խնդիրների յե հետամուտ: Բայց այդ քիչ ե, մենք պետք ե միության ամեն մի անդամի ցույց տանք, թե ինչպես խորհրդային միությունների արհեստակցական աշխատանքները միշտ յենթարկվում ե բանվոր դասակարգի ամենակարևոր խնդիրներին—պրոլետարիատի ընդհանուր դասակարգային, քաղաքական կռիվ խնդիրներին: Միությունները պրոլետարիատի հետեակն են, վորոնց ղեկավարում ե բանվոր դասակարգի ավանդարդը—կոմմունիստական կուսակցությունը: Միությունները պրոլետարական գիտատուրայի հենարանն են, խորհրդային իշխանության ամենասերտ դաշնակիցները ե բանվորական պետության կառուցողները: Մենք պետք ե այս բոլորը բացատրենք միության ամեն մի անդամի:

— Յեվ յեթե, ահա այդ ձևով, մենք կարողանաք միության անդամների լայն մասսաների առաջ լուսարանել միությունների ամբողջ պատմությունը, բոլոր խնդիրները, գործնական աշխատանքների ամեն մի առարկա մանրույնքը, ապա մեզ կը հաջողվի դաստիարակել նրանց կոմմունիզմի վրդով, հարկադրել գիտակցաբար վերաբերվել արհկաղմակերպությունների ամբողջ աշխատանքին, լծվել այդ աշխատանքին ե նրան պաշտպանություն ցույց տալ: Կարելի յեր դեռ չառ բանի մասին խոսել՝ բանվորական ակումբի, լիկկայանի, Ֆարգործաբանական դպրոցի ե այլն: Բայց ընկերներ, ինձ քիչ ժամանակ մնաց:

— Կնչեմ միայն.—լավ կարգի գցած միութենական—լուսավորական աշխատանքները, արհեստակցական ագիտացիան ե պրոպագանդը (արհպրոպագանդը)—ահա առանցքը, ահա հիմքը մեր միութենական կուլտ—աշխատանքի: Առաջժմ այդ ուղղությամբ մենք քիչ բան ենք արել, չառ անդամ ամսթալի չափով քիչ: Մինչդեռ մենք մեծ հնարավորություններ ունենք: Բանվոր դասակարգի նյութական զբոսթյունը լավանում ե, համապատասխան չափով աճում են նրա կուլտուրական կարիքները, միությունները միջոցներ ել են ստանում կուլտաշխատանքի համար (տնտեսական մարմինների 5 տոկոս մասնատրումը)*): Բայց այդ

*) Մոսքը վերաբերում ե 1922 թ. վերջի չբջանին: Անհրաժեշտ ե նկատի ունենալ, վոր 5 տոկոսի մեջ ելին մտնում Սոց-

բոլորը պետք է կարողանալ հաշվառել և ողտադործել, յեռանդ-
գործի իմացություն, նախաձեռնություն յերևան բերել, իսկ
վոր գլխավորն է—կուլտաշխատանքը աչքաթող չանել, «կուլտ-
աշխատավոր» բառը համարյա արհամարական անուն չդարձնել։
Այն ժամանակ և միայն այն ժամանակ մենք առաջ կը տանենք
մեր միությունների աշխատանքի այս հետամնաց մասը։

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ — Ահա ուրեմն, ինչ նոր խնդիր-
ցեւ. ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ներ են կանգնած մեր արհեստակ-
ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ։ ՀԱ- ցական միությունների առաջ ՆեՊ-ի
ԿՍՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՈՒ- պայմաններում և ինչպես միություն-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆ- ները այդ խնդիրների լավագույն
ՔՈՒՄ ՆեՊ-ի ՊԱՅՄԱՆ- կատարման համար փոխում են ի-
ՆԵՐՈՒՄ։ րենց կառուցվածքը։

— Այդ նոր խնդիրների չուրջը
մասն—բուրժուական քվիչոցները, մենչև իրենք և էսեր-
ները աղմուկ բարձրացրին, փորձեցին չահվել։ Նրանք
աղաղակում էին. «Տեսնում եք, չե՞ք վոր այս այն
բոլորն է, ինչ վոր մենք ասում էինք ձեզ։ Այժմ
բայլէնիկներն իրենք են ընդունում մեր ծրագիրը, խոսում են բան-
վորների նյութական շահերի, հավաքական պայմանագրերի,
գործադուլների մասին։ Իսկ առաջ ո՞ւր էին նրանք»։ Մենք
բուրժուազիայի բոլոր պնակալեզներին այս առթիւ պատասխա-
նում ենք. «Մենք մեր կարմիր արհմիություններին հետ և ամբողջ
բանվոր դասակարգին հետ շարունակ բարրիկադների մի կողմն
ենք յեղել, մենք կռվել ենք հանուն բանվոր դասակարգի վերջ-
նական ազատության կապիտալիստական լծից։ Իհարկե, դուք
այնտեղ չեիք, մյուս կողմում լցնում էիք բուրժուազիայի հրա-
ցանները կամ նրա հրամանով մխում էիք սուրբ մեր հեղափո-
խության թիկունքը։ Մենք այժմ վերաքննում ենք մեր խնդիր-
ները, բայց մենք չենք փոխում այն հիմնականը, ինչի մասին
ընկ. Լենինը ասում էր զեռ 1921 թ. «Արհեստակցական միա-
դաստի և Փարգործպրոցի ծախքերը, վոր այն ժամանակ պահ-
վում էին միությունների կողմից։ 1923 թ. այդ պրոցների
հանձնումը Լուսնոգլորմատին և անտես, որդաններին, հիմնա-
կան պատճառներից մեկն էր, վոր թույլ տվեց միություններին
կուլտուրական պետքերի համար վերցնել միայն մեկ տոկոս
ըստ հավաք. պայմանագրերի։

թյունների ամենակարևոր դերը հորիզոնային Ռուսաստանում եւ
 Կոմսոնիզմի դպրոց լինելն է մնում: Միայն արհեստակցական
 միությունը, վոր սրտեմատիկորեն հոգում է բանվորի կյանքի
 և կենցաղի բոլոր կողմերի մասին, ինչպես գործարանում, այն-
 պես եւ նրանից դուրս, կարող է կազմակերպչական ունակու-
 թյունների և քաղաքական դաստիարակության սկզբնական դըպ-
 րոց հանդիսանալ աշխատավորների ամենալայն և նույնիսկ հե-
 տամնաց մասսաների համար: Արհմիությունները իրենց այս խըն-
 դիրների հաջող կատարման համար պետք է ամենից առաջ այն-
 պիսի կազմակերպություններ դառնան, վորոնց մեջ ամեն մի
 առանձին անդամ հանդիսանում է իր միության ընդհանուր
 կյանքի գիտակից և ակախիվ մասնակիցը: Արհմիությունները պետք
 է սպասարկեն աշխատավոր մասսաների ամենուրեք կյանքի բոլոր
 կողմերը պետական արտադրության գործում, շարունակ նրանց
 ուղիները լուսավորելով մեր ծրագրի իդեալներով, տանելով նրանց
 մասնավորից պեպի ընդհանուրը, աստիճանաբար բարձրացնելով
 նրանց անկուսակցականությունից դեպի կոմմունիզմը»:

— Մեր աշխատանքը գծվար է: Ռկկկկ բանաձևը նշում է,
 վոր նոր անտեսական քաղաքականության պայմաններում կան
 «մի շարք հակաուրթյուններ արևմտաւրթյունների գանազան խըն-
 դիրների միջև: Մի կողմից, նրանց ազդման գլխավոր մեթոդը հա-
 մոզելն է, դաստիարակելը, մյուս կողմից, նրանք, իբրև, պետա-
 կան իշխանության մասնակիցներ, չեն կարող հրաժարվել նաև
 հարկադրանքին մասնակցելուց: Մի կողմից, նրանց գլխավոր
 խնդիրն աշխատավոր մասսաների շահերի պաշտպանությունն է
 բառի ամենատանձիշական և ուղիղ իմաստով, մյուս կողմից,
 նրանք չեն կարող հրաժարվել ռեժիմից, իբրև պետական իշխա-
 նության մասնակիցներ և ամբողջ ժողովրդական տնտեսության
 կառուցողներ: Մի կողմից, նրանք պետք է աշխատեն զինվորա-
 կան ձևով, վորովհետև պրոլետարիատի զիկտատուրան դասա-
 կարգային ամենակատաղի, ամենահամառ, ամենահուսաճառ
 պատերազմն է, մյուս կողմից, հենց արհմիությունների վերա-
 բերմամբ ամենից ավելի քիչ են գործադրելի աշխատանքի զին-
 վորական մեթոդները: Նրանք պետք է կարողանան հարժարվել
 մասսային և նրա սովյալ մակարդակին, իսկ սրա կողքին, նրանք
 վոչ մի կերպ չպետք է ներողամիտ լինեն դեպի մասսայի նախա-
 պաշարմունքները և հետամնացությունը, պետք է անշեղորեն

նրան չարունակ ավելի ու ավելի բարձր մակարդակի հասցնեն և այլն: Այդ հակասությունները պատահական չեն և մի շարք տոսնամ յակների ընթացքում անկարելի է վերացնել այն: Վերոհետև քանի կապիտալիզմի և մանր արտադրության մնացորդք կա, ամբողջ հասարակակարգի մեջ անխուսափելի յեն հակասությունները այդ մնացորդների և սոցիալիզմի միջև»:

— Խորհրդային Հանրապետությունների արհմիությունների համար այդ բոլոր հակասությունները սասափելի չեն: Թե հին ու նոր, թե նոր ու նորի վրա, «ոսպմական կոմմունիզմի շրջանում» կամ ՆԵՊ-ի չրջանում մենք մի ճանապարհ ունենք—ճանապարհ դեպի կոմմունիզմ, մեկ ստաջնորդ—բայլչեիկյան կուսակցությունը, մի գրոշակ—լենինի գրոշակը*): Այդ գրոշակի տակ ՌՍՖՍՀ արհմիությունները կոլում են, իբրև Արհմիությունների կարմիր Ինտերնացիոնալի ստաջավոր ջոկատ, առաջնորդում են պրոլետարական մաստային դեպի սոցիալական հեղափոխության հաղթանակն ամբողջ աշխարհում: Ամեն ոք, ամեն սմիս մեր կազմակերպչական, տարիֆ-սոստեսական, իսկ վոր գլխավորն է—կուլտուր—լուսավորկան միութենական աշխատանքի միջոցով մենք շարունակ ավելի յենք մտնում ընկ. Տոմսկու հիանալի խոսքերի իրականացմանը**):

«Արհմիությունները պետք է բանվորի հետ լինեն նրա ամբողջ կյանքում, որորոցից մինչև գերեզման, —սպասարկեն նրա բոլոր կարիքներն ու պահանջները, զանգաղ, բայց անչեղորեն տարեց—տարի նրանց մեկ ստաիճան էլ բարձրացնեն դեպի կոմմունիզմ»:

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչպես էլին կառավարվում արհմիությունները Ռուսաստանում ցարիզմի շրջանում:

2. Վորո՞նք էլին արհմիությունների խնդիրները ցարիզմի շրջանում և ինչպես էլին իրագործվում այդ խնդիրները:

*) Արհմիությունների համառուսական 5-րդ համագումարում (1922 թ. սեպտեմբեր) 775 պատգամավորից մենչևիկ էլին ընդամենը 2, 6-րդ համագումարում (1924 թ. նոյեմբեր) — վոչ մեկը:

**) Վոր ասել է արհմիությունների Համառուսական 5-րդ համագումարում:

3. Ի՞նչ է «լիկվիդատորությունը» և ինչո՞ւմն է նրա հակահեղափոխական ելությունը :

4. Ի՞նչպես ելին կռվում բայլչեիկները լիկվիդատորության դեմ :

5. Ի՞նչպես ելին գնահատում բայլչեիկներն ու մենչեիկները կուսակցության դերը արհմիությունների վերաբերմամբ :

6. Ի՞նչն էր պատճառը 1911—1914 թ. թ. արդյունաբերական վերելքի և ի՞նչպես անդրադարձավ նա բանվորական ու արհեստագյական շարժման վրա :

7. Ի՞նչպես անդրադարձավ փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանի արհշարժման վրա :

8. Ի՞նչպես ելին գնահատում փետրվարյան հեղափոխությունից հետո արհշարժման խնդիրները մենչեիկները և ի՞նչպես ելին գնահատում այն բայլչեիկները :

9. Ի՞նչպես ծագեցին Ռուսաստանում գործարկումները և ինչո՞ւ գործարկումներն ամբողջովին բայլչեիկների ազդեցության տակ ելին :

10. Ի՞նչ է հանուն բանվորական վերահսկողության մզվաղ կրուիք և վո՞րն է նրա նշանակությունը :

11. Ի՞նչպես եր տեղի ունենում հակահեղափոխական ուժերի դորահավաքը Ռուսաստանում 1917 թ. հուլիսյան որերից հետո :

12. Ի՞նչ դեր խաղացին արհմիությունները և գործարկումները Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման մեջ և հենց Հոկտեմբերի ժամանակ :

13. Ի՞նչպես փոխվեցին Ռուսաստանի արհմիությունների խնդիրները Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո :

14. Ի՞նչ եր միությունների տարիֆային քաղաքականությունը ռազմական կոմունիզմի պայմաններում :

15. Ինչո՞ւ արհմիություններին հաջողվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո լիովին իրականացնել բոլոր արտադրության նշանի շինարարությունը :

16. Ի՞նչպես փոխվեցին արհմիությունների և գործարկումների փոխհարաբերությունները Հոկտեմբերից հետո :

17. Ի՞նչ դեր ստանձնեցին միջմիութենական միացումները (մասնավորապես—ՀԱՄԿ) :

18. Ի՞նչպես եր խորհրդային Ռուսաստանի ժողովրդական տնտեսության դրությունը 1921 թ. :

19. Ինչո՞ւ անհրաժեշտութիւն ծագեց տնտեսական նոր քաղաքականութիւն անցնելու :

20. Ինչո՞ւ մե ե տնտեսական նոր քաղաքականութեան ելաւթիւնը :

21. Ի՞նչն եր պատճառը 1920 թ. արհմիութիւնների մասին ծագած դիտկումայի :

22. Վորո՞նք եյին դիտկումայի յերեք հիմնական հոսանքները :

23. Արդո՞ք փոխվեց արհմիութիւնների վերջնական նպատակը նոր տնտեսական քաղաքականութեան պայմաններում :

24. Ի՞նչպես փոխվեցին արհմիութիւնների ժողովա խնդիրները ՆԵՊ-ի պայմաններում :

25. Ինչո՞ւ արհմիութիւններն աշխատավարձը նորմայի յենթարկելուց անցան նրա կանոնադրմանը հաւաքական պայմանագրերի հիման վրա :

26. Ի՞նչպես եյին վերաբերվում Ռուսաստանի արհմիութիւնները գործադուլին բուրժուական պետութեան մեջ եւ ինչպես են վերաբերվում նրանք գործադուլին պրոլետարական դիկտատուրայի պետութեան մեջ :

27. Ի՞նչպես փոխվեցին կազմակերպչական աշխատանքը եւ արհմիութիւնների կառուցվածքը ՆԵՊ-ի պայմաններում :



28. Ինչո՞ւ ՆԵՊ-ի պայմաններում միութիւնների կուլտաշխատանքը հատուկ նշանակութիւն եւ ստացել :

29. Արդո՞ք ՆԵՊ-ի պայմաններում փոխվել են արհմիութիւնների եւ կոմունիստական կուսակցութեան փոխհարաբերութիւնները :

30. Ի՞նչ հակառութիւններ կան ՆԵՊ-ի պայմաններում արհմիութիւնների զանազան խնդիրների մեջ : Ի՞նչպես են վճռվում արդ հակառութիւնները :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Д. АНТОШКИН.—Профессиональное движение в России. Изд. 3-е ВЦСПС, 1925 год. Կա հայերեն թարգմանությունը հրատարակություն ՀԱՄԽ-ի
- М. ТОМСКИЙ.—Очерки профдвижения в России. Изд. ВЦСПС.
- М. ТОМСКИЙ.—Профсоюзы в новых условиях. Изд. ВЦСПС.
- АЙНЗАФТ.—Профдвижение в 1905—1906 г.г. Изд. МГСПС.
- ПАНКРАТОВА.—Фабзавкомы в борьбе за социалистическую фабрику. Изд. „Красная Новь“.
- Я. ФИН.—Фабзавкомы в России. Изд. ВЦСПС.
- А. ЛОЗОВСКИЙ.—Профсоюзы в Советской России. Изд. ВЦСПС.
- А. ЛОЗОВСКИЙ.—Верен ли путь. Изд. „Московский Рабочий“.
- ЛЕНИН.—Статьи и речи (о профес. движ.) Изд. ВЦСПС, 1924 г.



20.	Վիշնևվեցկի — «Աշխատանքի հաջմանդամների աղա- հովադրումը»	20
21.	«Կանոնադրության դործարկումներին և տեղկումներին կից կուլտ-հանձնաժողովներին» . . .	5
22.	«Որինակելի կանոնադրության բանակումբի, կարմիր անկյան և Ֆիդ-կուլտի խմբակի» . .	25
23.	Սեմյուշկին — «Ակումբային աշխատանքի խնդիրնե- րը»	30
24.	Լ յ ա շ կ ու — «Գողերը»	5
25.	» «Առաջին կարմիր դրոշը»	10
26.	Սպերանսկի — «Տուրերկուլյուրը»	10
27.	«Յեկիր պայքարի, ստրուկ զաղուծի», (Ինսցենիր.) . .	10
28.	«Փոխողնության դանձարկղները կազմակերպման կար- գը»	10
29.	Յ ա . Յ ի ն . — «Ռուսաստանի արհշարժման 20 տա- րին»	50
30.	«Պրոֆմիությունը և նրա անդամները», (տաղադրվում է)	
31.	Ռոզենբերգ — «Ինչու և ինչպես պետք է ուսուս- նասիրել արհշարժումը»	20
32.	» «Բանվորական առաջին միավորումները կապիտալիզմի արշալույսին» . . .	20
33.	» «Ինչպես առաջացան և ինչպես էլին աշխատում առաջին արհմիությունները»	70
34.	» «Արհեստակց. շարժումը մինչև 1914 թ.»	30
35.	» «Արհեստաիրացական շարժումը համաշ- խարհային պատերազմից հետո».	30
36.	» «Արհեստակցական շարժումն Ռուսաստա- նում (1905—25 թ.)».	80
37.	» «Ինչ և արհեստակցական արտադրական միու- թյունը: Արհմիությունը և կուսակցությունը»	
38.	» «Ամստերդամ և Մոսկվա».	
39.	» «Ինչ և պրոֆմիության կանոնադրությունը»	
40.	» «Ինչ և հավաքական պայքանադիրը».	
41.	» «Ինչ և տալիս բանվ. աշխատանքի օրենսդիրքը»	
42.	» «Ինչ և սոցիալական ապահովագրությունը».	
43.	» «Աշխատանքները բանակումբում».	
44.	» Պրոֆաշխատանքը գյուղում:	

ՄԵԾԱԲԱՆԱԿ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ 267,2

ՀՀ Ազգային գրադարան



NL0945047

g 5

-100-

1926 p.

ԳԻՆՆ Ե 65 ԿՈՊ.

692

887